ԷՋՄԻԱԾՆ

1977

2

ԱԶԻՀ 146



ԼԴ
ՏԱՐԻ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Յուն իս

1977



ԼՍԵԿ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՏՈՒՆՊԱՄԵՆՏԻ Գ. ԱԳԵԱՆ
ՍՍԱԴԵՄԻԱՅԻ

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



Խմբագրական

ՀՈՒՍԱԴՐՈՂ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ

1977 թվականի մայիսի 22-29 օրերին Անթիլիասում, Մեծի Տանն Կիլիկիայի Կաթողիկոսական Աթոռում, տեղի ունեցան աթոռակից-կաթողիկոսի ընտրության, ձեռնադրության և օծման հանդիսությունները:

Այս առիթով Տ. Տ. Խորեն Ա կաթողիկոսը, Ամենայն Հայոց Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսին ուղղյալ Իր 23 հունվար թվակիր պաշտոնական գրությամբ, հրավեր էր ուղարկում Մայր Աթոռ, **«որ Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւնը մասնակցի սոյն ընտրութեան մէկ հոգևորական և մէկ աշխարհական պատգամաւորներով՝ համաձայն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կանոնադրութեան 12-րդ յօդուածի տրամադրութեան»:**

Ծանոթ են բոլորին 1956 թվականի փետրվարից սկսած սփյուռքում մեր ազգային-եկեղեցական երկփեղկումի և տագնապի պատմությունն ու նրա շարժառիթները:

Մայր Աթոռը այդ տագնապի սյատճառով չմասնակցեց 1956 թվականի փետրվարին լուսահոգի Տ. Տ. Զարեհ Ա կաթողիկոսի և 1963 թվականի մայիսին՝ Տ. Տ. Խորեն Ա Մեծի Տանն Կիլիկիայի կաթողիկոսական ընտրություններին:

Բոլորիս ծանոթ են դարձյալ, թե 1956-1977 թվականների ընթացքում եկեղեցական այդ տագնապի և ներքին միասնականության խախտման հետևանքով ինչպիսի՜ խոր ցնցումներ և վերքեր ստացավ մեր եկեղեցին սփյուռքում:

Անցնող քսան տարիների ընթացքում, սակայն, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը թե՛ բանիվ և թե՛ գործով, միշտ լավատեսությամբ, որքա՜ն ջանքեր թափեց այդ տագնապի խաղաղ ու դրական լուծման համար և քանի՜-քանի՜ անգամներ սիրո և միության հայրական կոչեր, հորդորներ, հաշտության խաղաղասիրական առաջարկներ արեց:

1963 թվականի հոկտեմբերի 26-ին Երուսաղեմի ողջագուրումով հայ եկեղեցու ներքին տագնապը փարատված տեսնելու Մայր Աթոռի և Հայոց Հայրապետի ուրախությունը նույնպես երկար չտևեց:

Այդ բոլորն այսօր անցյալի տխուր հուշ և պատմություն է:

Այդ տագնապը պետք չէ որ շարունակվի: Ստեղծվել են, բարեբախտաբար, հուսադրող նոր հեռանկարներ տագնապի լուծման ճանապարհի վրա:

Ժամանակն է, որ վերականգնվի հայ եկեղեցու միությունն ու ներքին խաղաղությունը. «Արեգակն ի վերայ բարկութեան ձերոյ մի մտցէ» (Տես. Դ 26): «Ահա օր փրկութեան» (Բ Կորնթ. Զ 2):

Այս եկեղեցաշեն և հանրօգուտ մտածումների լույսի տակ Ամենայն Հայոց կաթողիկոսը 1977 թվականի ապրիլի 26-ին պատասխանում էր Տ. Տ. Խորեն Ա կաթողիկոսի հունվար 23 թվակիր հրավեր նամակին.

«Մենք սրտանց կ'ողջունենք Ձեր հրաւէրը, անոր մէջ տեսնելով վերյառնումը այն բարի ոգիին որ սկիզբ առած էր մեր միջև Երուսաղէմ, մեր ողջագուրումի օրերուն 1968-ի հոկտեմբերին:

Մենք կը հաւատանք նաև թէ Ձերդ Սրբութիւնը և ձեր ազգային-եկեղեցական մարմինները խորհած էք արդէն դիմել այն միջոցառումներուն, որոնք օրինաւոր հնարաւորութիւնը պէտք է ստեղծեն ճանապարհը բանալու մեր ներկայացուցիչներու աթոռակից-կաթողիկոսի ընտրութեան մասնակցութեան, իբրև հրապարակային արտայայտութիւնը մեր երկու Աթոռներու միջև քսան տարիներէ ի վեր եղած անհասկացողութեանց վերացման:

Կը խորհինք թէ, այս պահուն Մեզ և Ձեզ մտահոգողը և հետևաբար՝ կարևորը, հրամայականը ոչ թէ պարզապէս ձևական մասնակցութիւնն է Մայր Աթոռիս ներկայացուցիչներու Ձեր Աթոռի Ազգային Ընդհանուր Ժողովին, այլ կարևորն ու հրամայականն է՝ վերացնել այն առարկայական պատճառները, որոնց հետևանքը հանդիսացաւ այն տագնապալի վիճակը, որ ահա կը գոյատևէ քսան և աւելի տարիներէ ի վեր ի ցաւ մեր բոլորիս սիրտերուն և ի վնաս մեր սուրբ եկեղեցիին ու մեր ժողովուրդի հիմնական ու տևական շահերուն»:

Հայրապետական սույն նամակում նշվում էր նաև, թե **«Մայր Աթոռը շատոնց ի վեր կը սպասէ համբերութեամբ և լաւատեսութեամբ վերացած տեսնել սփիւռքի մեր եկեղեցական տագնապին ծնունդ տուող պատճառները»**, մեր եկեղեցական իրավասությանց դարավոր կանոնների և օրինականության պահպանման լույսի տակ, տագնապ, որը ահա քսան տարիներից ի վեր ճնշում է հայ հոգիների վրա:

Իր վերոհիշյալ նամակում Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետը Ամենայն Հայոց տագնապը գործնականորեն և վերջնականապես վերացած տեսնելու լավատեսությամբ Տ. Տ. Խորեն Ա կաթողիկոսի ուշադրությանն էր հանձնում Մայր Աթոռի մասնակցության հետևյալ պարագան.

«Հետևաբար, կը խորհինք թէ, Մայր Աթոռիս ներկայացուցիչներու մասնակցութիւնը հնարաւոր դարձնելու համար, անհրաժեշտ է որ Աթոռիդ Ազգային Ընդհանուր Ժողովը նախքան ընտրութեան անցնիլը, իր իշխանութեամբ չեղեալ հռչակէ 32-րդ և 33-րդ յօդուածները ու նաև տրամադրութիւն յայտնէ պատշաճ բանաձևումով մը, որ աթոռակից-կաթողիկոսի ընտրութենէն և օծումէն յետոյ, շուրջ մէկ տարուան ընթացքին՝ մեր Աթոռներու միջև բանակցութիւններու և փոխադարձ հասկացողութեանց հանապարհով, օրինաւոր և բարոյ լուծում գտնեն նաև միւս հարցերը, որոնք Ձեզ ուղարկած էինք 1971-ի նոյեմբերին, Ձեր պաշտօնական ներկայացուցիչներու ձեռամբ, և զոր կրկին Ձեր ուշադրութեան յանձնած էինք Մեր 14 փետրուար 1972 նամակով, հարցեր, որոնք կը կարօտին օրինական կարգաւորման, համաձայն մեր եկեղեցւոյ կարգ ու կանոնին:

Յիշեցման կարգով ներկայ Ձեզի վերստին կը ներկայացնենք այդ հինգ հարցերը, բանաձևուած Մեր կողմէ 12 նոյեմբեր 1971-ին»:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի սույն պաշտոնական գրու-

թյունն անձամբ Անթիլիաս տարավ Գերագույն հոգևոր խորհրդի անդամ, Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը, որ այդ օրերին ուխտավորաբար գտնվում էր Մայր Աթոռում, Երուսաղեմի հայոց ամենապատիվ տ. Եղիշե սրբազան պատրիարքի հետ:

Ապրիլի 27-ին, չորեքշաբթի օրը, Անթիլիաս էր ժամանում տ. Սերովբե արքեպիսկոպոսը և անձամբ Հայոց Հայրապետի վերոհիշյալ նամակը հանձնում Տ. Տ. Խորեն Ա կաթողիկոսին:

Մայիս 2 թվակիր նամակով Տ. Տ. Խորեն Ա կաթողիկոսը պատասխանում էր Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետի ապրիլ 26 թվակիր նամակին՝ հայտնելով պաշտոնապես, թե **«Անցնող Ազգային Ընդհանուր Ժողովին մէջ կազմուած էր յանձնախումբ մը՝ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան կանոնները վերամշակելու համար: Նոյն ժողովին մէջ, ինչպէս նաև յետագային, ազգայիններու տրամադրութիւնները ամէն պատրաստակամութիւն ցոյց կուտային 32-րդ և 33-րդ յօդուածները կանոնագրէն դուրս ձգելու:**

Այս հիման վրայ, առնելով ս. Աթոռիս եպիսկոպոսներու, ազգային մարմիններու և պատասխանատու ազգայիններու կարծիքները, կրնանք հաւաստիացնել Ձեզ, թէ յառաջիկայ գումարուելիք Ազգային Ընդհանուր Ժողովը վերոյիշեալ երկու յօդուածները պիտի վերցնէ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան կանոնադրութենէն»:

Տ. Տ. Խորեն կաթողիկոսի 2 մայիս թվակիր սույն պատասխան նամակը անձամբ Մայր Աթոռ էր բերում տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը, մայիսի 7-ին:

Երկու Աթոռների միջև վերջերս փոխանակված պաշտոնական գրությունների լույսի տակ և տ. Սերովբե արքեպիսկոպոսի՝ Գերագույն հոգևոր խորհրդի 9 մայիս նիստում, դեպի Անթիլիաս իր կատարած առաքելության մասին տված զեկուցագրի հիման վրա, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի նախագահությամբ գումարված Գերագույն հոգևոր խորհուրդը իր լիագումար նիստում, որին հրավիրվել էր նաև տ. Եղիշե սրբազան պատրիարք հայրը, որոշում է ընդունում մասնակցել Անթիլիասում մայիսի 22-ին աթոռակից-կաթողիկոսի ընտրության և մայիսի 29-ին՝ օծման հանդիսություններին:

Գերագույն հոգևոր խորհրդի սույն նիստում Մայր Աթոռի երկու ներկայացուցիչներ են նշանակվում՝ տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը և Անգլիայի հայոց հայրապետական պատվիրակ տ. Ներսես եպս. Պոզապալյանը:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը Անթիլիասի հանդիսություններին Մայր Աթոռից երկու պատգամավորներ ուղարկելու մասին 10 մայիս պաշտոնական Իր գրությամբ տեղեկացնում էր Տ. Տ. Խորեն Ա կաթողիկոսին.

«Մեր սուրբ եկեղեցին՝ ներքին միութեան, օրինականութեան և խաղաղութեան նաւահանգիստը տանող ճանապարհին վրայ, Մենք կը կամենանք հետևողականօրէն մնալ լաւատես, համոզուած ըլլալով թէ Ձեր վերոյիշեալ նամակին մէջ յստակօրէն արտայայտուած հաւաստիացումները կարճ ժամանակի մէջ կեանքի պիտի կոչուին, յապաւումով Ձեր կանոնագրի 32-րդ և 33-րդ յօդուածներուն և օրինական կարգաւորումով ծանօթ հինգ հարցերուն, բանակցութեանց եղանակաւ, հարցեր, որոնց ուրախ ենք որ կ՚ակնարկէ նաև Ձերդ Սրբութիւնը Իր նոյն նամակին մէջ:

Ձեր հաւատիացումները իրօք մխիթարեցին Մեր սիրտը, որոնց կենսագործումով կը հաւատանք թէ նոր էջ մը պիտի բացուի մեր Աթոռներու յարաբերութեանց պատմութեան մէջ:

Կը հաւատանք թէ՝ Մենք, Ձերդ Սրբութիւնը և նորընտիր Ձեր Աթոռակից Եղբայրը միասնաբար, սրբութեամբ և վճռականութեամբ պիտի պահպանենք յետ այսու կանոնը մեր եկեղեցւոյ նուիրապետական Աթոռներու պատմականօրէն նուիրագործուած իրաւասութեանց սահմաններու, համերաշխ գործակցութեան մթնոլորտի մէջ:

Հեռացնել 32-րդ և 33-րդ յօդուածները՝ կը նշանակէ հեռացնել խախտումը մեր Աթոռներու իրաւասութեանց սահմաններուն, կը նշանակէ հեռացնել բուն պատճառը տագնապին, որ քսան տարիներէ ի վեր կը պառակտէ ու կը տկարացնէ մեր եկեղեցւոյ մարմինը: Միայն հեռացումովը բուն պատճառին՝ կրնանք հեռացնել նաև հետևանքները:

Ահա թէ ինչու սրտանց կ՚ողջունենք Ձեր նամակի յուսադրիչ ոգին և շինարար հաւատիացումները և իրապէս կը հաւատանք որ այսօրուընէ սկսեալ և յետ այսու բազում առիթներով, միատեղ պիտի կարողանանք զգալ ու ապրիլ քաղցրութիւնը մեծ Սաղմոսերգուի տեսիլքին. «Զի՞ բարի, զի՞ վայելուչ, զի բնակեն եղբարք ի միասին... անդ պատրաստեաց Տէր զօրհնութիւն և զկեանսն յաւիտենից» (Սաղմոս ՃԼԲ 1, 3):

Մայիսի 22-ին Անթիլիասում Պատգամավորական Ժողովին և ապա մայիսի 29-ին՝ օծման և այլ հանդիսություններին Մայր Աթոռի պատգամավորների մասնակցությունը ջերմորեն և որդիական երախտագիտությամբ ընդունվեց ամենուրեք՝ որպես սրտագին ցանկության արտահայտություն անցյալի տխուր էջը փակելու և հույսով նայելու ապագային՝ «շուտափույթ կերպով վերացած տեսնելու տագնապը» և ողջունելու վերահաստատված, բաղձալի միությունը ստյուրքի մեր ազգային-եկեղեցական կյանքի մեջ:

Արդարև, Մայր Աթոռի մասնակցությունը Անթիլիասի հանդիսություններին, հույս ներշնչող նախաձեռնություն էր, հին վերքերը բուժելու, ինչպես նշում է նաև Բեյրութի օրաթերթերից մեկը. «Այսօր մոտիկ անցյալի վերքերը դարմանելու մղումով Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը իր մասնակցությունը կբերե Մեծի Տանն Կիլիկիո աթոռակից-կաթողիկոսի ընտրության» («Ազդակ», մայիսի 29):

Ստյուրքահայ մամուլը նույնպես գոհունակությամբ ողջունեց Անթիլիասի հանդիսություններին Մայր Աթոռի մասնակցությունը, որպես ուրախալի մի իրադարձություն, դրական մի ազդանշան, որը հուսադրող հեռանկարներ էր բացում ստյուրքի մեր եկեղեցու ծոցում ծանոթ տագնապի և երկփեղկման բարվոք և օրինական լուծման ճանապարհին:

Մայր Աթոռը հավատում է, որ իր այդ մասնակցությամբ մի նոր էջ է բացվելու ստյուրք-հայրենիք եկեղեցական հարաբերությունների մեջ:

Այո՛, Մայր Աթոռը ուրա՛խ սրտով, բա՛ց սրտով մասնակցեց և՛ Պատգամավորական Ժողովի ընտրական նիստին, և՛ հաջորդ օրերի հանդիսություններին:

Մայիսի 22-ին, կիրակի օրը, Անթիլիասի ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր տաճարում հատենի Պատգամավորական Ժողովի խոսք է առնում Տ. Տ. Խորեն Ա կաթողիկոսը և, խոսելով նաև Մայր Աթոռի ու Անթիլիասի հարաբերությունների բարվոքման մասին, ասում է.

«Մեր խոր բաղձանքն է որ մօտիկ ապագային, Հայաստանեայց եկեղեցւոյ առջև բացուի լուսահեղ ճանապարհ մը, որ երկու Աթոռները կա-

ռենան միասնաբար ծառայել հայ ազգին: Կոչ կ՚ուղղենք յարգամեծար պատգամաւորներուդ եւ յառաջիկայինգումարելի Ազգ. Ընդհանուր Ժողովի անդամներուն որ այս ճամբուն վրայ խոչընդոտ հանդիսացող դժուարութիւնները—ի մասնաւորի 32-րդ եւ 33-րդ յօդուածներու հարց—վերացնեն եւ ամբողջական համերաշխութեան ճամբան հարթեն»:

Այնուհետեւ Պատգամաւորական Ժողովը միաձայնությամբ արձանագրում է Դիվանի կողմից ժողովին ներկայացված հետևյալ առաջարկը՝ ի մասին երկու Աթոռների հարաբերությունների բարվոքման.

«Նկատի ունենալով նաև յատենի Պատգամաւորական Ժողովին Վեհափառ Հայրապետին կողմէ արտայայտուած բաղձանքը, եւ հիմնուելով վերջին Ազգային Ընդհանուր Ժողովին արդէն իսկ արտայայտութիւն գտած տրամադրութեանց վրայ, ազգային պատգամաւորական ժողովը իր կարգին ջերմապէս կը թելադրէ իրաւասու ժողովներուն և մարմիններուն, և մասնաւորապէս յառաջիկայ Ազգային Ընդհանուր Ժողովին, նպաստել Հայաստանեայց եկեղեցւոյ երկու Աթոռներուն միջև յամեցող տարակարծութեանց պատճառներու վերացման, ի մասնաւորի Կիլիկիոյ Կաթողիկոսութեան 32-րդ և 33-րդ յօդուածներու յարուցած դժուարութեանց հարթումով»:

Մայիսի 29-ին, կիրակի օրը, Հոգեգալստյան տոնին, Անթիլիասի ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր տաճարում կատարվում է նորընտիր աթոռակից-կաթողիկոս Գարեգին արքեպիսկոպոսի օծման հանդիսությունը, որին մասնակցում են նաև Մայր Աթոռի երկու պատգամավորները:

Իր օծումից հետո Տ. Տ. Գարեգին Բ աթոռակից-կաթողիկոսը Իր անդրանիկ քարոզում նշում էր Իր ընտրության և օծման առթիվ հայ եկեղեցու ծոցում ստեղծված **«սիրոյ, միասնականութեան բարեբաստիկ և յուսադրիչ երևոյթը... յոյսի և ուրախութեան սրտապնդիչ զգացումներով կը զեղու սիրտը երբ կը տեսնեմ Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան մասնակցութիւնը այս կաթողիկոսական ընտրութեան և օծման: Գեղեցիկ, պայծառ օր մըն է այս մեր եկեղեցւոյ պատմութեան մէջ»:**

Բոլորի սրտերում, ամենքի հոգիների մեջ և շրթների վրա արձագանքում էին միության, համերաշխության և սիրո խոսքերը: **Բոլորի ցանկությունն էր, որ այս առթիվ արտասանված գեղեցիկ խոսքերը կյանքի վերածվեն, դառնան կենդանի գործ:**

Իրոք հուզիչ և հուսադրիչ էին Անթիլիասի հանդիսությունների առթիվ Ամենայն Հայոց Հայրապետի և Կիլիկյան Աթոռի կաթողիկոսի միջև փոխանակված գրությունների արտահայտությունները ու հավաստիացումները: Հուզիչ և հուսադրիչ եղան նաև նույն առթիվ Անթիլիասում արտասանված ճառերն ու հայ մամուլի հոդվածները: Բայց այդ բոլորը կարող են օճառի պղպջակի նման ցնդել, եթե, ինչպես Վեհափառ Հայրապետն է ասում, չհեռացվեն տագնապի բուն պատճառները, քանի որ **«միայն հեռացումովը բուն պատճառին կրնանք հեռացնել նաև հետևանքները»:** Իսկ տագնապի բուն պատճառները պարզ է, որ հանդիսացան 32-րդ և 33-րդ հոդվածները և նրանց գործադրումը Միացյալ Նահանգների, Պարսկաստանի և Հունաստանի էջմիածնապատկան թեմերից ներս:

Արդարև, մեր եկեղեցու և Մայր Աթոռի ծանր վիշտն էր արտահայտում տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը Բեյրութում, պաշտոնական մի տեսակցության առիթով, երբ, խոսելով 32-րդ և 33-րդ հոդվածների մասին, շեշտում էր.

«Մեզ համար այդ հոդվածներուն վերացումը մեծ նշանակություն ունի: Կիլիկիո Աթոռի պատմության ընթացքին, հաճախ թյուրիմացություններ և տարակարծություններ ծագած են զույգ Աթոռներուն միջև: Բայց ոչ մեկ ատեն անոնք օրենքի ուժ ստացած են, կանոնագրության մեջ չեն անցած: Վերջին անգամ այդ տարակարծությունները կանոնի վերածվեցան, նպատակ ունենալով ս. Էջմիածինը տկարացնելու և Կիլիկիո Աթոռը դարձնելու արտաքսումի միակ կեդրոնը, ինչ որ կհակասե Հայց. եկեղեցվո սկզբունքներուն և կանոններուն» («Ազդակ», 1 հունիսի):

Մենք համոզված ենք, սակայն, որ մեր եկեղեցու և ժողովրդի կենսական ու մնայուն շահերը պիտի թելադրեն բոլորին անխտիր՝ վերականգնումը օրինականության, միության և շինարար գործակցության մեր նվիրապետական պատմական Աթոռների միջև, Աթոռներ, որոնք ամուր կանգնած պետք է մնան հայրենի հողի վրա խարսխված Միածնի իջման վեմի վրա

Մայիսի 29-ին, երեկոյան, պաշտոնական ընդունելության ժամանակ, Տ Տ. Խորեն Ա կաթողիկոսը «Իր անհուն ուրախությունն ու գոհունակությունն» էր հայտնում հրապարակով նաև Մայր Աթոռի ներկայացուցիչների մասնակցության համար և ասում.

«...Դուք, գերաշնորհ և սիրելի ներկայացուցիչներ ս. Էջմիածնի, փոխանցեցէք Ամենայն Հայոց Հայրապետին՝ Մեր Վեհափառ Եղբորը՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգէն Ա կաթողիկոսին Մեր խոր շնորհակալությունը, Մեր եղբայրական ջերմ սէրն ու սրտագին բարեմաղթությունները Իր առողջության և արեշատության: Թող Նորին Սրբությունը Հայց. եկեղեցւոյ շքեղ ծաղկումը միության ու միասնականության մէջ տեսնելու բարեբախտությունը ունենայ»:

Անթիլիասի հանդիսություններից հետո Մայր Աթոռ ժամանեց տ. Ներսես եպս. Պոզապալյանը, որը անձամբ բերեց և Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին հանձնեց Տ. Տ. Գարեգին Բ աթոռակից-կաթողիկոսի 30 մայիս թվակիր պաշտոնական գրությունը, որի մեջ ասված էր.

«Ինչպէս Խորէն Ա. Վեհափառ Հայրապետը Իր 2 մայիս, 1977 թուակիր և 159/77 թուահամար նամակով կը յայտնէ, յառաջիկային խորհրդակցութեանց, բանակցութեանց ճամբով, փոխադարձ սիրոյ, եղբայրութեան և յարգանքի մթնոլորտին մէջ, մեր եկեղեցիի գաղափարէն և սկզբունքէն առաջնորդուած, Մենք ևս կը յուսանք և Մեր գերագոյն կարելին ի գործ պիտի դնենք որ կարելի փութով վերջ գտնեն տարակարծութիւնները և գործնական, սահուն և օգտաւէտ արտայայտութեան ընթացքի մէջ մտնէ Հայց. եկեղեցւոյ միութիւնը՝ ի փառս Աստուծոյ, և ի բարին հայ ժողովուրդին»:

Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսը Իր մայիս 29 թվակիր հետևյալ հեռագրով շնորհավորում էր Տ. Տ. Գարեգին աթոռակից-կաթողիկոսի ընտրությունը.

«Սրտանց շնորհավորում ենք Գարեգին արքեպիսկոպոսի իբրև աթոռակից՝ Ձեզ Կիլիկյան Աթոռի: Հայցում ենք Աստուծո օրհնությունը և օգնականությունը Ձերդ Սրբության և Գարեգին աթոռակից-կաթողիկոսի առաքելության՝ ի խնդիր մեր Մայր եկեղեցու միության և համայն հայ հավատացյալ մեր ժողովրդի ազգային միասնության ամրապնդման: Սուրբ Էջմիածնից և վերածնված մայր հայրենիքից եղբայրական սիրո ողջույն ամենաբարի մաղթանքներով»:

Մայր Աթոռը գոհ է, որ իր երկու ներկայացուցիչներով մասնակցեց

Տանն Կիլիկիայի աթոռակից-կաթողիկոսի ընտրության և օծման հանդիսություններին:

Մայր Աթոռը նույնպես գոհունակությամբ արձանագրեց սույդ առթիվ գրված հավաստիացումները մեր եկեղեցական տագնապալի կացությունների վերացման առնչությամբ և ի մասնավորի պաշտոնական խոստումները՝ ա՛յն մասին, որ շուտով կջնջվեն 32-րդ և 33-րդ հոդվածները Կիլիկյան Աթոռի կանոնագրությունից:

Մայր Աթոռը և մեր բովանդակ ժողովուրդը լավատեսությամբ սպասում են, **որ խոսքերը կենդանի և շինարար գործի վերածվեն, առաջին հերթին վերացումովը 32-րդ և 33-րդ հոդվածների, որով միայն ճանապարհ կարող է բացվել հետագա բանակցությունների, գործնական միջոցառումներով բուժելու համար քսան տարիների տագնապի բացած վերքերը հայ եկեղեցու մարմնի վրա:**

Այս մտածումներով «Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ջերմորեն շնորհավորում է Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Գարեգին Բ աթոռակից-կաթողիկոսի ընտրությունը՝ մաղթելով Նրան քաջառողջություն, հայրապետական արդյունավետ գործունեություն՝ իրականացնելու համար մեր եկեղեցական ու ազգային միասնականության վերաբերյալ բոլոր այն բարի մտածումներն ու սպասելիքները, որոնք նույնպես Իրենն են որպես բարձրաստիճան հոգևորականի և հայ մարդու:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Հիշեցման կարգով մեր ընթերցողների ուշադրությանն ենք հանձնում, թե Կիլիկյան Աթոռի կանոնադրության 32-րդ հոդվածով կիլիկյան թեմ են հռչակվում Մայր Աթոռ ս. Էջմիածնի իրավասության ներքո գտնվող Ամերիկայի Միացյալ Նահանգների, Պարսկաստանի և Հունաստանի թեմերը: Իսկ 33-րդ հոդվածը նախատեսնում է, որ ապագայում նաև այլ թեմեր կարող են միացվել Անթիլիասի Կիլիկյան Աթոռին:



ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԱԹՈՌԻ ԱԹՈՌԱԿԻՑ-ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

Սույն թվականի մայիսի 22-ին, կիրակի օրը, Անթիլիասի կաթողիկոսարանի հանդիսությանց դահլիճում, Տ. Տ. Խորեն Ա կաթողիկոսի նախագահության ներքո, գումարվելու է Կիլիկյան Աթոռի պատգամավորական ժողով, աթոռակից-կաթողիկոսի ընտրության համար:

Կիլիկյան Աթոռի կանոնադրության 12-րդ հոդվածի տրամադրության համաձայն Տ. Տ. Խորեն Ա կաթողիկոսը Ամենայն Հայոց Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսին ուղղյալ Իր 23 հունվար թվակիր պաշտոնական գրությամբ հրավեր էր ուղարկել Մայր Աթոռին՝ սույն ընտրությանը մասնակցելու երկու պատգամավորներով:

Ստորև հրատարակում ենք այս առիթով Մայր Աթոռի և Կիլիկյան Աթոռի միջև փոխանակված պաշտոնական գրությունները:

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ
ԱՆԹԻԼԻԱՍ—ԼԻԲԱՆԱՆ

Թիւ 26/77

23 յունուար 1977

ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹԻՒՆ Տ. Տ. ՎԱՉԳԷՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Վեհափառ Եղբայր ի Քրիստոս,

Ազգ. Կեդր. Վարչութեան Խառն ժողովը, իր 29 դեկտեմբեր 1976, չորեքշաբթի օրուան բացառիկ նիստին մէջ, ընդառաջելով Մեր խնդրանքին, միաձայնութեամբ որոշեց ձեռնարկել աթոռակից-կաթողիկոսի մը ընտրութեան:

Այս առնչութեամբ ցարդ ստացած ըլլալու էք Մեր 20 յունուար 1977 թուակիր կոնդակը եւ իրազեկ դարձած անոր բովանդակութեան:

Աթոռակից-կաթողիկոսի ընտրութիւնը տեղի պիտի ունենայ յառաջիկայ 22 մայիս 1977, կիրակի, կ. վ. ժամը 3-ին, Մայր տաճարին մէջ. իսկ օծումը՝ յաջորդ կիրակի, 29 մայիս, Հոգեգալստեան տօնին:

Այսու հրաւիրագրով կը խնդրենք որ Ամենայն Հայոց Հայրապետութիւնը մասնակցի սոյն ընտրութեան մէկ հոգեւորական եւ մէկ աշխարհական պատգամաւորներով՝ համաձայն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կանոնագրութեան 12-րդ յօդուածի տրամադրութեան:

Քաջառողջ եւ երջանկալից երկար կեանք մաղթելով Ձերդ Վեհափառութեան,

Մնամ եղբայրական ջերմ սիրով եւ ողջագուրանօք

Աղօթակից

ԽՈՐԷՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԻՒՆ Տ. Տ. ԽՈՐԷՆ Ա
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

ՀՄԻ. 265

ԱՆԹԻԼԻԱՍ

Սիրեցեալ Եղբայր Մեր ի Քրիստոս,

Յուզումով կարդացինք Ձեր 23 յունուար 1977 թուակիր նամակը, որով կը յայտնէք թէ առողջական պատճառներով անհրաժեշտ կը նկատէք Ձեր կողքին ունենալ գործակից եղբայր մը իբրև աթոռակից-կաթողիկոս, և առ այդ հրաւէր կ՚ուղղէք Մեզի որ երկու ներկայացուցիչներ ուղարկենք Անթիլիաս, մասնակցելու մայիսի 22-ի ընտրութեան և մայիսի 29-ի օծման արբազան արարողութեանց:

Վստահ եղէք, շնորհազարդ Եղբայր, որ այս պահուն Մեր առաջին մտածումն ու իղձն է Ձեզի բերել Մեր ջերմագին մաղթանքը բաջառողջութեան, որպէսզի նաև յետ այսու շարունակէք մասնակից մնալ պատմական Աթոռիդ յետագայ շինարար գործունէութեան՝ հոգևոր, կրթական ու ազգային-մշակութային զարգացման ուղիներով:

Մենք սրտանց կ՚ողջունենք Ձեր հրաւէրը, անոր մէջ տեսնելով վերյառնումը այն բարի ոգիին որ սկիզբ առած էր մեր միջև Երուսաղէմ, մեր ողջագուրումի օրերուն 1963-ի հոկտեմբերին:

Մենք կը հաւատանք նաև թէ Ձերդ Սրբութիւնը և ձեր ազգային-եկեղեցական մարմինները խորհած էք արդէն դիմել այն միջոցառումներուն, որոնք օրինաւոր հնարաւորութիւնը պէտք է ստեղծեն ճանապարհը բանալու մեր ներկայացուցիչներու աթոռակից-կաթողիկոսի ընտրութեան մասնակցութեան, իբրև հրապարակային արտայայտութիւնը մեր երկու Աթոռներու միջև բաւական տարիներէ ի վեր եղած անհասկացողութեանց վերացման: Կը խորհինք թէ, այս պահուն Մեզ և Ձեզ մտահոգողը և հետևաբար՝ կարևորը, հրամայականը ոչ թէ պարզապէս ձևական մասնակցութիւնն է Մայր Աթոռիս ներկայացուցիչներու Ձեր Աթոռի Ազգային ընդհանուր ժողովին, այլ կարևորն ու հրամայականն է՝ վերացնել այն առարկայական պատճառները, որոնց հետևանքը հանդիսացաւ այն տագնապալի վիճակը, որ անա կը գոյատևէ քանի և աւելի տարիներէ ի վեր ի ցաւ մեր բոլորիս սրտերուն և ի վնաս մեր սուրբ եկեղեցիին ու մեր ժողովուրդի հիմնական ու տևական շահերուն:

Մայր Աթոռս շատոնց ի վեր համբերութեամբ և լաւատեսութեամբ կը սպասէ, վերացած տեսնել սփիւռքի մեր եկեղեցական տագնապին ծնունդ տուող պատճառները: Աթոռիդ կանոնադրութեան մէջ օրէնքի ուժ ստացած 32-րդ և 33-րդ յօդուածներու տրամադրութիւնները օրինակ, բոլորովին անհամատեղելի են մեր երկու Աթոռներու միջև համերաշխ գործակցութեան գաղափարին հետ:

Հետևաբար կը խորհինք թէ, Մայր Աթոռիս ներկայացուցիչներու մասնակցութիւնը հնարաւոր դարձնելու համար, անհրաժեշտ է որ Աթոռիդ Ազգային ընդհանուր ժողովը նախքան ընտրութեան անցնիլը, իր իշխանութեամբ չեղեալ հռչակէ 32-րդ և 33-րդ յօդուածները ու նաև տրամադրութիւն յայտնէ պատշաճ բանաձևումով մը, որ աթոռակից-կաթողիկոսի ընտրութենէն և օծումէն յետոյ, շուրջ մէկ տարուան ընթացքին՝ մեր Աթոռներու միջև բանակցութիւններու և փոխադարձ հասկացողութեանց ճանապարհով, օրինաւոր և բարւոք լուծում գտնեն նաև միւս հարցերը, որոնք Ձեզ ուղարկած էինք 1971-ի նոյեմբերին, Ձեր պաշտօնական ներկայացուցիչներու ձեռամբ, և զոր կրկին Ձեր ուշադրութեան յանձնած էինք Մեր 14 փետրուար 1972 նամակով, հարցեր, որոնք կը կարօտին օրինական կարգաւորման, համաձայն մեր եկեղեցւոյ կարգ ու կանոնին:

Յիշեցման կարգով ներփակ Ձեզի վերստին կը ներկայացնենք այդ հինգ հարցերը, բանաձևուած Մեր կողմէ 12 նոյեմբեր 1971-ին:

Մեր ցանկութիւնն է և ակնկալութիւնը, որ ամէն ինչ առաջուց յստակուի, որպէսզի յետոյ անախորժ կացութիւններ չստեղծուին ո՛չ Մեզի և ո՛չ ալ Ձեզի համար: Որով լաւատեսութեամբ պիտի սպասենք Ձեր շուտափոյթ պատասխանին, որ մայիսի 22-ին գումարուելիք Աթոռիդ Ազգային ընդհանուր ժողովի օրակարգին վրայ պիտի դրուին Մեր առաջարկած վերոյիշեալ հարցերը, կարենալ սիրով նշանակելու համար Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի ներկայացուցիչները, որոնք պիտի բերեն պատկառելի Ազգային ընդհանուր ժողովիդ Մեր օրհնութիւնը և ողջոյնը մեր հայրենի աշխարհին ու ժողովուրդին:

Ուրախ ենք որ Մեր այս գիրը սիրով յանձն առաւ Ձեզի բերել Արևմտեան Եւրոպայի հայրապետական պատուիրակ և Գերագոյն հոգևոր խորհուրդիս անդամ գերաշնորհ տ. Սերովբէ արքեպիսկոպոս Մանուկեան, որ այս առաքելութեամբ կը ժամանէ Պէյրութ սոյն թուի 27 ապրիլին օդային ճանապարհով:

Լիայոյս ենք, որ տ. Սերովբէ արքեպիսկոպոս իր վերադարձին Մայր Աթոռ ս. Էջմիածին, իր հետ կը բերէ Ձեր գրաւոր յստակ պատասխանը վերոյիշեալ Մեր առաջադրած բոլոր հարցերուն վերաբերեալ:

Մնամք սիրով և ամենաբարի մաղթանքներով աղօթակից Եղբայր՝

ՎԱԶԳԷՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

26 ապրիլ 1977 թ.
Ս. Էջմիածին

ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ
ԱՆԹԻԼԻԱՍ—ԼԻԲԱՆԱՆ

2 մայիս 1977

թիւ 159/77

ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹԻՒՆ Տ. Տ. ՎԱՉԳԷՆ Ա
ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Շնորհազարդ Եղբայր ի Քրիստոս,

Շնորհակալութեամբ ստացանք Ձեր Եղբայրութեան 26 ապրիլ 1977 թուակիր եւ 265/77 թուահամար պաշտօնագիրը, ձեռամբ Արեւմտեան Եւրոպայի հայրապետական պատուիրակ եւ Գերագոյն հոգեւոր խորհուրդի անդամ գերաշնորհ տ. Սերովբէ ս. արքեպիսկոպոս Մանուկեանի, ի մասին Մեծի Տանն Կիլիկիոյ աթոռակից-կաթողիկոսի ընտրութեան՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան մասնակցութեան:

Ա.— Նախ կ'ուզենք ճշտել, թէ 22 մայիս 1977-ին գումարուելիք ժողովը պատգամաւորական ժողովն է, որ բացի կաթողիկոս ընտրելէ որեւէ այլ իրաւասութիւն չունի, որով կարելի չէ կանոնագրային փոփոխութիւն առաջացնել այս ժողովին միջոցով:

Սակայն, անցնող Ազգ. Ընդ. ժողովին մէջ կազմուած էր յանձնախումբ մը՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կանոնագիրը վերամշակելու համար: Նոյն ժողովին մէջ, ինչպէս նաեւ յետագային, ազգայիններու տրամադրութիւնները ամէն պատրաստակամութիւն ցոյց կու տային 32-րդ և 33-րդ յօդուածները կանոնագրէն դուրս ձգելու:

Այս հիման վրայ, առնելով ս. Աթոռիս եպիսկոպոսներու, ազգ. մարմիններու եւ պատասխանատու ազգայիններու կարծիքները, կրնանք հաւաստիացնել Ձեզ, թէ յառաջիկայի գումարուելիք Ազգ. Ընդ. ժողովը վերոյիշեալ երկու յօդուածները պիտի վերցնէ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կանոնագրութենէն:

Բ.— Ինչ կը վերաբերի կաթողիկոսական երկու ս. Աթոռներու միջեւ գոյութիւն ունեցող տարակարծութիւնները տեսակցութիւններու եւ բանակցութիւններու ճամբով եւ շուտափոյթ կերպով վերացնելու խնդրին, Մենք միշտ պատրաստ եղած ենք բանակցութեանց ճամբով հասկացողութեան մը հասնելու տեսակէտին:

Կը հաստատենք նաեւ, թէ ըլլայ Ազգ. Ընդ. ժողովի անդամները, ըլլայ ազգային պատասխանատուութիւններ ունեցող մարմիններն ու ազգայիններ նոյնպէս տրամադիր են բանակցութեանց ճամբով հասկացողութեան մը գալու, որպէսզի ընդմիշտ անհետանան երկու Աթոռներու միջեւ գոյութիւն ունեցող բոլոր տարակարծութիւնները: Կը հաւատանք թէ փոխադարձ հասկացողութեան ոգիով կարելի պիտի ըլլայ Ձեր կողմէ արծարծուած հարցերն ու այլ հարցեր իրենց դրական լուծումին հասցնել ցանկալի արագութեամբ եւ յանգիլ ամբողջական համաձայնութեան՝ ի փառս Հայց. առաք. ս. եկեղեցւոյ եւ ի շահ ազգիս հայոց:

Ի խորոց սրտի Ձեզի կը մաղթենք բոլոր տարակարծութիւնները ընդմիշտ բարձուած տեսնելու անհաւոն ուրախութիւնն ու երջանկութիւնը, եւ զեղուն սիրով կ'ողջունենք Ձեզ եւ Մայր Աթոռի միաբանութիւնը, ինչպէս նաեւ հայրենի երկրի բովանդակ հայութիւնը:

Մնամ եղբայրական սիրոյ ողջագուրանօք,

Աղօթակից

ԽՈՐԷՆ Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

ՀՄՐ. 297

10 մայիս 1977 թ.

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹԻՆ Տ. Տ. ԽՈՐԷՆ Ա
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ

ԱՆԹԻԼԻԱՍ

Սիրեցեալ Եղբայր Մեր ի Քրիստոս,

Գոհունակութեամբ, Մենք և Գերագոյն հոգևոր խորհուրդս, ծանօթացանք Ձերդ Սրբութեան 2 մայիս 1977 թուակիր պաշտօնական նամակի և Արևմտեան Եւրոպայի Մեր հայրապետական պատուիրակ՝ գերաշ. տ. Սերովբէ արքեպիսկոպոսի 7 մայիս 1977 թուակիր զեկուցագրի բովանդակութեանց և անոնց լոյսին տակ որոշեցինք Մայր Աթոռիս երկու ներկայացուցիչները ուղարկել Անթիլիաս, մասնակցելու կաթողիկոսական Աթոռիդ 22 մայիս 1977-ի պատգամաւորական ժողովին և 29 մայիս 1977-ին աթոռակից-կաթողիկոսի օծման արարողութեանց: Մեր ներկայացուցիչները պիտի ըլլան գերաշնորհ տ. Սերովբէ արքեպիսկոպոս Մանուկեան և գերաշնորհ տ. Ներսէս եպիսկոպոս Պոզապալեան:

Ձերդ Սրբութեան վերոյիշեալ նամակը հոգեկան մխիթարութիւն հանդիսացաւ Մեզի համար, անոր մէջ տեսնելով եղբայրական շինարար ոգի և կամեցողութիւն՝ ընդմիշտ վերացած տեսնելու Մայր Աթոռիս և Մեծի Տանն Կիլիկիոյ Աթոռի միջև շուրջ քսան տարիներէ ի վեր գոյատևող տխուր կացութիւնը, ինչ որ բազում տարիներու Մեր իղձն ու ապասումը եղած են, և որուն անդրադարձած էինք նաև 26 ապրիլ 1977 թուակիր Ձեզի ուղղեալ Մեր նամակին մէջ:

Մեր սուրբ եկեղեցին՝ ներքին միութեան, օրինականութեան և խաղաղութեան նաւահանգիստը տանող ճանապարհին վրայ, Մենք կը կամենանք հետևողականօրէն մնալ լաւատես, համոզուած ըլլալով թէ Ձեր վերոյիշեալ նամակին մէջ յստակօրէն արտայայտուած հաւաստիացումները կարճ ժամանակի մէջ կեանքի պիտի կոչուին, յապաւումովը Ձեր կանոնագրի 32-րդ և 33-րդ յօդուածներուն և օրինական կարգաւորումովը ծանօթ հինգ հարցերուն, բանակցութեանց եղանակաւ, հարցեր, որոնց ուրախ ենք որ կ'ակնարկէ նաև Ձերդ Սրբութիւնը իր նոյն նամակին մէջ:

Ձեր հաւաստիացումները իրօք մխիթարեցին Մեր սիրտը, որոնց կենսագործումով կը հաւատանք թէ նոր էջ մը պիտի բացուի մեր Աթոռներու յարաբերութեանց պատմութեան մէջ: Կը հաւատանք թէ՝ Մենք, Ձերդ Սրբութիւնը և նորընտիր Ձեր Աթոռակից եղբայրը միասնաբար, սրբութեամբ և վճռականութեամբ պիտի պահպանենք յետ այսու կանոնը մեր եկեղեցւոյ նուիրապետական Աթոռներու պատմականօրէն նուիրագործուած իրաւասու-

թեանց սահմաններու, համերաշխ գործակցութեան մթնոլորտի մէջ: Հեռացնել 32-րդ և 33-րդ յօդուածները՝ կը նշանակէ հեռացնել խախտումը մեր Աթոռներու իրաւասութեանց սահմաններուն, կը նշանակէ հեռացնել բուն պատճառը տագնապին, որ քսան տարիներէ ի վեր կը պառակտէ ու կը տկարացնէ մեր եկեղեցւոյ մարմինը: Միայն հեռացումովը բուն պատճառին՝ կրնանք հեռացնել նաև հետևանքները:

Անա թէ ինչու սրտանց կ՚ողջունենք Ձեր նամակի յուսադրիչ ոգին և շինարար հաւաստիացումները և իրապէս կը հաւատանք որ այսօրուընէ սկսեալ և յետ այսու բազում առիթներով, միատեղ պիտի կարողանանք զգալ ու ապրիլ քաղցրութիւնը մեծ Սաղմոսերգուի տեսիլքին «Զի՞ բարի, զի՞ վայելուչ, զի բնակեն եղբարք ի միասին... անդ պատրաստեաց Տէր զօրհնութիւն և զկեանսն յաւիտենից» (Սաղմոս ՃԼԲ 1, 3):

Թող Աստուած անսասան ու ծաղկեալ պահէ Մայր Աթոռ սուրբ Էջմիածինը և Մեծի Տանն Կիլիկիոյ Աթոռը ու միշտ օգնական մնայ մեզի բոլորիս, որպէսզի Մեր կողմէ արծարծուած այս հարցերը իրապէս և դրապէս լուծում գտնեն ցանկալի արագութեամբ, յանգելով ամբողջական համաձայնութեանց ի փառս մեր սուրբ եկեղեցւոյ և ի շահ մեր ժողովուրդի, ինչպէս Դուք կ՚ընդգծէք:

Թող Աստուած օրհնէ նաև մեր եղբայրութիւնը, մեր գործակցութիւնը և մեր հոգևոր ու ազգային առաքելութիւնը, նուիրական նշանաբանին ներքոյ՝ մէկ ու անբաժան եկեղեցի, մէկ ու անբաժան ժողովուրդ, մէկ ու անբաժան ապագայ վերածնած մեր արդի մայր երկրի պայծառ հորիզոնին վրայ:

«Այլ ինքն Աստուած և Հայր մեր, և Տէր մեր Յիսուս Քրիստոս՝ ուղղեսցէ զճանապարհս մեր առ ձեզ: Եւ զձեզ ինքն Տէր բազմապատիկս և առատեալս արասցէ սիրով ընդ միմեանս և առ ամենեսին՝ որպէս և մեք ի ձեզ» (Ա Թես. Գ 11—12):

Սուրբ Էջմիածնէն և Մեր սրտէն ընդունեցէք Մեր եղբայրական ողջոյնը և սէրը, ամենաբարի Մեր մաղթանքներով հանդերձ:

ՎԱԶԳԷՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

169/77

Անթիլիաս, 30 մայիս

ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹԻՒՆ
ՎԵՀԱՓԱՌ Տ. Տ. ՎԱԶԳԷՆ Ա.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Վեհափառ Տէր և սիրելի Աւագ Եղբայր,

Երէկ, 29 մայիսին, կիրակի առաւօտ Անթիլիասի Մայր տաճարին մէջ ծունկի եկայ սուրբ խորանին վրայ և ձեռամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Խորէն Ա կաթողիկոսի եւ Հայց. եկեղեցւոյ տասը եպիսկոպոսներու ստացայ կաթողիկոսական օծում դառնալով աթոռակից-կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ:

Այսօր, 30 մայիսին, երկուշաբթի առաւօտ, այս նոր պատասխանատուութեանը առաջին հանգրուանին, սրտի պարտք կը զգամ անդրանիկ պաշտօնական նամակս ուղղելու Ձերդ Վեհափառութեան, յայտնելու համար իմ սրտազգաց ուրախութիւնն ու շնորհակալութիւնը այն սրտապընդիչ երեւոյթին համար, որով երջանկութիւնը ունեցայ թէ՛ իմ ընտրութեան, 22 մայիսին, և թէ՛ օծմանս՝ վայելելու ներկայութիւնն ու մասնակցութիւնը Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան երկու պատուիրակներուն՝ յանձինս գերշ. տ. Սերովբէ ս. արքեպս. Մանուկեանին և գերշ. տ. Ներսէս ս. եպսկ. Պոզապալեանին, առաքուած Ձերդ Ս. Օծութեան կողմէ:

Անհուն ուրախութիւնս անձնական չէ միայն, այլ ընդհանրական: Գոհունակութեան և ցնծութեան բացառիկ և ոգեւորիչ զգացումներով ողջունեցաւ այս մասնակցութիւնը թէ՛ Պատգամաւորական Ժողովին և թէ՛ ժողովուրդին կողմէ: Երեք առիթներով հրապարակային և գրաւոր արտայայտութիւններով իմ անկեղծ ուրախութիւնս արտայայտեցի այդ երջանկաբեր երեւոյթին համար: Կաթողիկոսական օծման առիթով արտասանածս քարոզէն օրինակ մը կը ներփակեմ, որպէսզի անձամբ և ուղղակիօրէն տեղեկանաք իմ զգացումներու մասին: Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Խորէն Ա կաթողիկոս ինք եւս Իր սրտազգաց ուրախութիւնն մէկէ աւելի անգամներ յայտնեց այս բարեբաստիկ առիթով: Վստահաբար գերշ. տ. Սերովբէ և Ներսէս սրբազաններ մանրամասնօրէն կը զեկուցեն անցնող շաբթուան ընթացքին վերստեղծուած միասնութեան ոգիին և մթնոլորտին մասին: Ինչպէս Խորէն Ա Վեհափառ Հայրապետը Իր 2 մայիս, 1977 թուակիր և 159/77 թուահամար նամակով կը յայտնէ, յառաջիկային խորհրդակցութեանց, բանակցութեանց ճամբով, փոխադարձ սիրոյ եղբայրութեան և յարգանքի մթնոլորտին մէջ, մէկ եկեղեցիի գաղափարէն և սկզբունքէն առաջնորդուած, մենք եւս կը յուսանք և մեր գերագոյն կարելին ի գործ պիտի դնենք որ կարելի փութով վերջ գտնեն տարակարծութիւնները և գործնական, սահուն և օգտաւէտ արտայայտութեան ընթացքի մէջ մտնէ Հայց. եկեղեցւոյ միութիւնը՝ ի փառս Աստուծոյ, և ի բարին հայ ժողովուրդին: Վստահ ենք որ պատշաճագոյն

ԼՍԵԿ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ ՍԻԱԴԻՄԻՈՍ

ժամանակին և պատշաճագոյն ձեւով գործնական հունի մէջ կը մտնեն անհրաժեշտ խորհրդակցութիւններն ու բանակցութիւնները այս ուղղութեամբ։ Յառաջիկայ շաբաթներու ընթացքին, երբ սկսինք գործնապէս լծուիլ մեր պաշտօնի վերաբերեալ աշխատանքներուն, մեր գործունէութեան մէջ առաջնահերթ տեղ պիտի գրաւէ Հայց. եկեղեցւոյ միութիւնը զօրացնելու մեր նախանձախնդրութիւնը։

Ձերմօրէն պիտի խնդրէի Ձեզմէ որ Ձեր աղօթքներուն մէջ յիշէիք զիս մանաւանդ սկզբնական այս օրերուն որպէսզի Աստուած զօրացնէ զիս այս ծանր պարտաւորութեանց մէջ։

Մնամ խոնարհ եղբայրական սիրով,

Աղօթակից

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԱԹՈՌԱԿԻՑ-ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

ՀՄՐ. 472 6 յուլիս 1977 թ.

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹԻՒՆ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱԹՈՌԱԿԻՑ-ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

ԱՆԹԻԼԻԱՍ

Սիրելի Սրբազան Եղբայր ի Քրիստոս,

Յուզումով կարդացինք Ձեր 30 մայիս 1977 թուակիր նամակը, զոր գրի առեր էիք Ձեր օծման կիրակիին յաջորդող առաւօտեան: Ձեր գիրը իրաւ հաճոյք և հոգեկան մխիթարութիւն պատճառեց Մեզի: Անոր մէջ գնահատեցինք Ձեր մտածումներուն պայծառութիւնը, Ձեր զգացումներուն ջերմութիւնը և մանաւանդ Ձեր հայաշունչ ոգին, որ միշտ յատկանշած է Ձեր անձնաւորութիւնը:

Կ'աղօթենք որ բարեաց Պարգևատուն Ձեզ արժանի ընէ երկար, շատ երկար տարիներ ծառայելու մեր սուրբ եկեղեցիին և ժողովուրդին, իբրև իսկապէս Գարեգին Երկրորդ Յովսէփեանց մը մեր օրերուն և գալիք ժամանակներուն: Մեր լուսաբնակ նախնեաց հոգին թող մնայ Ձեզի միշտ գործակից ու մարտակից:

Այսօր երբ Ձեր ընտրութեամբ և գահակալութեամբ նոր էջ մը կը բացուի Տանն Կիլիկիոյ Աթոռին տարեգրութեան մէջ, Մենք սրտանց կը բաղձանք որ Դուք նոր էջ մը կարողանաք բանալ նաև մեր եկեղեցւոյ պատմագրքին մէջ և լուսաւոր անուն մը թողուլ այնտեղ: Այդ էջը Դուք պիտի կարողանաք բանալ մանաւանդ Ձեր վճռական նպաստը բերելով մեր եկեղեցւոյ ներքին միութեան վերահաստատման, վերացումովը բոլոր այն արգելակումներուն և արարքներուն, որոնք դուռ բացին անօրինականութիւններու, տագնապալի կացութիւններու և երկփեղկումներու, սփիւռքի մեր եկեղեցիներու կեանքէն ներս: Մենք բնաւ տրամադիր չենք եղածը ողբերգականացնելու կամ մեղադրանքներ շռայլելու, սակայն չենք ալ կրնար խորհիլ թէ այլևս կարելի է այդ ուղիով ընթանալ: Արդարութեան զգացումը, ողջմտութիւնը և մեր ժողովուրդի գերագոյն ու մնայուն շահերը հրամայականօրէն կը թելադրեն բոլորիս՝ ետ դառնալ կորուստի ուղիներէն և ընթանալ այն միակ ճանապարհով, որ մեր սուրբ եկեղեցւոյ կանոններով ու բազում սերունդներու կեանքի փորձով պատմականօրէն նուիրագործուած ու սրբագործուած է:

Հայ եկեղեցւոյ միութիւնը և հայ հաւատացեալ ժողովուրդի ազգային միասնութիւնը հնարաւոր է հաստատել միմիայն հայրենի հողի վրայ խարսխուած սուրբ Էջմիածնի Ամենայն Հայոց Հայրապետութեան վէմին վրայ, որուն հաւասարազօր ուրիշ հեղինակութիւն կամ կեդրոն չէ եղած, չկայ և չի կրնար ըլլալ:

Հայ եկեղեցւոյ նուիրապետական կառոյցի կեդրոնը ս. Էջմիածինն է: Կիլիկեան Կաթողիկոսութեան և Երուսաղէմի ու Կ. Պոլսոյ Աթոռները, սուրբ Էջմիածնի՝ դէպի սփիւռք երկարած թևերն են, գործակիցներն են, ամէն մէկը իր իրաւասութիւններով, իր ներքին կանոնագրութեամբ և իր աշխատանքի բաժինով: Խախտել այս պատմականօրէն հաստատուած նուիրապետական կառոյցը, կը նշանակէ անխուսափելի կերպով ստեղծել տնապէս տագնապալի կացութիւններ և պառակտումներ, ինչպէս եղաւ վերջին քսան տարիներու ընթացքին: Անբնական է և անկանոն՝ պատկերացնել մէկ ու անբաժան եկեղեցի մը երկու հաւասարազօր գլուխներով: Մէկ ու անբաժան մեր եկեղեցւոյ նուիրապետական կառոյցը իր ներքին հաւասարա-

կշռութիւնը և կարգապահութիւնը կը կորսնցնէ ամէն անգամ երբ նոյն նուիրապետական կառոյցին մէջ տեղ ունեցող մասնաւոր Աթոռ մը կը փորձէ տեղը գրաւել եկեղեցւոյ բուն ու միակ գլուխին, ձգտելով իր իշխանութիւնը տարածել իր մասնաւոր Աթոռի սահմաններէն դուրս:

Մենք շատ գոհ ենք որ այլևս այս ճշմարտութիւնները յստակ դառնալով նաև Ձեր Աթոռէն ներս, պաշտօնական հաւաստումներ ունեցանք Տ. Տ. Խորէն Ա կաթողիկոսի և Աթոռիդ Պատգամաւորական Ժողովին կողմէ թէ պիտի ջնջուին 32-րդ և 33-րդ յօդուածները Աթոռիդ կանոնագրութենէն մօտ ապագային, Ձեր Ազգային Ընդհանուր Ժողովի որոշումով, և ապա պիտի վերացուին նաև հետևանքները այդ յօդուածներուն, գործնական միջոցառումներով, փոխադարձ համաձայնութեամբ: Այդ հաւաստումներուն մէջ Մենք տեսանք նոր ոգի մը, օրինապահ ու շինարար ոգին Ձեր Աթոռին, որով և լաւատես սրտով, բաց սրտով Մեր ներկայացուցիչները առաքեցինք Անթիլիաս, մասնակցելու ձեր հանդիսութիւններուն:

Արդ, Մեր ջերմագին իղձն ու սպասումն է որ հնարաւոր ամենակարճ ժամանակի մէջ կատարուի խոստացուած ջնջումը 32-րդ և 33-րդ յօդուածներուն, որպէսզի օրինաւոր և գործնական ճանապարհը բացուի սփիւռքի մեր եկեղեցական կեանքի տագնապալի կացութեանց վերացման, Մայր Աթոռիս և Ձեր Աթոռի շինարար գործակցութեամբ, հիմնական նպատակ ունենալով վերականգնել այն իրավիճակը որ հաստատուած ու յարգուած էր՝ 1929-էն մինչև 1956, և որուն նկատմամբ ոչ մէկ առարկութիւն կար ոչ ոքի կողմէ մինչև այդ թուականը:

Որով, Մենք ուղիղ կը նկատենք և գործնական որ 17 յունիս թուականի Ձեր հեռագրով առաջարկած Աթոռիդ պատուիրակութեան ժամանումը ս. Էջմիածին, տեղի ունենայ անմիջապէս վերոյիշեալ յօդուածներու ջնջումէն յետոյ Աթոռիդ Ազգային Ընդհանուր Ժողովին կողմէ: Վստահ եղէք թէ գործելու այս կերպը լաւագոյնն պիտի ծառայէ Մեր և Ձեր բարի նպատակներու կենսագործման:

Համբերատար ու լաւատես ոգիով պիտի սպասենք այդ երջանիկ պահին, և սիրով պիտի ողջունենք Աթոռիդ պատուիրակութեան ժամանումը, Մայր Աթոռիս և Ձեզի համար յարմարագոյն թուականի մը:

Մեզի համար յոյժ հաճելի պիտի ըլլայ եթէ հաճիք Տ. Տ. Խորէն Ա Մեր Վեհափառ Եղբօրը ներկայացնել Մեր ամենաբարի մաղթանքները կայուն առողջութեան ու եռանդաշատ գործունէութեան, ի պայծառութիւն Կիլիկեան պատմական Աթոռիդ և ի կենսագործումն Հայաստանեայց մեր Մայր եկեղեցւոյ ու հարազատ ժողովուրդի բոլոր արդար ու նուիրական իղձերուն և սպասումներուն:

Եղբայրական սիրոյ ողջագուրումով և համակրալից ջերմագին զգացումներով, մնամք աղօթող Փրկչի Իշման տուրք սեղանի առաջ Ձերդ Սրբութեան արևշատութեան և հայրապետական առաքելութեան պայծառ արդիւնաւէտութեան համար:

«Զի թէպէտ և մարմնով հեռի եմ, այլ հոգւով ընդ ձեզ եմ. խնդամ՝ իբրև տեսանեմ զկարգն ձեր և զհաստատութիւն հաւատոցն ձերոց որ ի Քրիստոս Յիսուս» (Կողոս. Բ 5). ամէն:

ՎԱԶԳԷՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՄԵԾԱՀԱՐԳ ՆԱԽԱԳԱՀ ՏԻԱՐ Ֆ. Տ. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Հունիսի 29-ին, չորեքշաբթի օրը, առավոտյան ժամը 10-ին, Վեհափառ Հայրապետը այցելություն տվեց Երևանում, Կառավարական Տանը, ՀՍՍՀ Մինիստրների սովետի նորընտիր նախագահ Ֆ. Տ. Սարգսյանին:

Վեհափառ Հայրապետին ընկերակցում էր Գերագույն հոգևոր խորհրդի անդամ և Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս արքեպիսկոպոս Տեր-Ստեփանյանը:

Ամենայն Հայոց Հայրապետը և Մինիստրների սովետի պարոն նախագահը ընդունելության սկզբում փոխանակեցին ողջույնի և բարիգալստյան ջերմ խոսքեր:

Այնուհետև արտագին մթնոլորտում տեղի ունեցավ զրույց, որին ներկա էին նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պարոն Սարգիս Գասպարյանը և ՀՍՍՀ Մինիստրների սովետի գործերի կառավարիչ պարոն Հ. Ե. Վարդանյանը:



ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սույն թվականի հունիսի 6—10 օրերին Մոսկվայի և համայն Ռուսիո Պատրիարք Տ. Պիմենի նախաձեռնությամբ և հրավերով Մոսկվայում գումարվեց կրոնական գործիչների համաշխարհային համաժողով՝ նվիրված կայուն խաղաղության, զինաթափման և ժողովուրդների միջև արդար հարաբերությունների հաստատմանը:

Կոնֆերանսին մասնակցեցին քրիստոնյա և այլ կրոնների շուրջ 650 ներկայացուցիչներ, աշխարհի 107 տարբեր երկրներից:

Սույն կոնֆերանսին Հայաստանյայց առաքելական եկեղեցին և Մայր Աթոռը ներկայացնում էր անձամբ Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Առաջինը՝ ընկերակցությամբ տ. Կոմիտաս, տ. Շահե, տ. Արսեն սրբազանների, տ. Ոսկան ծ. վրդ. Գալբակյանի և տ. Տիրան վրդ. Կյուրեղյանի:

Հունիսի 6-ին, երկուշաբթի օրը, առավոտյան ժամը 10-ին, Մոսկվայի «Յեենտր Էստրադա» դահլիճում բացվեց համաշխարհային սույն կոնֆերանսը՝ բոլոր ներկաների աղոթքով և կոնֆերանսի նախապատրաստական կոմիտեի նախագահ տ. Յուվենալի միտրոպոլիտի բացման ճառով:

Կոնֆերանսի լիագումար նիստում ողջույնի խոսքով առաջինը հանդես եկավ Տ. Պիմեն Սրբազան Պատրիարքը: Այնուհետև ՍՍՀՄ Մինիստրների սովետի նախագահ Ալեքսեյ Կոսիգինի ողջույնի ուղերձը ընթերցեց ՍՍՀՄ Մինիստրների սովետին առընթեր կրոնական գործերի խորհրդի նախագահ Վ. Ա. Կուրոյեդովը:

Ընթերցվեցին նաև Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր բարտուղար Կուրտ Վալդհայմի և մի շարք պետությունների ղեկավարների ողջույնի ուղերձները:

Մուֆթի Զիյաուդդին Բաբախանովը, հանուն Սովետական Միությունում ապրող մահմեդականների, հանդես եկավ ընդարձակ զեկուցումով, որը նվիրված էր խաղաղության գաղափարի շուրջ տարբեր կրոնների մերձեցմանն ու միջկրոնական համագործակցությանը՝ ի նպաստ աշխարհի խաղաղության պաշտպանությանը:

Լիագումար նիստում հանդես եկավ նաև Ամենայն Հայոց Հայրապետը ֆրանսերեն մի ճառով, որը նվիրված էր կայուն խաղաղության, զինաթափման և ժողովուրդների միջև արդար հարաբերությունների հաստատմանը:

Հունիսի 7-ին, երեքշաբթի օրը, կոնֆերանսն իր աշխատանքները շարունակեց աշխատանքային երեք խմբերում:

Հունիսի 9-ին, հինգշաբթի օրը, ժամը 15-ին, Կրեմլում ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահի տեղակալ Ս. Բ. Նիազբեկովը և նախագահության քարտուղար Մ. Պ. Գեորգաձեն ընդունեցին կոնֆերանսի պատվո և գործադիր նախագահության անդամներին: Ընդունելության ժամանակ ողջույնի խոսքով հանդես եկավ նաև Հայոց Հայրապետը:

Նույն օրը, ժամը 20-ին, ՍՍՀՄ Մինիստրների սովետին առընթեր կրոնական գործերի խորհուրդը, ի պատիվ կոնֆերանսի պատգամավորների, կազմակերպեց պաշտոնական ընդունելություն՝ գլխավորությամբ խորհրդի նախագահ Վ. Ա. Կուրոյեդովի:

Հունիսի 10-ին, ուրբաթ օրը, գումարվեց կոնֆերանսի եզրափակիչ նիստը, որը ողջույնի և շնորհակալության հեռագիր ուղղեց ՍՍՀՄ Մինիստրների սովետի նախագահ Ալեքսեյ Կոսիգինին՝ կոնֆերանսի աշխատանքներին ցույց տրված ուշադրության և բարյացակամության համար:

Հանուն կայուն խաղաղության, զինաթափման և ժողովուրդների միջև արդար հարաբերությունների հաստատման, կոնֆերանսում ընդունված որոշումների և եզրակացությունների լույսի տակ, սույն նիստում ընդունվեցին նաև երկու փաստաթղթեր՝

ա) Կոչ աշխարհի բոլոր երկրների կառավարություններին.

բ) Կոչ ամբողջ աշխարհի կրոնական գործիչներին և հավատացյալներին:

Կոնֆերանսն իր աշխատանքների վերջում հրապարակեց համապատասխան հաղորդագրություն:

Մոսկվայի սույն կոնֆերանսը կարևոր մի ներդրում հանդիսացավ խաղաղության ի նպաստ մղված պայքարի ճանապարհի վրա՝ հօգուտ բոլոր ազգերի և ժողովուրդների խաղաղ համագործակցության:

Հունիսի 11-ին, շաբաթ օրը, Վեհափառ Հայրապետը վերադարձավ Մայր Աթոռ՝ խաղաղության աստվածահաճո գործին ի նպաստ Իր գործոն մասնակցությունը բերած լինելու ներքին գոհունակությամբ:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Ս. Էջմիածին,
13 հունիսի 1977 թ.





ԿՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ԿԱՅՈՒՆ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ, ԶԻՆԱԹԱՓՄԱՆ ԵՎ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԱՐԴԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆԸ

1977 թվականի հունիսի 6—10 օրերին Մոսկվայի և համայն Ռուսիո Պատրիարք Նորին Սրբություն Տ. Պիմենի նախաձեռնությամբ և հրավերով Մոսկվայում գումարվեց կրոնական գործիչների համաշխարհային կոնֆերանս՝ նվիրված կայուն խաղաղության, զինաթափման և ժողովուրդների միջև արդար հարաբերությունների հաստատմանը:

Կոնֆերանսին մասնակցեցին քրիստոնեական, բուդդայական, հինդու, մահմեդական, հրեական, շինտոյական և սիք կրոնների շուրջ 650 ներկայացուցիչներ, աշխարհի 107 տարբեր երկրներից, որոնք եկել էին համագործակցության և եղբայրական ոգով քննարկելու միջազգային մի շարք կարևոր հարցեր և բերելու իրենց նպաստը լարվածության թուլացման, սպառազինությունների մրցավազքի կասեցման և ժողովուրդների միջև արդար հարաբերությունների հաստատման սրբազան գործին:

Կոնֆերանսի աշխատանքներին մասնակցում էին Հռոմեական կաթոլիկ եկեղեցու, Եկեղեցիների համաշխարհային խորհրդի, Խաղաղության քրիստոնեական կոնֆերանսի, Լութերական համաշխարհային ֆեդերացիայի, Բապտիստների համաշխարհային ալիանսի, Մուսուլմանական համաշխարհային կոնգրեսի, Խաղաղության բուդդայական ասիական կոնֆերանսի, Համայն Աֆրիկայի եկեղեցիների կոնֆերանսի, Եվրոպական եկեղեցիների կոնֆերանսի և շրջանային ու համաշխարհային բազմաթիվ այլ կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Սույն կոնֆերանսին Հայաստանյայց առաքելական եկեղեցին և Մայր Աթոռ ս. Էջմիածինը անձամբ ներկայացնում էր Ամենայն Հայոց կաթողի-

կոս Տ. Տ. Վազգեն Առաջինը՝ ընկերակցությամբ տ. Կոմիտաս, տ. Շահե, տ. Արսեն սրբազանների, տ. Ոսկան ծ. վրդ. Գալբակյանի և տ. Տիրան վրդ. Կյուրեղյանի:

Կոնֆերանսը նախապատրաստվում էր տասնչորս ամիսներից ի վեր: Ռուս պրավոսլավ եկեղեցու ներկայացուցիչ, Տուլայի և Բելևի միտրոպոլիտ Յուվենալիի նախագահությամբ կազմվել էր երեսուն երկրների տարբեր կրոնների 95 ներկայացուցիչներից բաղկացած միջազգային նախապատ-

Վեհափառ Հայրապետը, ի գլուխ հայ եկեղեցու պատվիրակության, Մոսկվայի խաղաղության համաժողովում (1977 թ. հունիս 6—10)

ռատական մի կոմիտե, որին անդամ էին նաև Մայր Աթոռի ներկայացուցիչներ տ. Շահե և տ. Արսեն սրբազանները:

Կոնֆերանսի գումարումից առաջ ընտրվել էր պատվո նախագահություն, որի կազմում էր նաև Վեհափառ Հայրապետը՝ ի թիվս այլ հոգևոր պետերի:

Հունիսի 6-ին, առավոտյան ժամը 10-ին, Մոսկվայի «Տեսնոր Էստրադա» դահլիճում հանդիսավոր իրադրության մեջ բացվեց կրոնական գործիչների սույն համաշխարհային կոնֆերանսը՝ աղոթքով և ապա նախապատրաստական կոմիտեի նախագահ Յուվենալի միտրոպոլիտի բացման ճառով:

Պատվո նախագահության սեղանի շուրջ տեղ էին գրավել Տ. Պիմեն Պատրիարքը, Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսը, Ալեքսանդրիայի և համայն Աֆրիկայի Տ. Նիկոլաոս Պատրիարքը, բուլղար օրթոդոքս եկեղեցու պետ Տ. Մաքսիմ Պատրիարքը, վրաց օրթոդոքս եկեղեցու պետ Դավիթ Ե Պատրիարք-կաթողիկոսը, ինչպես նաև այլ կրոնների հոգևոր պետեր և կրոնական կազմակերպությունների բարձրաստիճան ներկայացուցիչներ:

Նախագահության սեղանի շուրջ տեղ էր գրավել նաև ՍՍՀՄ Մինիստրների սովետին առընթեր կրոնական գործերի խորհրդի նախագահ Վ. Ա. Կուրոյեդովը:

Լիագումար սույն նիստում ողջույնի խոսքով առաջինը հանդես եկավ Նորին Սրբություն Տ. Պիմեն Պատրիարքը: «Մարդկային գոյության և նրա իրականության նկատմամբ զգայուն վերաբերմունքը,—ասաց նա,—մղում է մեզ՝ տարբեր կրոնների ներկայացուցիչներիս, դիալոգի նստելու միմյանց հետ, հասարակաց որոշումներ ընդունելու և միասնաբար գործելու: Կայուն խաղաղությունը, զինաթափումը և ժողովուրդների միջև արդար հարաբերությունների հաստատումը մեր ժամանակի կարիքների ամենապերճախոս արտահայտությունն են և այն ազնիվ նպատակը, որին ձգտում ենք մենք բոլորս»:

Այնուհետև Վ. Ա. Կուրոյեդովը ընթերցեց ՍՍՀՄ Մինիստրների սովետի նախագահ Ալեքսեյ Կոսիգինի ուղերձը՝ ուղղված համաշխարհային սույն կոնֆերանսին: Իր ուղերձում Ալեքսեյ Կոսիգինը սովետական կառավարության և անձամբ իր անունից ջերմորեն ողջունում էր կոնֆերանսի մասնակիցներին՝ բարձր գնահատելով կոնֆերանսի նպատակները և լիակատար հաջողություն մաղթելով նրա մասնակիցներին՝ խաղաղության ի նպաստ իրենց ազնիվ ջանքերի ճանապարհին:

Լիագումար սույն նիստում հրապարակվեցին նաև Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղար Կուրտ Վալդհայմի, ինչպես նաև մի շարք պետությունների ղեկավարների ողջույնի ուղերձները:

Կոնֆերանսի առավոտյան լիագումար նիստում կոնֆերանսի գլխավոր թեմայի մասին ընդարձակ զեկուցումով հանդես եկավ մուֆթի Զիյաուդդին Բաբախանովը՝ շեշտելով խաղաղության գաղափարի շուրջ տարբեր կրոնների մերձեցման և միջկրոնական համագործակցության անհրաժեշտության հնարավորությունը խաղաղության պաշտպանության գործում:

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՀԱՄԱԺՈՂՈՎՈՒՄ
(6 հունիսի 1977 թ.)

Կոնֆերանսի լիագումար առավոտյան նիստում ֆրանսերեն լեզվով հանդես եկավ նաև Հայոց Հայրապետը՝ հետևյալ բովանդակալից ճառով.

ԽՈՍՔ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ

Անցնում են տարիներ ու տասնամյակներ, գալիս են նոր սերունդներ, փոփոխվում է մեր աչքերի առաջ քարտեզը աշխարհի ու դիմագծությունը մարդկային կյանքի, ծնունդ են առնում գիտական, ընկերային, քաղաքական նոր զարգացումներ, սակայն այդ բոլորից վեր կա ու կանգուն է մնում մեկ համընդհանուր աներեր ճշմարտություն մեր փոթորկահույզ երկրագնդի ամբողջ տարածքի վրա, որ հետզհետե ավելի ու ավելի պայծառ և համայնական է դառնում: Այդ ճշմարտությունը՝ մարդկանց ու ժողովուրդների լայն զանգվածների գիտակցությունն ու կամեցողությունն է՝ պահպանելու և հետզհետե առավել ամուր հիմքերի վրա դնելու աշխարհի խաղաղ գոյավիճակը: Բոլորի երազանքն է մարդկային կյանքի ու պատմության անդաստանից պոկել, արմատախիլ անել ազգամիջյան թշնամանքներին ու պատերազմներին սնունդ տվող թունալից արմատները և վերջապես իրականացած տեսնել տեսիլքը Եսայի մարգարեի՝

«Եւ ձուլեսցեն զսուսերս իւրեանց ի խոփս, և զսուինս իւրեանց ի մանգաղս. ոչ առնուցու ազգ յազգի վերայ սուր, և ոչ ևս ուսանիցին տալ պատերազմ» (Եսայի Բ 4):

Բոլոր մարդիկ կամենում են երկրի վրա վերջապես հաստատված տեսնել՝ խաղաղ գոյակցության և բարեկամական գործակցության հարաբերություններ ազգությունների և պետությունների միջև:

Համամարդկային այս ազնիվ երազանքի, այս բարի կամեցողության արտահույզ մի արտահայտություն է հանդիսանում մեր այս համաժողովը, որտեղ հավաքվել ենք կրոնական հավատքի մարդիկ, տարբեր եկեղեցիների, տարբեր կրոնական դավանությունների պատկանող կրոնապետեր և հոգևորական պատասխանատու գործիչներ, եղբայրական հրավերովը ռուսաց պրավոսլավ մեծ եկեղեցու Պատրիարք Նորին Սրբություն Պիմեն Հայրապետի:

Հանուն Հայ առաքելական եկեղեցու Մենք սրտանց ողջունում ենք սույն մեծ համաժողովը, որ գումարված է իր խոսքը ասելու մեր օրերի մարդկանց ու պետություններին:

Մարդկային աշխարհը համայն պահանջում է պետությանց ղեկավարներից, պահանջում է մեր բոլորից՝ հաց, լույս և խաղաղություն:

Մարդկությունը իր ձեռքին մեջ ունի այժմ նյութական ուժի հզորագույնը՝ ատոմական էներգիան: Այն կարելի է օգտագործել թե՛ կյանքի խաղաղ զարգացման և թե՛ պատերազմական նպատակներով: Արդ, մեր օրերի ամենահրամայական հարցն է՝ ձեռք բերել մարդկային այն բարոյական ուժը, որով կարելի լինի նյութի սանձազերծած էներգիան ծառայեցնել մարդկության բարօրության ու երջանկության, ի խնդիր հացի և լույսի:

Մեր, հոգևորականներիս առաքելությունը պետք է լինի մեր հոգու բոլոր ուժերով աղոթել Աստծուն և չտկարացող եռանդով գործել, այդ բարոյական ուժը առավել ու առավել հզորացնելու և կազմակերպելու ուղ-

ղությամբ, որպեսզի ազգությունների և պետությունների միջև ստեղծվեն խաղաղարար հարաբերություններ բոլոր տեսակի հարցերի լուծման ճանապարհի վրա:

Ամեն բանի մասին կարելի է տարակարծիք լինել և վիճել. խաղաղության հրամայականը սակայն վեր պետք է լինի ամեն վեճից և դառնա բոլորի համար մտածելու ու գործելու գերագույն կանոն՝ ամեն տեսակի հարցերը լուծելու:

Երկյուղի և անստուգության մեջ տառապող այսօրվա մարդկությանը պարտինք, մանավանդ մենք հոգևորականներս, ցույց տալ խաղաղության և ամբողջական զինաթափման ճանապարհը:

Ատոմական դարաշրջանի պայմաններում այլևս կարելի չէ քրիստոնյա լինել, մարդ լինել, և խաղաղության դատին պաշտպան չհանդիսանալ և չգործել խաղաղության հաղթանակի համար:

Ոչ մեկ ընկերային, քաղաքական, ազգային կամ միջազգային հարց այլևս կարելի չէ լուծել պատերազմով:

Պատերազմի հնարավորությունը պետք է մարդկային կյանքի մտածումից դուրս վանել, իբրև միջազգային իրավունքի գերագույն կանոն:

Մարդու և ազգությունների գերագույն իրավունքը՝ ապրելու իրավունքն է, իսկ այն կենսագործելու հիմնական պայմաններն են՝ ապահովումը ընկերային արդար հարաբերությունների և ապահովումը պետությունների միջև խաղաղ գոյակցության:

Անկախ քաղաքական-ընկերային վարչակարգերից և վեր այդ բոլորից, մարդիկ այսօր պահանջում են՝ խաղաղ ապրելու իրավունք, աշխատանքի իրավունք, հավասարության իրավունք, ազգային ազատ ինքնորոշման իրավունք: Առանց այս հիմնական իրավունքների կենսագործման, հիմնապես վտանգված կլինեն նաև մարդկային ազատությունները: Ահա, Մեր կարծիքով, Հելսինկիի պատմական փաստաթղթի գերագույն իմաստն ու նպատակը:

Այս բարձր բեմից Մենք կոչ ենք անում աշխարհի բոլոր պետություններին՝ խաղաղության պահպանման հրամայականը դարձնել իրենց սահմանադրությունների գերագույն օրենքը: Եվ, սիրեցյալ եղբայրներ, հույժ նշանակալից է և մխիթարական Մեզ համար, որ մեր այս համագումարը տեղի է ունենում այն մեծ պետության մայրաքաղաքում, որի ստեղծման ու կառուցման հիմքում է գտնվում խաղաղության աստվածահաճո գաղափարը, մի պետություն որ ահա վաթսուն տարիներից ի վեր անշեղորեն հավատարիմ է մնացել այդ մարդասիրական սկզբունքին և այսօր էլ նա իր ճակատագիրը կապել է խաղաղության դատի հաղթանակի հետ:

Մեզ համար մխիթարական է նաև, որ մեր դարաշրջանում բոլոր պետությունները հետզհետե համոզվում են թե իրենց իսկ ազգային սեփական շահերը թելադրում են որդեգրել խաղաղասիրական քաղաքական ուղի:

Հայ ժողովուրդը ևս, որ անցյալում ահավոր կերպով տուժել է պատերազմների ընթացքում, ինչպես, օրինակ՝ 1915 թվականին, երբ Արևմտյան Հայաստանում զոհ գնացին երկու միլիոն հայ քրիստոնյաներ Օսմանյան Կայսրության կազմակերպած ցեղասպանության, այսօր նոր ու երջանիկ կյանքի կոչված սովետական ժողովուրդների մեծ ընտանիքում, մի սրբազան իղձ ունի. այն է՝ տեսնել աշխարհում խաղաղ ու արդար գոյավիճակ, ժողովուրդների միջև բարի կամեցողություն և պետությունների միջև շինարար գործակցություն:

ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ՊԱՏՎՈ ԵՎ ԳՈՐԾԱԴԻՐ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԸ ԿՐԵՄԼՈՒՄ՝
ՍՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՊԱՀԻՆ (9 ՀՈՒՆԻՍԻ 1977 Թ.)

Ուրեմն հայ եկեղեցու և ժողովրդի անունով կոչ ենք անում ձեզ բոլորիդ, որ ամենքս միասին կազմենք մի միասնական հոգևոր հզոր եղբայրություն և աղոթենք ու գործենք մեր բոլոր ուժերով, որպեսզի երկրի վրա իրագործվի կամքը Աստուծո՝ «Յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Փառք մեր Աստծուն, խաղաղության Աստծուն: Փառք ու երանի բոլոր խաղաղարարներին: Ամեն:

Հունիսի 7-ին, երեքշաբթի օրը, կոնֆերանսն իր աշխատանքը շարունակեց աշխատանքային երեք մեծ խմբերում:

Առաջին խմբի քննարկման թեման էր՝ «Հանուն կայուն խաղաղության»: Այս թեմայի շուրջ լսվեց համապատասխան զեկուցում: Այնուհետև տեղի ունեցավ մտքերի փոխանակություն, որին մասնակցեցին նաև Վեհափառ Հայրապետը և տ. Շահե արքեպիսկոպոսը:

Երկրորդ խմբում քննարկվեց «Հանուն զինաթափման» թեման: Այս թեմայի քննարկմանը մասնակցեցին տ. Ոսկան ծ. վրդ. Գալբակյանը և տ. Տիրան վարդապետը:

Երրորդ խմբի թեման էր՝ «Արդար հարաբերություններ ժողովուրդների միջև»: Այս խմբի աշխատանքներին մասնակցեցին տ. Կոմիտաս և տ. Արսեն սրբազանները, որոնք հանդես եկան համապատասխան գրավոր ճառերով:

Հունիսի 8-ին և 9-ին աշխատանքները շարունակվեցին աշխատանքային խմբերում: Այստեղ քննարկված թեմաների շուրջ ընդունվեցին համապատասխան եզրակացություններ և որոշումներ, որոնք ներկայացվեցին հունիսի 10-ի լիագումար նիստին՝ հաստատման համար:

Հունիսի 9-ին, ժամը 15-ին, Կրեմլում ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահի տեղակալ Ս. Բ. Նիազբեկովը և նախագահության քարտուղար Մ. Պ. Գեորգաձեն ընդունեցին կոնֆերանսի պատվո և գործադիր նախագահության անդամներին, այդ թվում նաև՝ Հայոց Հայրապետին: Ընդունելության ժամանակ պետական բարձրաստիճան անձնավորությունների և կոնֆերանսի նախագահությունների անդամների միջև փոխանակվեցին ողջույնի և բարիգալստյան խոսքեր:

Այս առիթով Հայոց Հայրապետը նույնպես ողջույնի և շնորհակալության խոսք ուղղեց սովետական կառավարության բարձրաստիճան ներկայացուցիչներին:

Նույն օրը, ժամը 16-ին, գումարվեց կոնֆերանսի երրորդ լիագումար նիստը, որտեղ քննության առնվեցին աշխատանքային խմբերում կատարված աշխատանքների արդյունքները:

Հունիսի 9-ին կոնֆերանսի պատգամավորները ըստ կրոնների ունեցան առանձին հանդիպումներ, որոնց ընթացքում քննության առնվեցին յուրաքանչյուր կրոնի վերաբերյալ առանձնահատուկ հարցեր, կոնֆերանսի աշխատանքի արդյունքները՝ նրա գաղափարներն ու եզրակացությունները կենսագործելու հեռանկարով: Այս հանդիպման ժամանակ, հանուն հայ եկեղեցու, խոսք առավ նաև տ. Շահե արքեպիսկոպոսը:

Ժամը 20-ին ՍՍՀՄ Մինիստրների սովետին առընթեր կրոնական գործերի խորհուրդը, ի պատիվ կոնֆերանսի պատգամավորների, կազմակերպեց պաշտոնական ընդունելություն՝ գլխավորությամբ խորհրդի նախագահ Վ. Ա. Կուրոյեդովի:

Հունիսի 10-ին գումարվեց կոնֆերանսի չորրորդ և վերջին լիագումար նիստը:

Կոնֆերանսը ողջույնի և շնորհակալության հեռագիր ուղղեց ՍՍՀՄ Մինիստրների սովետի նախագահ Ա. Ն. Կոսիգինին՝ իր հարգանքը և երախտագիտությունը փոխանցելու սովետական կառավարությանը կոնֆերանսի աշխատանքներին ցույց տված նրա ուշադրության և բարյացակամության համար: Կոնֆերանսը իր պատասխան ուղերձի մեջ ջերմորեն շնորհավորում էր սովետական կառավարությանը և սովետական ժողովրդին՝ Հոկտեմբերյան հեղափոխության 60-ամյակի առթիվ:

Սույն նիստում ընդունվեցին նաև երկու փաստաթղթեր.

ա. «Կոչ աշխարհի բոլոր երկրների կառավարություններին».

բ. «Կոչ ամբողջ աշխարհի կրոնական գործիչներին և հավատացյալներին»:

Առաջին կոչի մեջ կոնֆերանսն իր գոհունակությունն էր հայտնում «միջազգային լարվածության թուլացման համար, որպես անհրաժեշտ պայման՝ ստեղծելու արդար և խաղաղ մի աշխարհ» և հրավիրում էր «բոլոր ժողովուրդներին լարվածության թուլացումը տարածելու աշխարհի բոլոր շրջաններում, այն նպատակով, որ քաղաքական լարվածության թուլացմանը հետևի ռազմական և տնտեսական լարվածության թուլացումը և այդպիսով լարվածության թուլացումը դառնա անշրջելի»: Կոնֆերանսի մասնակիցները խոնարհաբար դիմում էին նաև բոլոր կառավարություններին, որպեսզի «ազդու միջոցներ ձեռնարկեն՝ նվազեցնելու ռազմական բյուջեները, կրճատելու զենքերի արտադրությունն ու վաճառքը և այնպես անելու, որ նյութական ռեսուրսները և մարդկային ուժերն օգտագործվեն ի շահ համայն մարդկության բարօրության և երջանկության: Պատերազմը և ռազմական նախապատրաստությունները խորթ են ոգեկան կարգի արժեքներին, պատերազմը կործանում է մարդու բարոյական հիմքերը»:

Կոչը անկեղծորեն ողջունում է «զինաթափման վերաբերյալ համաշխարհային կոնֆերանս հրավիրելու գաղափարը՝ մեծ ու փոքր, ջերմամիջուկային զենք ունեցող և չունեցող բոլոր պետությունների, ինչպես նաև ոչ կառավարական կազմակերպությունների մասնակցությամբ»:

Հաստատելուց հետո, թե աշխարհի զանազան մասերում դեռևս գոյություն ունեն պատերազմի օջախներ, կոչի հեղինակները նշում են. «Մենք համոզված ենք, որ կայուն խաղաղության հաստատման համար անհրաժեշտ են տնտեսական արդար հարաբերություններ ինչպես պետությունների ներսում, այնպես էլ նրանց միջև: Մենք ցավում ենք այն փաստի համար, որ քաղաքական ապագաղութացումը դեռևս ճանապարհ չի բացել դեպի ժողովուրդների և պետությունների տնտեսական անկախությունը»:

Կրոնական գործիչներին և հավատացյալներին ուղղված կոչը շեշտը դնում է աշխարհի կրոնների միջև համագործակցության կարևորության վրա՝ ի խնդիր խաղաղության պաշտպանության գործի: «Մեր կրոնական տարակարծությունները մեզ չեն անջատում միմյանցից, որովհետև մեր բարոյական մտահոգությունները նույնն են. ամբողջ մարդկության բարօրության նկատմամբ մեր զգացած պատասխանատվության մեջ մենք գտնում ենք հասարակաց մի գետին»: Կոչն ընդգծում է, որ կրոնական գործիչները պետք է նպաստեն հանրային կարծիքի ստեղծմանը՝ ընդհանուր և ամբողջական զինաթափման համար: «Մարդկության ճակատագիրը ջերմամիջուկային աղետի մշտական սպառնալիքի տակ է: Մինչ մարդկության երկու

երրորդ մասը ապրում է կիսաքաղց վիճակում, աշխարհի պետությունները վատնում են տարեկան ավելի քան 300 միլիարդ դոլար պատերազմի և սպառազինությունների համար»:

Վերոհիշյալ կոչը շեշտում է նաև ոչ կառավարական կազմակերպությունների դերի աճող նշանակությունը՝ «ազդելու հանրային կարծիքի վրա, պայքարելու ընդդեմ կեղծ պրոպագանդայի և փոխելու կառավարությունների քաղաքականությունը հօգուտ բոլոր ժողովուրդների գերագույն շահերի»:

Կոնֆերանսը պարտակցություն դրեց Գործադիր նախագահության վրա՝ լայնորեն տարածելու ներկա ժողովի աշխատանքի արդյունքները և ապահովելու, որ կյանքի կոչվեն նրա գաղափարներն ու եզրակացությունները:

Սրանով կրոնական գործիչների համաշխարհային կոնֆերանսն ավարտեց իր աշխատանքները և հրապարակեց համապատասխան Հաղորդագրություն:

Մոսկվայի սույն կոնֆերանսը արժեքավոր մի ներդրում հանդիսացավ կայուն խաղաղության, զինաթափման և ժողովուրդների միջև արդար հարաբերությունների հաստատման համար մղվող պայքարի ճանապարհի վրա:

Նույն օրը, ժամը 11.30-ին, կոնֆերանսը ղեկավարող կոմիտեն կազմակերպեց մամուլի ասուլիս սովետական և արտասահմանյան թերթերի թղթակիցների համար:

Ժամը 14-ին Նորին Սրբություն Պիմեն Պատրիարքը, հանուն ռուս պրավոսլավ եկեղեցու, «Արբատ» ռեստորանում կազմակերպեց ողջերթի ընդունելություն, որին ներկա եղան շուրջ 1500 հրավիրյալներ: Ընդունելության ընթացքում փոխանակվեցին ճառեր:

Կոնֆերանսի մասնակիցները իրենց ազատ ժամերին հնարավորություն ունեցան Մոսկվայում այցելելու տեղական եկեղեցիներ և կրոնական այլ կազմակերպություններ և ծանոթանալու նրանց կյանքին ու գործունեությանը:

Կոնֆերանսի մասնակիցները Մոսկվայի կոնսերվատորիայում ներկա եղան նաև ռուսական հոգևոր և սիմֆոնիկ երաժշտությանը նվիրված մի համերգի:

Կոնֆերանսի բոլոր պատգամավորները իրենց խոր երախտագիտությունն ու շնորհակալությունը հայտնեցին ռուս պրավոսլավ եկեղեցուն, Սովետական Միությունում գործող այլ եկեղեցիներին և կրոնական կազմակերպություններին իրենց նկատմամբ ցուցաբերված ջերմ և եղբայրական հյուրընկալության համար:

Այստեղ մասնավոր կարևորությամբ պետք է արձանագրել բոլոր պատգամավորների անվերապահ, եղբայրական ջերմ շնորհակալությունն ու երախտագիտությունը սովետական ժողովրդին նրա սրտաբաց և եղբայրական ընդունելության համար:

Հունիսի 11-ին կրոնական գործիչների համաժողովի բոլոր մասնակիցները հրաժեշտ տվեցին Մոսկվային և վերադարձան իրենց տեղերը, խաղաղության աստվածահաճո գործին ի նպաստ իրենց գործուն մասնակցությունը բերած լինելու ներքին մեծ գոհունակությամբ և ողջ աշխարհում բարի կամքի տեր միլիոնավոր մարդկանց հետ միասին խաղաղության արդար դատը պաշտպանելու վճռականությամբ:



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

Հունիսի 4-ին, առավոտյան ժամը 8.30-ին, Վեհափառ Հայրապետը մեկնեց Մոսկվա՝ մասնակցելու հունիսի 6—10 օրերին տեղի ունենալիք համակրոնական միջազգային համագումարին, որը նվիրված էր տևական խաղաղության, զինաթափման և ազգերի միջև արդար հարաբերությունների հաստատմանը:

Վեհափառ Հայրապետը Մայր տաճար իջավ եկեղեցական թափորով և, հաջող ուղևորության համար աղոթք կատարելուց հետո, մեկնեց Երևանի օդանավակայան Մայր Աթոռի միաբանության ուղեկցությամբ՝ տ. Հուսիկ եպիսկոպոսի գլխավորությամբ:

Օդանավակայանում Վեհափառ Հայրապետին ճանապարհեց և բարի երթ մաղթեց նաև ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Սարգիս Գասպարյանը:

Վեհափառ Հայրապետին դեպի Մոսկվա ուղեկցեց Գերագույն հոգևոր խորհրդի անդամ, Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանը:

Մոսկվայի օդանավակայանում Վեհափառ Հայրապետին դիմավորեցին վերոհիշյալ ժողովին մասնակցելու համար Մոսկվա ժամանած տ. Շահե արքեպ. Ա-հեմյանը, Մայր Աթոռի դիվանապետ տ. Արսեն եպս. Բերբերյանը, Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդական տեղապահ ու Մոսկվայի հայոց հոգևոր հովիվ տ. Տիրան վրդ. Կյուրեղյանը, ինչպես նաև Դամասկոսի հայոց առաջնորդ տ. Ոսկան ծ. վրդ. Գալբակյանը:

Մոսկվայի օդանավակայանում Հայոց Հայրապետին ողջունում և բարի գալուստ է մաղթում, հանուն Նորին Սրբության Ռուսաց Տ. Պիմեն Պատրիարքի, տ. Անտոնին միտրոպոլիտը՝ իր ուղեկիցներով:

Վեհափառ Հայրապետը և Իր շքախմբի անդամները առաջնորդվում են «Ուկրաինա» հյուրանոց:

Հունիսի 5-ին, կիրակի. Հիշատակ Եղիա մարգարեի: Մոսկվայի հայոց ս. Հարություն եկեղեցում պատարագում է տ. Արսեն եպս. Բերբերյանը: Ս. պատարագին ներկա է լինում նաև Վեհափառ Հայրապետը, Որը և քարոզում է «Հայր մեր»-ից առաջ՝ ողջունելով և օրհնելով եկեղեցում ներկա եղող հայ հավատացյալներին:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը խոսում է Իր՝ Մոսկվա ժամանման շարժառիթի մասին, որ է՝ մասնակցությունը համակրոնական միջազգային համագումարին՝ նվիրված տևական խաղաղության, զինաթափման և ազգերի միջև արդար հարաբերությունների հաստատմանը:

Վեհափառ Հայրապետն Իր խոսքի մեջ ջերմորեն ողջունում է այդ կոնֆերանսի հրավիրումը, որպես աշխարհում մնայուն խաղաղության հաստատման համար կարևոր մի նախաձեռնություն:

Հունիսի 6-ին Մոսկվայում բացվում է խաղաղության այդ կոնֆերանսը, որի աշխատանքներին մասնակցում է նաև հայ եկեղեցու պատվիրակությունը՝ Հայոց Հայրապետի գլխավորությամբ (տես այս մասին «Էջմիածին» ամսագրի սույն համարը, էջ 24—31):

Ժողովում Վեհափառ Հայրապետը հանդես է գալիս խաղաղության նվիրված բովանդակալից մեծ ճառով:

Հունիսի 11-ին, շաբաթ օրը, կեսօրից հետո, Մայր Աթոռ է ժամանում Վեհափառ Հայրապետը՝ ուղեկցությամբ տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանի և տ. Ուկան ծ. վրդ. Գալբակյանի:

Վեհափառ Հոր բարեհաճ կարգադրությամբ տ. Արսեն եպս. Բերբերյանը և տ. Տիրան վրդ. Կյուրեղյանը հովվական այցելություն են տալիս Ռոստովի և Զալդրի (Հյուսիսային Կովկաս) հայոց եկեղեցիներին: Մայր Աթոռի ներկայացուցիչներին սիրալիր ընդունելություն են ցույց տալիս Ռոստովի քաղաքային գործադիր կոմիտեի նախագահ Հակոբ Բլուզյանը, Ռոստովի հայոց հոգևոր հովիվ տ. Գրիգոր ավագ քհն. Տերտերյանը, Զալդրի քաղաքային գործադիր կոմիտեի նախագահ Մ. Սամվելյանը և հոգևոր հովիվ տ. Վահան քհն. Դարբինյանը:

Կիրակի օրը Ռոստովի հայոց ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում ս. պատարագ է մատուցում տ. Արսեն եպս. Բերբերյանը և ներկայացնում թեմի առաջնորդական նոր փոխանորդ տ. Տիրան վրդ. Կյուրեղյանին հավատացյալներին, հաղորդելով նաև Հայոց Հայրապետի ողջույնը և օրհնությունը:

Հունիսի 13-ին Մայր Աթոռ են ժամանում տ. Արսեն եպս. Բերբերյանը և տ. Տիրան վրդ. Կյուրեղյանը:



Բույր եկեղեցիներ

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սույն թվականի հունիսի 18-ին Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետը, ռումին օրթոդոքս եկեղեցու հրավերով, ընկերակցությամբ Մայր Աթոռի դիվանապետ գերշ. տ. Արսեն եպս. Բերբերյանի, մեկնեց Բուխարեստ՝ հանուն հայ եկեղեցու մասնակցելու ռումին օրթոդոքս եկեղեցու նորընտիր Հովվապետ, Նորին Սրբություն Տ. Յուստին Պատրիարքի գահակալության հանդիսությանը:

Նույն օրը, երեկոյան ժամը 18.30-ին, նորընտիր Պատրիարքը պատրիարքարանի դահլիճում ընդունեց Հայոց Հայրապետին և բարի գալուստ մաղթեց Նրան:

Հունիսի 19-ին պատրիարքական Մայր տաճարում, բազմաթիվ քույր եկեղեցիների պատվիրակությունների և պետական պաշտոնական անձնավորությունների ներկայությամբ, տեղի ունեցավ Տ. Յուստին Պատրիարքի գահակալության հանդիսավոր արարողությունը: Այս առթիվ Նորին Սրբությունը, հանուն հայ եկեղեցու, հանդես եկավ ողջույնի ուղերձով՝ շնորհավորելով նորընտիր Պատրիարքին և Իր խոսքի մեջ ընդգծելով հայ և ռումին եկեղեցիների սերտ բարեկամությունը, ինչպես անցյալում, այնպես էլ մեր օրերին: Հայոց Հայրապետի ուղերձի ընթերցումից հետո երկու հոգևոր Պետերի միջև փոխանակվեցին հուշանվերներ:

Նույն օրը «Աթենե Պալաս» հյուրանոցի դահլիճում ռումին եկեղեցու կողմից տրվեց պաշտոնական ճաշկերույթ՝ ի պատիվ գահակալության հանդիսություններին ժամանած հյուրերի:

Ճաշկերույթին ներկա էին ռումին կառավարության բարձրաստիճան ներկայացուցիչներ և այլ պաշտոնական անձինք:

Երեկոյան ժամը 19-ին, Բուխարեստի պետական ֆիլհարմոնիայի դահլիճում, հյուրերի պատվին կազմակերպվեց հոգևոր համերգ՝ պատրիարքարանի երգչախմբի կատարմամբ:

Հունիսի 20-ին, երկուշաբթի օրը, երեկոյան ժամը 19-ին, Վեհափառ Հայրապետը «Հրաշափառ»-ով մուտք գործեց Բուխարեստի հայոց ս. Հրեշտակապետաց եկեղեցի, ուր թեմական առաջնորդ տ. Տիրայր եպիսկոպոսը ողջունեց և բարի գալուստ մաղթեց Հայոց Հայրապետին՝ հանուն ռումինահայ հավատացյալների:

Այնուհետև Նորին Սրբությունը Իր հայրապետական օրհնությունը բաշխեց ներկաներին:

Ժամը 20-ին հայոց առաջնորդարանի դահլիճում տեղի ունեցավ հյուրասիրություն ի պատիվ Վեհափառ Հայրապետի:

Հունիսի 22-ին Նորին Սրբությունը վերադարձավ Մայր Աթոռ՝ ընկերակցությամբ Ռումինիայի և Բուլղարիայի հայոց թեմերի թեմական առաջնորդ տ. Տիրայր սրբազանի և Մայր Աթոռի դիվանապետ տ. Արսեն եպս. Բերբերյանի:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Ս. Էջմիածին,
24 հունիսի 1977 թ.

ՀՄՐ. 147 24 փետրվար 1977 թ.

ՀՈՐ ԵՎ ՈՐԴՈՒ ԴԱՏԱՊԱՐՏԵԼԻ ԱՐԱՐՔԸ

ՎԵՐԱՊԱՏՎԵԼԻ ՍԱՐԳԻՍ ԿՈՆՍՈՒԼՅԱՆԻՆ

ՓԱՍԱՏԵՆԱ

Վեհափառ Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետը ծանոթանալով 3 փետրվար 1977 թվակիր Ձեր նամակի բովանդակությանը, թելադրեց մեզ Ձեզ գրել հետևյալները.

ա. Այս տարվա փետրվարի 8-ին միաժամանակ ստացվեցին ամերիկաբնակ վերապատվելիներ՝ դոկտ. Զուփուրյանի և Ս. Դուրյանի հեռագրերը հետևյալ բովանդակությամբ՝

«Մենք խորապես ցավում ենք Ձեր որոշման համար Տիրայր Կոնսուլյան քահանայի նկատմամբ: Կոչ ենք անում Ձեզ պահպանել նրան իր այժմյան դիրքում, մինչև որ նա կարողանա մեկնել երկրից»:

Այդ հեռագրերը զարմանք պատճառեցին մեզ: Անմիջապես հեռախոսով կապվեցինք Թբիլիսիի հայոց թեմական առաջնորդ տ. Գևորգ եպիսկոպոսի հետ հետաքրքրվելով Տիրայր քահանա Կոնսուլյանի մասին, պատասխան ստանալով, թե ոչ մի նոր կացություն չկա նրա կյանքում, որ բնականոն պայմանների մեջ նա շարունակում է իր պաշտոնը իբրև ծիսակատար քահանաներից մեկը Թբիլիսիի հայոց առաջնորդանիստ ս. Գևորգ եկեղեցում: Որով Զուփուրյան և Դուրյան վերապատվելիներին ուղարկեցինք հետևյալ պատասխան հեռագրերը փետրվարի 9-ին:

«Վեհափառ Հայրապետը շատ վշտացած է, որ սուտ տեղեկություններ հաղորդված են Ձեզ: Տիրայր Կոնսուլյան քահանան Թիֆլիսում պաշտոնավարում է բնական պայմաններում, գնահատված հավատացյալների, համայնքի և առաջնորդ սրբազանի կողմից: Նա ձեռնադրված է Թիֆլիսի սուրբ Գևորգ եկեղեցու վրա և ուխտած ընդմիշտ ծառայելու այնտեղ: Նրա պաշտոնից հրաժարվելու մասին Մայր Աթոռս ոչինչ չգիտե: Ձեր տեղեկությունները անհիշտ են»:

Բայց, որպեսզի առավել ծանոթանանք հարցին, տ. Տիրայր քահանային հրավիրեցինք Մայր Աթոռ նրանից լուսաբանություն ուզելու համար: Տ. Տիրայր Կոնսուլյան քահանան ներկայացավ Մայր Աթոռ փետրվարի 9-ին: Դիվանատան մեջ նրա հետ խոսեցինք տ. Կոմիտաս արքեպիսկոպոսն ու ես իբրև դիվանապետ: Տ. Կոմիտաս արքեպիսկոպոսը նախկին առաջնորդն է եղել Թբիլիսիի և տ. Տիրայր Կոնսուլյանին քահանա ձեռնադրողը:

Կարճ խոսակցությունից պարզվեց, որ տ. Տիրայր Կոնսուլյան քահանան գոհ է իր աշխատանքից և մտադիր չէ իր ծառայության ուխտը դրժելու և լքելու իր հոտը, բայց միայն իր հայրն է՝ վերապատվելի Կոնսուլյանը իր վրա ճնշում գործում և հրավիրում Ամերիկա: Տ. Տիրայր քահանան լսելով մանավանդ տ. Կոմիտաս արքեպիսկոպոսի հորդորը, վերջնապես խոսք էր տվել, թե կմնա իր պաշտոնի վրա և հաջորդ օրն իսկ Թբիլիսիից հեռախոսով կհայտնի հորը՝ վերապատվելի Կոնսուլյանին, իր պաշտոնի վրա մնալու որոշման մասին: Այսպիսով թվաց, թե ամեն ինչ հստակ էր և բաջալերական: Սակայն մեծ եղավ մեր հուսախաբությունը, երբ երկու օր հետո նույն տ. Տիրայր քահանան հեռագրեց Մայր Աթոռ փետրվարի 11-ին, հետևյալը.

«Մեր հանդիպումից հետո հեռախոսային խոսակցություն տեղի ունեցավ իմ

և հորս միջև: Իմ խիղճը թույլ չի տալիս հակառակ լինել հայրական ցանկությանն: Վերջնականապես որոշել եմ ընտանիքով մեկնել հորս մոտ մշտական բնակության»:

Պարզ եղավ մեզ համար, որ Դուք, վերապատվելի, կրկին ազդել էիք Ձեր որդու վրա և պարտադրել նրան, որ ուխտադրուժ լինի և լքի իր համայնքը: Անհավատալի և ցավալի են այս բոլոր իրողությունները: Դուք ինչպե՞ս կարող եք հաշտեցնել Ձեր հոգևորականի խիղճը նման վերաբերմունքի հետ: Եթե հայրական կարոտի հարց է, ապա Դուք ինչո՞ւ լքեցիք Ձեր որդուն և ձեր հոտը Երևանում և այժմ ինչո՞ւ չեք վերադառնում մայր հայրենիք: Եվ Դուք շատ լավ գիտեք, որ Ձեր մեկնումով տուժեց, այո, զգալի չափով տուժեց ձեր ավետարանական եկեղեցին Երևանում: Եվ հիմա ցանկանում եք, որ Ձեր ուխտադրուժ օրինակին հետևի նաև Ձեր որդին, որ ձեռնադրված է Թբիլիսիի ս. Գևորգ եկեղեցու վրա և ուխտած այնտեղ ծառայելու ընդմիշտ և ուր նա լավ է աշխատում, սիրված է հավատացյալների կողմից: Ի սեր Աստուծո, անդրադարձեք, թե ի՞նչ եք անում: Մի օր ի՞նչ պատասխան պիտի տաք Պողոս առաքյալին: Եվ դեռևս բարոյական ծանրակշիռ մի հարց էլ կա, որ պետք է ստիպի Ձեր որդուն չհեռանալու իր բնակած երկրից, որպեսզի չլքի իր առաջին կնոջից ունեցած իր օրինավոր երեք զավակները և այսպիսով չգլորվի իր հարազատ զավակները ուրանալու հակաքրիստոնեական ու հակամարդկային մեղքի մեջ: Սիրելի վերապատվելի, խղճացեք Ձեր որդուն, մի կործանեք նրան Աստուծո և մարդկանց դատաստանի առաջ:

Վեհափառ Հայրապետի վճռական որոշումն է՝ փորձել ամեն գնով համոզել տ. Տիրայր քահանային, որ մնա իր պաշտոնի վրա, բայց եթե նաև նրա քրիստոնեական խիղճը մթագնի Ձեր ճնշումների հետևանքով, այդ դեպքում պիտի գործադրվի Գերագույն հոգևոր խորհրդի որոշումը, Հայաստանից իրենց եկեղեցին ու ժողովուրդը լքող հոգևոր պաշտոնյաների նկատմամբ, այսինքն հայրապետական վճիռով պիտի տնօրինվի նրա կարգալուծումը համաձայն հայ եկեղեցու կանոնների:

«Բայց մեք ոչ եթէ երկմտութեամբ եմք ի կորուստ, այլ հաւատովք ի փրկութիւն» (Եբր. Ժ 39):

Սիրով ի Քրիստոս՝

ԴԻՎԱՆԱՊԵՏ՝
ԱՐՍԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԵՐԲԵՐՅԱՆ

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Մայր Աթոռ ս. Էջմիածնի Դիվանը այսու լիազորված է ծանուցելու ի գիտություն Հայաստանյայց եկեղեցու նվիրապետական Աթոռներին և թեմական եկեղեցական իշխանություններին, որ Ամենայն Հայոց Հայրապետի 26 հունիս 1977 թ. վճռով կարգալույծ է արված վրահայոց թեմից տ. Տիրայր քահանա Կոնսուլյանը, որը 1971 թվականին ձեռնադրված լինելով Թբիլիսիի սուրբ Գևորգ եկեղեցու վրա, այժմ դրժել է իր ծառայության ուխտը և լքել իրեն վստահված հոտը, առանց հարգելի պատճառի և առանց հոգևոր վերին իշխանությունների արտոնության և հակառակ վերջին տասը ամիսների ընթացքում բազմիցս նրան եղած հորդորներին և նախազգուշացումներին վրահայոց թեմական եպիսկոպոսի և Մայր Աթոռի կողմից:

Վերոհիշյալ կարգազուրկ քահանան դասվում է աշխարհականների շարքը իր նախկին՝ Ժիրայր Կոնսուլյան անունով:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Ս. Էջմիածին,
28 հունիս 1977 թ.



ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Հունիսի 1-ին, չորեքշաբթի.—Այսօր ուխտավորաբար Մայր Աթոռ ժամանեց Անգլիայի հայոց հայրապետական պատվիրակ տ. Ներսես եպս. Պոզապալյանը, որը մայիսի 22—29 օրերին մասնակցել էր Անթիլիասում Մեծի Տանն Կիլիկիո աթոռակից-կաթողիկոսի ընտրության և օծման հանդիսություններին՝ որպես Մայր Աթոռի պատգամավոր:

* * *

Նույն օրը, երեկոյան ժամը 20-ին, Վեհարանի հանդիսությանց դահլիճում միաբանները առիթը ունեցան դիտելու 1976 թվականի սեպտեմբերի վերջերին Մայր Աթոռում կատարված սրբալույս մեռոնի օծնության և Վեհափառ Հայրապետի գահակալության 20-ամյակի հանդիսություններին նվիրված գունավոր կինոժապավենը:

Շարժապատկերը դիտեցին նաև Մայր Աթոռում գտնվող պոլսահայ ուխտավորները:

* * *

Հունիսի 3-ին, ուրբաթ.—Այսօր, երեկոյան ժամը 19-ին, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվեց Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը, որին հրավիրվել էր ներկա լինելու տ. Ներսես եպս. Պոզապալյանը: Վեհափառ Հայրապետը հատնեի ժողովի ողջունեց տ. Ներսես եպիսկոպոսի ներկայությունը: Ապա խոսք առավ տ. Ներսես եպիսկոպոսը և համառոտակի, բայց ամբողջական ձևով զեկուցեց մայիսի 22—29 օրերին Անթիլիասում կատարված Մեծի Տանն Կիլիկիո աթոռակից-կաթողիկոսի ընտրության և օծման հանդիսությունների մասին, որոնց նա մասնակցել էր որպես Մայր Աթոռի պատգամավոր:

Գերագույն հոգևոր խորհուրդը իր գոհունակությունը արձանագրեց տ. Ներսես եպիսկոպոսի շահեկան զեկուցման առիթով:

*
* *

Հունիսի 5-ին, Կիրակի.—Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Նշան քհն. Բեյլերյանը:

*
* *

Հունիսի 6-ին, երկուշաբթի.—Տօն սրբոց կուսանացն Հռիփսիմեանց.

Այսօր ս. Հռիփսիմե տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հովսեփ քհն. Հակոբյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում՝ «Զի մահուամբ ձերով մեզ նանապարհ հորդեցիք. ելանել ամենայն մարդոյ առ Աստուած» (Շարական) բնաբանով:

Հավարտ ս. պատարագի կատարվում է հոգեհանգստյան մասնավոր պաշտոն՝ վանքի վերակառուցման բարերարներ Հյուսիսյան և Մարտիկյան գերդաստանների ննջեցյալների հիշատակին:

*
* *

Հունիսի 7-ին, երեքշաբթի.—Տօն սրբոց կուսանացն Գայիանեանց.

Այսօր ս. Գայանե վանքի տաճարում ս. պատարագ է մատուցում վանքի վանահայր տ. Գուրգեն քհն. Աշուրյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզում է տ. Արտակ քհն. Սիմոնյանը՝ «Առաքեա՛ Տէր, զլոյս քո և զճշմարտութիւն քո, զի առաջնորդեսցեն ինձ և հանցեն զիս ի լեառն սուրբ և ի յարկս քո» (Սաղմ. ԽԲ 3) բնաբանով:

Հավարտ ս. պատարագի կատարվում է հոգեհանգստյան պաշտոն՝ «վասն համօրէն ննջեցեալ կաթողիկոսաց, եպիսկոպոսաց, վարդապետաց, սարկաւագաց և ամենայն ուխտի մանկանց Հայաստանեայց եկեղեցւոյ»:

*
* *

Հունիսի 9-ին, հինգշաբթի.—Տօն սրբոյն Յովհաննու Կարապետին և Աթանագինեայ եպիսկոպոսին.

Եկեղեցական հանդես ի վանս ս. Շողակաթի.

Այսօր, օրվա տոնի առիթով, վանքի եկեղեցում ս. պատարագ է մատուցում տ. Գրիգոր քհն. Փանոսյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում՝ «Տէր լոյս իմ և կեանք իմ, ես յումմէ՞ երկեաց. Տէր ապաւէն կենաց իմոց, ես յումմէ՞ դողացայց» (Սաղմ. ԻԶ 1) բնաբանով:

Հավարտ ս. պատարագի կատարվում է հոգեհանգիստ՝ վանքի վերանորոգության բարերար, նորոգ հանգուցյալ Սուրեն Քալենտերյանի հիշատակին:

*
* *

Հունիսի 11-ին, շաբաթ.—Տօն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ ելն ի Վիրապէն.

Այսօր Մայր տաճարում, Իջման ս. սեղանի վրա, պատարագ է մատուցում ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Երուսաղեմի հայոց ս. Հակոբյանց վանքի միաբան տ. Ռուբեն վրդ. Հովակիմյանը:

«Հայր մեր»-ից առաջ քարոզում է պատարագիչ վարդապետը՝ «Ուրախ եղե ես ոյք ասէին ցիս ի տուն Տեառն երթիցուք մեք» (Սաղմ. ՃԻԱ 1) բնաբանով:

*
* *

Հունիսի 12-ին, կիրակի.—Տօն կաթուղիկէ ս. Էջմիածնի.

Այսօր, օրվա մեծ տոնի առիթով, Մայր տաճարում, Ավագ սեղանի վրա, հանդիսավոր պատարագ է մատուցում Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզում է Վեհափառ Հայրապետը՝ «Էջ Միածինն ի Հօրէ և լոյս փառաց ընդ նմա» շարականի բնաբանով՝ վեր հանելով հայ եկեղեցու կյանքում և հայ ժողովրդի պատմության մեջ Մայր Աթոռ ս. Էջմիածնի կատարած հոգևոր, մշակութային, հայրենասիրական լուսավոր առաքելության մասին, ս. Գրիգոր Լուսավորչի օրերից մինչև մեր ժամանակները:

Հավարտ ս. պատարագի, Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ, կատարվում է Հայրապետական մաղթանք:

*
* *

Հունիսի 14-ին, երեքշաբթի.—Այսօր, առավոտյան, հոգևոր ճեմարանի ուսանողությունը տեսչի և դասախոսական կազմի գլխավորությամբ քառօրյա ուխտագնացության մեկնեց Աղց-Արշակունիների դամբարան, Թալինի, Մաստարայի, Հառիճի, Մարմաշենի, Օձունի, Հնեվանքի, Սևանի, Հաղբատի և Քոբայրի վանքեր և Հայաստանի հյուսիսային շրջանների պատմական հուշարձաններ ու քաղաքներ: Հունիսի 17-ին ուսանողությունը վերադարձավ Մայր Աթոռ՝ անջնջելի տպավորություններով:

*
* *

Հունիսի 19-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում՝ «Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ» (Առակք Ա 1) բնաբանով:

Հավարտ ս. պատարագի կատարվում է հոգեհանգստյան պաշտոն՝ բեյրութահայ վաստակավոր ուսուցիչ և հասարակական գործիչ, նորոգ հանգուցյալ Գրիգոր Պողարյանի հիշատակին:

*
* *

Հունիսի 25-ին, շաբաթ.—Գիւտ Նշխարաց սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում ուխտավորաբար Փարիզից ժամանած Մայր Աթոռիս միաբան տ. Գրիգորիս վրդ. **Բունիաթյանը:**

* *
*

Հունիսի 26-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում ուխտավորաբար ս. Էջմիածին ժամանած Դամասկոսի հայոց առաջնորդ տ. Ոսկան ծ. վրդ. Գալբակյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում՝ «Արդ եկայք հաւատացեալք և կոչեցեալք յորդեգրութիւն սրբոյն Գրիգորի» (Շարական) բնաբանով:

*
* *

Հունիսի 29-ին չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան ժամը 20-ին, Վեհարանում տեղի ունեցավ Մայր Աթոռի միաբանների հերթական հավաք, որի ընթացքում Վեհափառ Հայրապետը ողջերթի հայրական խոսք է ասում տ. Հակոբ աբղ. Գրիգնանյանին, որը ուսանելու պիտի մեկնի Գերմանիա:

Ապա՝ «Կանտի փիլիսոփայական հայացքների տեսությունը» թեմայով իր երրորդ զեկուցումն է կարդում ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող աթենաբնակ Ստեփանոս Չագալյանը:

Դասախոսությանը ներկա էր նաև Վեհափառ Հայրապետը:

*
* *

Հունիսի 30-ին, հինգշաբթի.—Տօն Սրբոց Թարգմանչացն մերոց Սահակայ և Մեսրովպայ.

Այսօր Օշական գյուղում, ս. Մեսրոպ Մաշտոցի աճյունն ամփոփող եկեղեցում, ս. պատարագ է մատուցում ուխտավորաբար ս. Էջմիածնում գտնվող ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմի Հայ եկեղեցական երիտասարդաց կազմակերպության ղեկավար և Ուեստչեստրի հոգևոր հովիվ տ. Գարեգին քհն. Գասպարյանը:

«Հայր մեր»-ից առաջ պատարագիչը հայրենաշունչ և ոգևորիչ քարոզ է խոսում՝ «Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ» (Առակ. Ա 1) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր նաև Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանը:

Ս. պատարագի երգեցողությունը կատարվում է ամերիկահայ երիտասարդաց կազմակերպության մասնակցությամբ:

Հավարտ ս. պատարագի Վահան Ամատունի մեծ իշխանի դամբարանի վրա կատարվում է հոգեհանգստյան պաշտոն՝ ինչպես հայրենանվեր իշխանի, այնպես էլ այս եկեղեցու վերակառուցման բարերարներ Հայկ և Թորգոմ Ղազարոսյանների հիշատակին:



ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Մայիսի 28-ին, շաբաթ օրը, երեկոյան ժամերգությունից հետո, Մայր տաճարում քահանայական ձեռնադրության կոչման արարողություն է կատարվում՝ ձեռամբ Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանի:

Հոգևոր ճեմարանից 1960 թվականի շրջանավարտ Սարգիս սրկ. Սարգսյանը և Վազգեն սրկ. Աստուրյանը, որը 1976—1977 ուսումնական տարում իր հայագիտական ուսումը կատարելագործում էր հոգևոր ճեմարանում, քահանայական ձեռնադրություն ընդունեցին ըստ Ձեռնադրության Մաշտոցի:

Հնչում է «Նայեաց ի մեզ» շարականը: Ավանդատնից դեպի Իշման ս. սեղանն է առաջնորդվում ձեռնադրող սրբազանը, որին հետևում են նորընծաներ Սարգիս և Վազգեն սարկավագները:

Խարտավիլակի պաշտոնը կատարում է տ. Հակոբ աբեղա Գրլլենյանը:

Հանդիսավոր հայտարարությամբ նորընծաները հանձն են առնում «ամենայն պատրաստութեամբ և առանց ձանձրանալոյ կալ ի պաշտօնն Աստուծոյ, և ոչ խափանել զգործն Աստուծոյ վասն մարմնաւոր գործոյ»:

Այս տեղի է ունենում նորընծաների ուղղափառ դավանության հրապարակային խոստովանությունը. «Ունիմք զդաւանութիւն ուղղափառ հաւատոյ... ընդ սուրբ Հայրապետսն...», և խոստանում են աշակերտել ու հետևել Հայաստանյայց եկեղեցու ուղղափառ հայրապետներին և վարդապետներին:

Մայիսի 29-ին, կիրակի. Հոգեգալուստ. առավոտյան ժամը 11-ին Մայր տաճարում սկսվում է ս. պատարագի արարողությունը: Պատարագում է Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը:

«Զի ողորմած և մարդասէր ես Աստուած» մաղթանքից հետո հնչում է «Այսօր Աստուածութիւնն զուարճանայ» ցնծալից շարականը և սկսվում Ձեռնադրության կարգը՝ Ավագ սեղանի առաջ:

Եկեղեցական թափորով Մայր տաճար է իջնում Վեհափառ Հայրապետը՝ ներկա լինելու ձեռնադրության հանդիսությանը:

Մայր տաճարի կամարների տակ հնչում է «Աստուածային և երկնաւոր շնորհ» հոգևորական կոչման հոգեզմայլ շարականը: Նորընծաները Ավագ սեղանի վրա դառնում են դեպի ժողովուրդը՝ վերամբարձ ձեռքերով, ի նշան աշխարհից իրենց հրաժարման: Այս երբ դեպի Ավագ խորանն են շրջվում, տ. Հուսիկ եպիսկոպոսն իր ձեռքերը խաչաձև դնում է նորընծաներից յուրաքանչյուրի գլխին և ասում. «Ես դնեմ զձեռս ի վերայ սորա և դուք ամենեքեան աղօթս արարէք, զի արժանի լիցի սա զաստիճան քահանայութեան, անարատ պահել առաջի սեղանոյ Տեառն Աստուծոյ»:

Հետո շարունակվում է ս. պատարագը մինչև «Ողջոյն տուք միմեանց» քարոզը: Նորընծաները օրհնությամբ ստանում են քահանայական փիլոն և պատարագչի զգեստներ:

Ձեռնադրության խորհուրդը հասնում է

Ջոնադրությունից մի պահ

իր լրումին, հոգևոր վերացման սրբազան բարձունքին, երբ ձեռնադրող սրբազանը քահանայական լրիվ զգեստներ հագած երկու նորընծաների ճակատն ու ձեռքերը օծում է սրբալույս մեռոնով և նրանց հոգեվորական նոր անուն շնորհում: Սարգիս սրկ. Սարգսյանը պահում է իր ավազանի անունը՝ Սարգիս, իսկ Վազգեն սրկ. Ասատուրյանը վերանվանվում է տ. Ավագ քահանա: Այնուհետև նորընծա քահանաներն իրենց առաջին օրհնությունն են տալիս ժողովրդին Ավագ սեղանից:

Օծման արարողության ավարտին, օրվա խորհրդի և շնորհաբաշխության առթիվ, հայրական գորովով լցված խրատական է խոսում Վեհափառ Հայրապետը՝ «Եւ ամենեքեան լցան Հոգւովն Սրբով» բնաբանով, վեր հանելով նախ Հոգեգալստյան տոնի հոգևոր, պատմական նշանակությունը քրիստոնեական առաջին եկեղեցու կազմակերպչական գործունեության և համաշխարհային քրիստոնեական առաքելության բնագավառում: Այնուհետև Հայոց Հայրապետը բարեմաղթում է, որ նորընծաները, որպես հայ եկեղեցու նվիրյալ և գիտակից սպասավորներ, իրենց ապագա հոգևոր, եկեղեցանվեր, հայրենասիրական առաքելության մեջ միշտ տոգորված լինեն ս. Հոգու զորությամբ և մեր նախնյաց վերանորոգիչ հավատքով:

Նույն օրը, երեկոյան ժամերգության ժամանակ, Մայր տաճարում կատարվում է վեղարի տվչության կարգ նորընծա տ. Ավագ աբեղայի:

Համապատասխան աղոթքներով և ս. Գրական ընթերցումներով տ. Հուսիկ եպիսկոպոսը նորընծայի գլխից հանում է հին մարդը խորհրդանշող սարկավագական «ջբրունը» և այն փոխարինում կուսակրոն քահանայությունը խորհրդանշող հայ եկեղեցու վեղարով:

Նորընծա տ. Ավագ աբեղա Ասատուրյանը և նորընծա տ. Սարգիս քհն. Սարգսյանը իրենց քահանայական ձեռնադրության քառասունքը կանցկացնեն Մայր Աթոռում, հոգևոր վարժության ներքո լուսարարապետ տ. Հուսիկ եպիսկոպոսի:

Տ. ԱՎԱԳ ԱԲԵՂԱ ԱՍԱՏՈՒՐՅԱՆ

Նորընծա տ. Ավագ աբեղան ծնվել է Բաղդադում 1942 թվականին. ավազանի անունով՝ Վազգեն:

Նա իր նախնական կրթությունն ստացել է տեղի հայոց Թարգմանչաց և Սվաճյան ազգային վարժարանում: Ապա հաճախել է Հիսուսյան քոլեջ և Ալ-Հիքմա համալսարան: 1968-ին մեկնել է Միացյալ Նահանգներ՝ իր ուսումը կատարելագործելու համար, և սովորել ս. Փրոքոփիոս քոլեջում ու, 1970 թվականին այն ավարտելով փայլուն հաջողությամբ, ստացել է «Պսակավոր Արվեստից» տիտղոս: Ապա հետևել է Նյու Հեյեան Թուրեյն համալսարանի փիլիսոփայական դասընթացներին և վկայվել փիլիսոփայական մագիստրոսի գիտական աստիճանով 1971 թվականին:

1973 թվականից նա հաճախել է Նյու Յորքում ս. Վլադիմիր օրթոդոքս համալսարան և այն ավարտել 1976-ին՝ «Աստվածաբանական մագիստրոս»-ի տիտղոսով՝ ավարտական ներկայացնելով «Ս. Գրիգոր Նարեկացին որպես միստիկ»:

1975-ին սարկավագ է ձեռնադրվել Նյու Յորքի հայոց ս. Վարդան եկեղեցում՝ ձեռամբ թեմական առաջնորդ տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանի:

1976-ի սեպտեմբերին ժամանում է Մայր Աթոռ. նա, իբրև ազատ ուսնդիր, հետևում է հայագիտական և հայ եկեղեցագիտական դասընթացներին հոգևոր ճեմարանում և միևնույն ժամանակ անգլերեն լեզու դասավանդում:

1977-ի մայիսի 29-ին, Հոգեգալստյան տոնի օրը, ձեռնադրվում է կուսակրոն քահանա:

Տ. ՍԱՐԳԻՍ ՔԱՀԱՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ

Նորընծա տ. Սարգիս քահանան ծնվել է 1939 թվականին Սիրիայի Հալեպ քաղաքում: Նախնական կրթությունը ստացել է տեղի Կիլիկյան հայոց վարժարանում: Ապա երկու տարի սովորել է Կիպրոսի Մելքոնյան կրթական հաստատությունում: 1956-ին ընդունվել է ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան, 1957-ին տ. Սահակ արքեպիսկոպոսի ձեռամբ սարկավագ է ձեռնադրվել: 1960-ին մեծ հաջողությամբ ավարտել է հոգևոր ճեմարանը և, իր աստվածաբանական ուսումը շարունակելու համար, մեկնել ԱՄՆ և ընդունվել Քեմբրիջ քաղաքի եպիսկոպոսական աստվածաբանական դպրոց: Մեկ տարի հետո փոխադրվել է Նյու Յորքի «Ջենքրոլ Թեոլոջիկլ» սեմինարիա և այն ավարտել 1965-ին:

1965—1967 թթ.՝ Պրովիդենսի հայոց եկեղեցու հովվի օգնական: Այնուհետև, 1967-ին Սան Ֆրանցիսկոյի հայոց ս. Հովհաննես եկեղեցում ծառայելով, միաժամանակ հետևել է քաղաքային համալսարանում գրադարանային գիտության և 1969-ին հեռակա կարգով ավարտել Չիկագոյի «Գրրիրը ինստիտուտ»-ի անգլերեն լեզվի բաժինը:

1973-ին վերադառնում է Մայր Աթոռ և նշանակվում հոգևոր ճեմարանի ավագ վերակացու և դասախոս:

Նորընծա տ. Սարգիս քհն. Սարգսյանը և տ. Ավագ աբեղա Աստուրյանը գտնվում են իրենց հոգևոր և մտավոր ուժերի զարգացման խոստումնալից շրջանում: Երկուսն էլ պատրաստված և իրենց հոգևոր կոչման բարձրության գիտակցություն ունեցող նորընծաներ են:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ջերմորեն շնորհավորում է նրանց քահանայական ձեռնադրությունը այն հուսադրիչ լավատեսությամբ, որ նրանք իրենց ապագա եկեղեցանվեր ծառայությամբ կարդարացնեն Հայոց Հայրապետի բարձր վստահությունը և կդառնան «մշակք առանց ամօթոյ» Տիրոջ այգու ծառայության մեջ, ինչպես նաև հայ եկեղեցու հոգևոր սպասավորության նվիրական ասպարեզում:







ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Հունիսի 12-ին, երկուշաբթի օրը, ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, հոգևոր ճեմարանի հանդիսությանց դահլիճում տեղի ունեցավ 1976—1977 ուսումնական տարվա ամավերջի հանդիսությունը, որին ներկա էին Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը, ս. Գեղարդ վանքի վանահայր տ. Վահան եպս. Տերյանը, Մայր Աթոռի միաբանությունը, ճեմարանի դասախոսական կազմը և ուսանողությունը, մայրավանքի պաշտոնեությունը և այլ հրավիրյալներ:

Սկսվում է հանդիսությունը թիվ արտասանված Տերունական աղոթքով, որին հաջորդում է Հայաստանի պետական հիմնի նվագը:

Հոգևոր ճեմարանի փոխտեսուչ տ. Անանիա վրդ. Արաբաջյանը կատարում է ամավերջի հանդիսության բացումը:

Այնուհետև ճեմարանի երգչախումբը կատարում է գեղարվեստական բաժնի ծրագիրը՝ բաղկացած խմբերգերից, արտասանություններից և մենանվագներից:

Երգչախումբը ոգևորությամբ կատարում է «Ճեմարանի քայլերգ»-ը, «Էջ Միածինն ի Հօրէ», «Որք զարդարեցին» շարականները, «Հոդալլո», «Հոյ Նարտ» (Կոմիտաս—Համբարձում Բերբերյան), «Մայր տաճարին» (խոսք և երաժշտություն՝ Սամվել Գևորգյանի), «Ալագյազ և քեզի մեռնիմ» (Կարա-Մուրզա) խմբերգերը:

Գ լսարանի ուսանող Բյուզանդ սրկ. Գալայջյանը, ի դեմս հոգևոր ճեմարանի ուսանողության, կարդում է Հայոց Հայրապետին ուղղված որդիական երախտագիտության և շնորհակալության ջերմ ուղերձ:

«Ավարտվել են արդեն դասերը, և մեր՝ ճեմարանականներիս հոգիները լի են բերկրանքով ու խանդավառությամբ, քանի որ հաջողությամբ ենք պսակել այս ուսումնական տարին ևս»: Նա, խոսքը ուղղելով տեսչական և դասախոսական կազմին, ասում է. «Մենք զգում ենք և գիտենք, որ դուք հույսեր եք կապել մեզ՝ ճեմարանականներիս հետ, և ես ուսանողության անունից վստահեցնում եմ ձեզ, որ հավատաք մեզ, որ ձեր հույսերը և ջանքերը ի դերև չեն անցնի: Ձեր ճակատի քարացած ակոսները մեր կյանքի գարունը ապրող երիտասարդներիս հոգիներում և ուղեղներում պիտի լինեն թարմ ու կենդանացած: ...և միշտ ու միշտ հրահրելու մեզ, որ աշխատենք հանուն մի վեհ նպատակի, հանուն Հայաստանյայց եկեղեցու հոգևոր սպասավորության և պայծառության: ...Եվ դուք, սիրելի դասախոսներ, անխնա և անդուլ կերպով աշխատում եք և մեր հոգիներում ցանում ու աճեցնում պարտականություններ այնպիսի իդեալների, ինչպիսիք են՝ հայրենի հող, մայրենի եկեղեցի և հայ ժողովուրդ:

Մենք գիտենք մեր պատմությունից, որ մեր բարի և շինարար ժողովուրդը միշտ ստեղծագործել է իր նեղ օրերին, քանի որ անցյալում մայրամուտ է եղել Հայաստան աշխարհում, և կրել է օտարի դաժան լուծը, իսկ այսօր արշալույս է Հայաստանում, և մենք՝ հայորդիներս, առաջ գնալով հիմնավորելու ենք մեր գոյությունը: Այստեղից է սկիզբ առել հայ դպրությունը: Յուրաքանչյուր ճեմարանական զգում է իր մեջ, որ ինքն է շարունակելու այդ մեծ գործի մի մասը՝ հովանավորությամբ աստվածա-

հիմն Մայր Աթոռիս և այս սրբազան հաստատության»:

Ապա Ա լսարանի ուսանող Վահրամ Տերտերյանը, Հովհաննես Գրիգորյանը (Գ դասարան), Արա Ծլուկյանը (Ա լսարան), Հրաչ Օղլուգյանը (Ա լսարան), Վաչագան Ավետիքյանը (Ա լսարան), Արա Տագեսյանը (Ա դասարան), Վաչե Բոզոյանը (Ա դասարան), Վարդգես Ավագյանը (Գ դասարան) հանդես են գալիս հայերեն, ռուսերեն, անգլերեն արտասանություններով և դաշնամուրային մենանվագներով:

Այնուհետև հանդես եկավ հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Հովհաննես ավագ քհն. Մարուքյանը՝ 1976—1977 ուսումնական տարվա հաշվետու զեկուցումով՝ ներկայացնելով մեկ տարվա համառոտ, բայց ամբողջական պատկերը հոգևոր ճեմարանից ներս տարվող ուսումնական-դաստիարակչական աշխատանքների:

Իր զեկուցագրում տեսուչ հայրը ներկայացրեց 1976—1977 ուսումնական տարվա ուսանողների թիվը՝ ըստ լսարանների և դասարանների.

Գ լսարան՝ 5 ուսանող
Ա լսարան՝ 6 »
Գ դասարան՝ 8 »
Ա դասարան՝ 6 »

Ուսանողներից 17-ը օտարահպատակներ են՝ Լիբանանից, Սիրիայից, Ռումինիայից, ԱՄՆ-ից, իսկ մնացածը՝ Հայաստանի և հարևան եղբայրական հանրապետություններից ու շրջաններից:

Այս տարի ճեմարանը չի ունեցել Բ լսարան և Բ դասարան:

Իրենց ճեմարանական ուսումն արդեն ավարտել են Գ լսարանի 5 ուսանողներ, որոնցից երկուսը, հայոց լեզվի ավարտական գրավորից ձախողվելու պատճառով, չեն մասնակցել քննություններին: Տեսչությունը հիշյալներին հնարավորություն կտա քննությունները հանձնելու առաջիկա ուսումնական տարվա սկզբին:

Նախկին շրջանավարտ ուսանողներ Միսակ սրկ. Մարգարյանը, Կիրակոս սրկ. Հովնանյանը և տ. Թադեոս քհն. Ավագյանը իրենց ավարտական քննությունները հանձնեցին այս ուսումնական տարվա վերջին:

Այս տարի էլ ճեմարանի դասախոսական կազմը գլխավորել է Վեհափառ Հայրապետը: Հոգևոր ճեմարանի տեսչական և դասախոսական կազմում տեղի են ունեցել որոշ փոփոխություններ: Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ հրավիրվել են նաև նոր դասախոսներ՝ պատմական գիտությունների թեկնածու դոցենտ Սիմոն Կրկյաշարյանը՝ որպես հայ ժողովրդի պատմության դասախոս, Վազգեն սրկ. Ասատուրյանը և Միքայել սրկ. Ջնչյանը՝ որպես անգլերեն լեզվի դասախոսներ, և Հենրի Բալյանը՝ որպես վերակացու: Դարձյալ Վեհափառ Հայրապետի հաճությամբ ճեմարանի փոխտեսչի պաշտոնը հանձնվեց տ. Անանիա վրդ. Արաքաջյանին, որը այս տարի վերադարձավ Մայր Աթոռ Զագորսկից, իր աստվածաբանական կրթությունը ստանալուց հետո:

Տեսուչ հայրը շեշտեց նաև, որ դասախոսական կազմը բարեխղճորեն կատարել է իր վրա դրված լուրջ պարտականությունը և ոչ մի ջանք չի խնայել՝ ուսանողներին ոգի, հավատք և նվիրում ներշնչելու իրենց ապագա գործունեության համար:

Հոգևոր ճեմարանի բժիշկն է Հրաչիկ Մանուկյանը, իսկ ճեմարանի գրադարանավարն է Տաճատ Վարդանյանը:

Ուսումնա-դաստիարակչական նպատակների իրագործման համար այս տարի էլ ճեմարանի հարկի տակ կազմակերպվել են մի շարք միջոցառումներ՝ զեկուցումների, հանդիպումների, տոնախմբությունների ձևով: Զեկուցումներից հատկապես կարելի է նշել համաշխարհային եկեղեցական էկումենիկ շարժմանը նվիրված մի շարք թեմաներ.

1.—«Եկեղեցին այսօրվա աշխարհին մեջ», զեկուցող՝ տ. Դավիթ եպս. Սահակյան:

2.—Մալաբար քույր եկեղեցու բարձրաստիճան հոգևորական տ. Պաուլոս Մար Գրիգորիոս միտրոպոլիտի հետևյալ երեք զեկուցումները.

ա. «Էկումենիկ շարժումը և արևելյան ուղղափառ եկեղեցիների մասնակցությունը այդ շարժմանը»:

բ. «Արևելյան ուղղափառ եկեղեցիների դիրքը եկեղեցիների միության հարցում մեր օրերում»:

գ. «Ավանդության և աստվածաբանության դերը միության հարցում»:

3.—«Մալաբար եկեղեցու պատմությունը և դավանանքը». զեկուցող՝ աստվածաբանական գիտությունների դոկտոր, Մայր Աթոռի միաբան Վրեժ սրկ. Ներսիսյան:

Ազգային, եկեղեցական, պատմական, ազգագրական, հայագիտական և բնագիտական ու աստղագիտական թեմաների շուրջ դարձյալ ավելի քան 10 շահեկան զեկուցումներ են կարդացվել այս տարի հոգևոր ճեմարանի հարկի տակ:

Ճեմարանի ուսանողների կյանքը հետաքրքիր դարձնելու նպատակով այս ուսումնական տարում կազմակերպվել են նաև եռօրյա ձմեռային շրջապտույտներ և այցելություններ՝ Աղվերան, Խորվիրապ,

Երևանի պետական պատկերասրահ, թանգարան, ձեռագրաց մատենադարան, Մարտիրոս Սարյանի տուն-թանգարան և այլուր: Ուսանողները ետ չեն մնացել նաև կուլտուրական միջոցառումներից՝ կինոյից, թատրոնից, երաժշտական ներկայացումներից՝ Էջմիածնի և Երևանի համերգային դահլիճներում:

Ս. Ստեփանոսի տոնին Հուսիկ եպս. Սանթուրյանի ձեռամբ սարկավագ են ձեռնադրվել Գ լսարանի ուսանողներ Բյուզանդ Գալայջյանը և Գրիգոր Հաջյանը: Ուրբաթակրության աստիճան է շնորհվել Ա լսարանից Վաչագան Ավետիքյանին, Մըկըրտիչ Դիշիքըրքյանին, Խաչիկ Խարազյանին, Արա Ճլուկյանին, Հովսեփ Պալըգյանին, Տիգրան Սահրադյանին, Վահրամ Տերտերյանին և Հրաչ Օղլուգյանին, իսկ դպրության աստիճան՝ Գ դասարանի ուսանողներ Վարդգես Ավագյանին, Հովհաննես Գրիգորյանին, Ստեփան Դավթյանին, Վռամշապուհ Հակոբյանին, Բորիս Մալյանին, Ազատ Մանդալյանին և Օնիկ Կյուզելյանին:

Համառոտ այս զեկուցումից հետո տ. Հովհաննես ավագ քահանան շնորհակալական խոսք է ուղղում Մայր Աթոռի միաբանությանը, պաշտոնեությանը, բարերարներին և բոլոր նրանց, ովքեր իրենց նյութական և բարոյական օժանդակությամբ սատարել են ճեմարանի աշխատանքներին:

Տեսուչ հայրը տեսչության և դասախոսական կազմի կողմից շնորհակալություն հայտնեց Վեհափառ Հայրապետին՝ Նրա հայրական ջերմ վերաբերմունքի համար կրթական այս կարևոր հաստատության հանդեպ: Նորին Սուրբ Օծությունն Իր գահակալության քսանմեկ տարիների ընթացքում միշտ էլ ժամանակ է գտել Իր Հայրապետական Աթոռից իջնելու և որպես ուսումնապետ մտնելու ճեմարանի դասարաններից ներս: «Ձեր հայրական հոգածությունը ճեմարանի և մեր հանդեպ բոլորիս հայտնի է: Ի դիմաց տեսչության և դասախոսական կազմի թույլ տվեք համբուրել Ձերդ ս. Աջը՝ մաղթելով Ձեզ քաջառողջություն և բեղմնավոր նորանոր տարիներ»:

Այնուհետև տեսուչ հայրը Նորին Սրբությանն է ներկայացնում 1976—1977 ուսումնական տարվա այն առաջադեմ ուսանողներին, որոնք արժանացել են խրախուսանքի և հայրապետական օրհնության: Ուսանողներն աջահամբույրով ստանում են այս առիթով սահմանված ընծաները.

Գ լսարան.—9,32 միջինով առաջինն է հանդիսանում Սորին սրկ. Մանդալյանը.
9,1 միջինով երկրորդն է հանդիսանում Բյուզանդ սրկ. Գալայջյանը.

Ա լսարան.—8,76 և 8,75 միջիններով առաջինն են հանդիսանում Հրաչ Օղլուգյանը և Վահրամ Տերտերյանը.
8,35 միջինով երկրորդն է հանդիսանում Հովսեփ Պալըգյանը.

Գ դասարան.—8,91 միջինով առաջինն է հանդիսանում Հայկ Չիլինգարյանը.
8,04 և 8,02 միջիններով երկրորդն են հանդիսանում Ստեփան Դավթյանը և Հովհաննես Գրիգորյանը.

Ա դասարան.—8,12 միջինով առաջինն է հանդիսանում Պետրոս Ասողլյանը.
8 միջինով երկրորդն են հանդիսանում Հաջիմանուկ Գանձապետյանը և Արա Տագեսյանը:

Օրինակելի վարքի համար տեսչությունը ներկայացնում է պարգևատրման երկու ուսանողների՝ Ա լսարանից Հովհաննես Ղազարյանին և Գ դասարանից Հովհաննես Գրիգորյանին:

Մայրենի լեզվի մեջ գերազանց առաջադիմություն ցուցաբերելու համար պարգևատրման է ներկայացվում Սորին սրկ. Մանդալյանը:

Տեսուչ հոր հրավերով խոսք է առնում նաև Վեհափառ Հայրապետը՝ այս հանդիսավոր առիթով մի անգամ ևս Իր պատգամն ու օրհնությունը տալու տեսչությանը, դասախոսական կազմին և ուսանողությանը: Վեհափառ Հայրապետը կրկին անգամ Իր բարձր գնահատությանն ու հայրական օրհնությանն է արժանացնում հոգևոր ճեմարանի հարկի տակ կատարված նվիրյալ ու բարեխիղճ աշխատողներին:

Վեհափառ Հայրապետը այնուհետև կոչ է անում ուսանողներին, որպեսի նրանք զգան եկեղեցական, ազգային-հայրենասիրական ծառայության գեղեցկությունը և կարևորությունը, որոնց կարիքը շատ է զգում մեր ժողովուրդը՝ Հայաստանում և ի սփյուռս աշխարհի:

Հանդիսությունն ավարտվում է խմբովին երգված «Հայր մեր»-ով և Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով:

ՇԱՀԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՃԵՄՅԱՆ

ՓՐԿՈՒԹՅԱՆ ՀՂԱՑՔԸ—ՈՒՂՂԱՓԱՌ ՄՈՏԵՑՈՒՄՈՎ

Ս. Զատկի Ծրագալույցին և Մեծ պահոց վերջավորության, քառասուն օրերու զըղջումն և աղոթքն ետք, շաբաթ երեկոյան, ուղղափառ բոլոր եկեղեցիները կվառեն մոմերը և կպայթին ուրախության ձայնով, համայնքը ամբողջ կընդունի Հարության պատգամը և կկրկնեն մեկը մյուսին. «Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Տոնական տարվան գերագույն պահն է, ինչպես նաև տոնակատարություն մը, ուր հավատացյալները իսկապես կմասնակցին կյանքի հաղթանակին մահվան վրա, հըրճվագին ցնծությամբ:

Մեր եկեղեցվո մեջ, Մեծ պահոց քառասուն օրերու շրջանին, խորանները կմնան վարագուրված և հատուկ ժամերգություններ կհրավիրեն հավատացյալները ապաշխարության և մեղքերու խոստովանության: Զատկի Ծրագալույցը այն պահն է, երբ վարագույրը կբացվի Հարության Ավետարանի ընթերցումով: Սակայն, վարագույրի բացումեն և ուրախության պատգամեն առաջ, նախագահող եպիսկոպոսը կկարդա Ծննդոց գիրքի առաջին երեք գլուխները—ստեղծումը և անկումը մարդուն, որմե ետք կընթերցվի 117-րդ սաղմոսի 24-րդ համարը. «Այսօր է զոր արար Տէր, եկայք ցնծասցուք և ուրախ եղիցուք»: Ապա քահանան կկարդա Ծննդոց գիրքի ԻԲ 1—8-են Աբրահամ և Իսահակի պատմությունը: Կհետևի ասոր ընթերցումը Եղ ԺԲ 1—24-ի մասը, որ է պասեքի հաստատումին, ողջակեզի զոհաբերումին և դուռերու կնքումին պատմությունը:

Ասկե ետք կկարդացվի Հովնանի ամբողջ գիրքը, Եղից գիրքեն ԺԴ 24—ԺԵ 21, Կարմիր ծովու անցքը, որու վերջավորության կվառվին մոմերը և կերգվի Եսայի մարգարեության 60-րդ գլուխը «Լուսաւորեաց, լուսաւորեաց Երուսաղէմ, զի հասեալ է լոյս քոյ»: Ասոր կհետևին չորս ընթերցումներ.

Յոբ ԺԸ, 1—2, Յեսու Ա, 1—10, Բ Թագ. Բ, 1—23 և Եզեկ. ԼԷ 1—14, չորցած ոսկորներու տեսիլքը:

Չորս գիրքերու այս ընթերցումեն ետք, երիտասարդ դպիր մը կբարձրանա բեմ, կկենա վարագույրին դիմաց, մոմ ի ձեռին, կբանա Դանիելի գիրքը և կսկսի եղանակով կարդալ երեք մանուկներու պատմությունը (Դանիել Գ 1): Եկեղեցիին մեջ գործածված բնագիրը Դանիելի երկար բնագիրն է, ուր Սեդրակ, Միսաք և Հաբեդնակով կերգեն Տիրոջ փառաբանանքը հնոցի կրակին մեջ: Այս մասը կերգվի երեք դպիրներու կողմե, որոնք կկենան բեմին մյուս կողմը և կմիջամտեն ընթերցումին, երգելով այն մասը որ կսկսի այսպես. «Օրհնեալ ես դու Տէր Աստուած հարցն մերոց»: Վերջավորության դպրաց դասը կշարունակե երգը՝ սաղմոսերգության երկրորդ մասը, այս անգամ փառաբանական տաղի ձևով, որուն կմասնակցին ներկաները: Գովաբանական երգասացութենեն վերջ, վարագույրը կբացվի և սարկավագը կհայտարարե. «Քրիստոս յարեաւ ի մեռելոց, մահուամբ զմահ կոխեաց և յարութեամբն

իւրով, մեզ զկեանս պարգեւեաց, նմա փառք յաւիտեանս, ամէն»:

Կշարունակվի անմիջապես պատարագը, որու ընթացքին ընթերցումներն են՝ Ա Կորնթ. ԺԵ. 1—11 և Մատթեոս ԻԷ մինչև Ավետարանին վերջը:

Այս է աստվածաշնչական ենթահողը փրկագործության պատմության: Պատմությունն է ան **կյանքին** տրված Ադամի և կյանքին վերանորոգված մարդուն մեջ Քրիստոսի հարությամբ և սուրբ Հոգիի Գալուստով:

Ան պատմությունն է փրկագործության, հավատացյալին պատմված, ոչ թե աստվածաբանական տեսության մը ձևով, որ փորձեր թափանցել անոր միտքեն ներս և համոզեր անոր տրամաբանությունը, այլ ծիսական սարքավորումի մը ձևով, հրավիրելով անոր մասնակցությունը և ամբողջական հաղորդությունը «Սուրբերու համայնք»-ի կյանքին: Հայ եկեղեցին և ուղղափառ եկեղեցիները, ընդհանրապես, թեզած չեն բնավ եկեղեցիի ուսուցումը, «Աստվածաբանական ամբողջության» (Summa Theologica) մը մեջ, այլ նախընտրած են ուսուցումը, մեկնությունները, բացատրությունները և աստվածաբանական վարդապետությունները կեդրոնացնել ծիսական կյանքին մեջ, ուր մասնակցող հավատացյալին բոլոր զգայարանքները կբաժնեն պաշտամունքային մտածողությունը:

Պրոֆ. Նիսսիոթիս «Ուղղափառ մտածողությունը» իր գիրքին մեջ կըսե. «Ուղղափառ աստվածաբանությունը, գլխավորաբար, պատասխան մըն է ս. Հոգիի ներգործության: Անոր միջոցավ ս. Երրորդության շնորհքը մշտապես կհայտնվի և կըտարածվի աշխարհի մեջ... խոսակիցը աստվածաբանական ամեն մտածողության մեջ ուրիշ ոչ ոք է բայց միայն Աստված»: Այդ պատասխանը կրնա ըլլալ միայն «պատասխան մը հաղորդության, շնորհակալության... որովհետև անհիմանալի Աստուծո ճանաչողությունը կախում ունի միշտ խոր ինքնաճանաչումեն Աստուծո կողմե ճանչցված մարդուն»:

Այս է հավանաբար բացատրությունը թե ինչո՞ւ, ուղղափառ մտածումին հավատարիմ մնալու համար, ավելի նկարագրական պիտի ըլլամ քան վերլուծական փրկագործության հղացքի իմ այս ներկայացումիս մեջ:

Վերադառնանք հնոցի երեք մանուկներու պատմության: Դանիելի գիրքին մեջ, իրականին մեջ, փրկության երկու պատմություններ կգտնենք, երեք մանուկները, որոնք հնոցեն դուրս եկան կենդանի և թագավորը, որ հայտարարեց. «Օրհնեալ է Աստուած Սեդրակայ, Միսաքայ և Աբեդնագովի... զի ոչ գոյ Աստուած» (տես գրաբար Աստվածաշունչեն. Դանիել Գ 28—29):

Եկեղեցին ոչ իսկ կկարդա այս մասը. կանգ կառնե հոն ուր երեք մանուկները դուրս կուգան հնոցի կրակեն, փառաբանելով զիրենք փրկող Աստվածը, որ ղրրկեց իր հրեշտակը հրաշքը կատարելու համար:

Եկեղեցին կընդգծե չորս զուգահեռներ. **Հնոցը** և **Խաչը, Հրեշտակը,** հնոցին մեջ և **Մեսիան** խաչին վրա, **Երեք մանուկները** և հավատացյալներու **ժողովը,** հաղթանակը **կյանքին** և Հարությամբ ու Հոգեգալուստով սկսված քրիստոնեական **Նոր կյանքը:**

Պիտի փորձեմ փրկության հղացքը նկարագրել քրիստոնեական կյանքի հետևյալ երեք պահերու ընդմեջեն. Խաչը, Հարությունը և Հոգեգալուստը:

Պողոս առաքյալի հայտարարութենեն ասդին թե «մեք քարոզեսցուք զխաչեալն Քրիստոս» քանզի «գայթակղությունը» եղավ մեր հավատքին հիմնաքարը և անոր գլխավոր արտահայտությունը: Արիոսական և Նեստորական վեճերը կեդրոնացած էին այն հարցին շուրջ թե արդյո՞ք ս. Երրորդության երկրորդ անձը, Աստուծո Որդին, ճշմարիտ Աստված «խաչեցաւ, թաղեցաւ և յարեաւ» մարդկային և աստվածային իր զույգ հանգամանքով: Եկեղեցիին պատասխանը եղավ «այո», Քաղկեդոնի ժողովեն ետք՝ ավելի՛ շեշտակի կերպով, բայց մանավանդ իսլամության ծնունդեն ետք:

Հայ եկեղեցին պետք զգաց իր այս հասկացողությունը պաշտպանելու երկու ճակատներու վրա. քաղկեդոնական մեկնության դեմ բյուզանդական եկեղեցիին կողմե և իսլամական խաչամերժության դեմ՝ պայքարելով «Երևութական» Եվտիքեսի դեմ: Հայերը նայեցան խաչին իբրև Աստուծո զորություն, պաշտպանություն և փրկություն իր ժողովրդին: Քաղկեդոնականներուն պատասխանեցին հարց տալով թե՝ եթե մարմնացյալ Աստված չխաչվեցավ մարդկային և աստվածային իր միակ բնության մեջ, ինչպե՞ս կրնար ապահովված ըլլալ մարդկային ազգի փրկագործությունը: Եվ պահեցին «Սուրբ Աստուած»-ին մեջ «որ խաչեցար վասն մեր»-ը (Դվինի Բ ժողով, 554 թ.), կոչելով խաչը «աստուածընկալ ս. Նշան» երբ Հուստինիանոս ընդունեց 553-ին Սկյութական բանաձևը: «Մին ս. Երրորդութենեն զոհվեցավ խաչին վրա»:

Կոստանդին Մեծեն սկսյալ, խաչը ընկատվեցավ իբրև նշանը եկեղեցիի հաղթանակին աշխարհի մեջ և փրկությունը Հոդ-

սեական Կայսրության, նման Իսրայելի փրկության Եգիպտոսեն: Խաչի զորությամբ փրկությունը հասկցվեցավ իբրև հաստատումը Աստուծո թագավորության՝ եկեղեցիին, նկատված իբրև Նոր Իսրայել, գընված Քրիստոսի արյամբ: Խաչի զորությունը հասկցվեցավ իբրև Աստուծո «Նյութական» միջամտությունը, պաշտպանելու իր ժողովուրդը և ապահովելու անոր հաղթանակը: Քրիստոնեական աշխարհին մեծ եռաքը առաջին երեք համաեկեղեցական ժողովներուն, մինչև հինգերորդ դարու կեսերը, տեսավ ամբողջ մարդկության փրկությունը իբրև քրիստոնեացումը բոլոր ազգերուն, իրականացումովը մարգարեությունները որոնք նկարագրած էին ազգերու մեկտեղումը, կազմելու համար Նոր Երուսաղեմը: Այս էր պատճառը որ Հերակլիոս պատերազմեցավ պարսիկներուն դեմ որոնք խաչափայտը տարած էին իբրև ավար և ետ բերավ զայն հաղթականորեն: Խաչը այնտեղ խորհրդանիշ մը չէր միայն, այլ ինչպես Աստվածածինը, փրկագործության **գործիքը**: Ինչպես աստվածամայրը իր մարմինեն տվավ մարմնացյալ Աստուծո, խաչը տվավ միջոցը զոհաբերության:

Այսպես խաչափայտը եղավ մեծ հարգանքի առարկա և շարականները կպարունակեն հետևյալ արտահայտության նման նկարագրություններ. «Զօրութիւն սուրբ Խաչի քո Քրիստոս, զոր կանգնեցեր ի փրկութիւն աշխարհի, սա պահեսցէ զմեզ յամենայն փորձութենէ»:

Խաչափայտը նկարագրվեցավ իբրև «Տապանակ Ուխտի» և գովաբանվեցավ իբրև «փայտ սրբազան... (մեջբերում Դավիթ Անհաղթի «Բարձրացուցէք»-են) ...ժառանգակից Որդւոյն Աստուծոյ»:

Փրկության գաղափարը հասկցված իբրև պահպանությունը Աստուծո իր ժողովուրդին, իբրև Աստուծո թագավորությունը երկրի վրա, խաչին զորությամբ, նմանեցված է ժողովուրդի պաշտպանության ահապատի օձերեն Մովսեսի գավազանով, երեք մանուկներու փրկության՝ հնոցի կրակեն Աստուծո միջամտությամբ, իբրև այրող մորենին որմե Աստված խոսեցավ Իսրայելի փրկարարին իբրև Նոր Օրենքի տախտակը, արյան նշանը Եգիպտոսի հրեա տուներուն ճակատին, որ փրկեց անոնց անդրանիկները, մեկ խոսքով, իբրև պաշտպանողական միջամտություն և Աստուծո գործիքը իր ժողովուրդի պահպանման և կյանքին համար: Փրկագործության այս հասկացողությունը նյութականացած խաչով կրնամ կոչել «աստվածաշնչական», «Հին Կտակարանյան» մեկնությունը քրիստոնեական հավատքին:

Անշուշտ, այս չէր միայն խաչով ըմբռնված փրկության գաղափարը արևելյան քրիստոնեության կողմե: Այս տեսանկյունեն դիտված փրկագործության երկրորդ հասկացողությունն ալ ունի աստվածաշնչական արմատ, սակայն այլապես մեկնաբանված: Խաչը կնկատվի այստեղ իբրև գերագույն զոհաբերությունը:

Դավիթ Անհաղթ, Ե դարու հայ փիլիսոփան, որ հայերենի թարգմանեց Արիստոտելի և անոր ալեքսանդրյան մեկնիչներու գործերը, գրած է գովաբանական ճառ մը «Վասն խաչի» ուր կըսե. «Քանզի, ուր խաչն, անդ և խաչեցեալն (մինչև...) ...փրկութիւն»:

Ինչպե՞ս կհասկնանք զոհաբերության այս արարքը:

Պատարագի ընթացքին, գինիի ընծայումի ժամանակ գործածված բանաձևը կրսե. «Արբէք ի սմանէ ամենեքեան, այս է արիւն իմ Նորոյ Ուխտի, որ յաղագս ձեր և բազմաց հեղանի ի **քաւութիւն** և ի **թողութիւն մեղաց**»:

Քրիստոսի կողեն հոսող ջուրն ու արյունը նույնպես հասկցված են իբրև մկրտության ջուրը և հաղորդության գինին, «ի քաւութիւն և ի թողութիւն մեղաց»:

Աթանասեն մինչև Մելենտորի, ուղղափառ աստվածաբանները ընդգծած են արմատական տարբերությունը փրկագործության երկու հասկացողություններու միջև. արևմտյանը հիմնված **փրկագինի** գաղափարին վրա և արևելյանը՝ հիմնված **հարության** գաղափարին վրա:

Հատկապես Ալեքսանդրիո հայրերը փրկագինի գաղափարը մերժեցին, որովհետև նկատեցին զայն լոկ իբրև դատարանական հասկացողություն մը: Մեղքը ըմբռնելով իբրև հանցանք մը, որուն համար գին մը պետք է վճարվի, իսկ փրկագործությունը՝ իբրև ժիտական արարք մը, քանի որ Քրիստոսով ապահովված փրկությունը հասկցված է ոչ ավելի քան հատուցումը պարտքի մը, մեղքերու պարտքին ջնջումը և արարածին հաշտությունը Արարիչին հետ:

Ապաշխարությունը և մեղքերու քավությունը մենք կհասկնանք իբրև հիվանդին դիմումը բժշկին և ոչ թե իբրև դատավարությունը մեղավորին դատավորին առջև: Ան դարձն է անառակ որդիին հայրական խնամքով ապահովված սիրո թագավորությունեն ներս: Սերն է օրենքը, որուն համաձայն եկեղեցին կդատե և կբուժե:

Այս է պատճառը որով ապաշխարության կանոններուն մեջ շեշտը կդրվի աղոթքի և պահքի վրա: Մեծագույն պատիժը զոր բա-

հանա մը կրնա տալ կախակալումն է եկեղեցիի խորհրդակատարական կյանքեն:

Աղեքսանդրիո և Կապադովկիո հայրերը կսորվեցնեն մեզի թե խաչը կեցած է մարդեղության և հարության միջև և չի կրնար անջատվիլ մեր փրկության պատմության ամբողջութենեն: Մարդեղությունը, առաջին քայլը փրկագործության ընթացքին, վերածնունդն է աստվածայինին մարդկային բնության մեջ, նոր արարչագործությունն է մարդկային բնության աստվածացումի հեռանկարով:

«Փրկիչը եղավ մարդու Որդի, որպեսզի մարդը ըլլա Աստուծո որդի» (Իրենիոս): «Ան հաստատեց հաղորդությունը իր միացումովը Անմահին հետ, որպեսզի մարդը կարենա մաս ունենալ Անմահութենեն» (Գր. Նյուսացի). «Ան մարդացավ, որպեսզի մենք աստվածանանք» (Աթանաս): Ամենեն ամփոփ և ամբողջական գրությունը Կապադովկյան հասկացության, Գրիգոր Աստվածաբանի հետևյալ գրությունն է. «Աստված իր վրա առավ մեր ամբողջ էությունը. Ան մեր ցեղի ամբողջությունը կրեց միակ իր անձին մեջ և այդ ընելով, եղավ մեր բնության առաջին պտուղը (երախայրիք):

Ան իրապես ուզեց իր ամբողջության մեջ վերականգնել ինչ որ ինկած էր: Բայց ամբողջ մեր ցեղն իր անկումի մեջ: Ուրեմն ինքզինք նույնացուց Ադամի հետ, Իր ամբողջությամբ. Ան տարածեց ինքզինք, Ինք որ կյանքն իսկ է, մահվան մեջ իսկ, որպեսզի ազատե մեզ մահեն: Ան թափանցեց ամբողջությանը մեջ Մեկին որուն միացուց ինքզինք, ինչպես պիտի ըներ հոգին մեծ մարմինի մը, տալով կյանք անոր ամբողջության և փոխանցելով անոր կյանք զգացական ճամփով: Անոր համար մարդկային ցեղը կոչված է «Քրիստոսի մարմին» և Անոր անդամները՝ մասերը մարմինին (Ա Կորնթ. ԺԲ 27), որովհետև Քրիստոս կբաշխվի ամբողջին հավասարապես և միևնույն ատեն կբնակի հատուկ կերպով մեզմե յուրաքանչյուրին մեջ» (De nostris Rectis Doem. Yert. Oratio III. P. G. 89, 1340):

Մարդեղություն, քարոզություն, չարչարանք, խաչելություն և հարություն կծառայեն մեկ նպատակի, կործանումը մեր մեղքերուն, զոր Տերը «Գառն Աստուծո» իր վրա առավ խորհուրդներու կատարումով, եկեղեցին կկրկնե նույն արարքները վերականգնելու համար մարդը իր իսկական բնության մեջ, այնպես ինչպես Աստված ստեղծեց զայն, վերաբերելու համար զայն իր նախնական ճակատագրին, որ է մասնակցություն աստվածային կյանքին, Աստուծո տեսիլքին մեջ, այսինքն աստվածացումի:

Մեղքով աստվածային պատկերը չկորսվեցավ մարդուն մեջ, այլ խաթարվեցավ: Անկման աղետը չվտարեց մարդեն աստվածային իր բնությունը: Մթագնած, ետև հետված, անգիտացված, մոռցված, ան ետ լույսին կկոչվի Քրիստոսի փրկագործ արարքներով: Բոլոր անոնք որոնք կհավատան կրնան ըլլալ մեկ մարմին ի Քրիստոս: Հասնելու համար Աստուծո նմանության, մարդը պետք է վերածնի հոգիեն, որպեսզի ստանա իր փրկությունը իրագործելու ուժը:

Փրկագործությունը միստիկական ու անընկարագրելի կերպով կվերականգնե մարդու իր ամբողջության մեջ: Քրիստոս կկոչե մեզ կազմելու «մեկ մարմին», որովհետև, ինչպես կըսե ս. Կյուրեղ. «Ան իր մեջ ուներ ամբողջ բնությունը, փոխակերպելու և վերականգնելու համար զայն իր սկզբնական վիճակին մեջ»:

Այսպես, ուղղափառ աստվածաբանությունը կընդգծե ուղղակի կապը խաչելության և հարության միջև, Քրիստոսի փրկագործ արարքին մեջ: Խաչի մահը սիրո մեծ զոհաբերությունն է հաշտեցումի նպատակով (մարդուն և Աստուծո) միայն ու միայն որովհետև անոր կհետևի հարությունը:

Հարությունը՝ մարդու նկատմամբ Աստուծո վերանորոգ սիրույն երաշխիքն է: Ան կբանա նաև մարդուն առջև աստվածասիրության ճանապարհը: Հարությամբ է որ ծնավ մարդու աստվածացումը Աստուծո տեսիլքին մեջ:

Խաչելության և հարության միջև տարածվող երեք օրերը բյուզանդական և հայկական պատկերագրության մեջ նկարագրված են Քրիստոսի պատկերով, մեծ խաչ մը ձեռքին, իջած դժոխք՝ կյանքի կոչելու Ադամ, Եվան, պատրիարքները և մարգարեները: Այս է հավատամքի մեջ հիշվածը թե «Իջեալ ի դժոխս, ազատեաց զհոգիս»: Այս հավատալիքը կարտահայտե խաչելության ներգործությունը, իբրև մուտք սատանայի իշխանութենեն ներս և խորտակումը անոր ազդեցությամբ մարդու վրա: Ան պարտությունն է մահվան, մահով, որովհետև եկեղեցիի հայրերը մեղքը նկատեցին իբրև ժառանգական մահկանացություն («Ադամաւ եմուտ մահ յաշխարհ»), իսկ հարությունը՝ իբրև կյանքի իշխանության վերականգնումը: «Նոյնպէս և Քրիստոսի ամենեքին կենդանասցին» (Ա Կորնթ. ԺԵ 22):

Ուղղափառ աստվածաբանները կարդացին Կորնթացվոց թուղթը իբրև հիմնական

մեկնությունը հարության խորհուրդին և քիչ ուշադրություն դարձուցին Հռոմեացվոց և Գաղատացվոց թուղթերուն. «Քրիստոս գնեաց զմեզ» (Գաղատ. Գ 13): Անոնք մեկնեցին փրկագործությունը «փոխաբերաբար» իբրև հաղթանակ մահվան վրա և ճանապարհ դեպի սրբագործում:

Ս. Աթանաս ըսավ. «Մենք կմեռնինք միայն ատենվան մը համար, ըստ մեր մարմնի բնության, որպեսզի ավելի լավ հարության մը արժանանանք: Ինչպես հողին հետված սերմերը, չենք ոչնչանար, այլ սերմանված հողին մեջ հարություն պիտի առնենք, մահը վերածված ըլլալով ոչինչի, մեր Տիրոջ շնորհքով»: Եվ Ոսկեբերան կապելցնե. «Ճիշտ է որ առաջվան նման կմեռնինք, սակայն չենք մնար մահվան մեջ և ասիկա մեռնիլ չէ: Մահվան ուժը և իրականությունը պարզապես ասոնք են. մեռած մարդ մը կարելիություն չունի ետ վերադառնալու կյանքին: Բայց եթե մահեն ետք, ան կյանք ունենա և ավելին՝ ավելի լավ կյանք մը ունենա, ատիկա մահ չէ այլեվս այլ բան» (Մեջբերված Մեյենտորֆի «Վարժություն բյուզանդական աստվածաբանության» մեջ, էջ 218—219):

Ժառանգելու համար այդ կյանքը խոստացված Քրիստոսի հարությամբ, քրիստոնյան պետք է աճի «ի Քրիստոս» և ապրի Քրիստոսի կյանքը, ըլլալով ազատորեն Քրիստոսի մարմինին անդամը: Մկրտությունը, դրոշմը և հաղորդությունը քայլերն են մեր բնության պայծառակերպության առաջնորդող:

Վերականգնելով մեր մեջ աստվածային պատկերը, մենք կըլլանք կատարյալ մարդ, «մարդ» բառին ամբողջական իմաստով: Այս կարելի է միայն ս. Հոգիի ներգործությամբ: Խաչը կխոստանա մեզի կյանք, վերածնվելով ի Քրիստոս: Հարությունը կխոստանա մեզի հավիտենական կյանք, իսկ ս. Հոգիին գալուստը կբանա ճանապարհը դեպի աստվածային պատկերին վերահաստատումը մեր մեջ, այսինքն մեր պայծառակերպումը:

Ուղղափառ եկեղեցին չունի բարոյական և կրոնական կանոններու օրինագիրք մը— նախապատրաստված դեղագիրերու հավաքածո մը, որ ապահովեր այս հառաջընթացը և մարդուն քայլ առ քայլ այլակերպումը: Ան ուղղություն կուտա միայն, սնունդ և օրինակ. ուղղություն՝ ս. Գիրքով և հայրերու մեկնություններով, սնունդ՝ ծիսակատարությամբ և խորհրդակատարումով, իսկ օրինակ՝ կատարելության նրմուշ և հավատքի ախոյան հանդիսացող սուրբերով: Ան կմղի մեզ «փնտրելու» հոգին: Գերագույն նպատակը քրիստոնեական կյանքին գիտակից և անձնական փորձառությունն է սուրբ Հոգիին:

Եկեղեցիի այս առաքելությունը սկսավ ս. Հոգիի էջքով առաքյալներուն վրա և կշարունակվի եկեղեցիին առաքելությամբ: Եկեղեցիին «առաքելականությունը» կրնակնանք իբրև շարունակությունը Պենտեկոստեին եկեղեցիի կյանքեն ներս ավելի բան իբրև հեղինակության աղբյուր:

Մկրտությունը շարականներեն մեկուն մեջ նկարագրված է այսպես. «Այսօր լուծան....., երկունք մահու», իսկ աղոթքը կավելցնե. «Զուրն այս...» իսկ դրոշմը, որ կհետևի մկրտության, կկնքե բոլոր զգայարանքները ս. մյուռոնով, ընելու համար մարմինը բնակարան Աստուծո հոգիին:

Ապա նոր մկրտվածը կընդունի ս. հաղորդությունը և կըլլա լման անդամ Քրիստոսի մարմինին: Դուրսեն դիտված, այնպես կթվի թե հակասություն մը կա այն իրողության մեջ թե՝ մեկ կողմեն ս. Հոգին կապահովե վավերականությունը և շարունակությունը խորհրդակատարական կյանքին և մյուս կողմեն, նույն ս. Հոգին կուտա եկեղեցվո յուրաքանչյուր անդամին աստվածայինի անձնական փորձառության մը կարելիությունը, ազատագրելով զայն մեղքի կապանքներեն և ընելով զայն անկախ մարդ մը, բոլորովին պատասխանատու իր իսկ փրկության:

Այս «ձգտվածությունը» ինչպես կկոչե զայն Մեյենտորֆ, արտաքին երևույթ է միայն: Աստուծո արքայությունը եկեղեցիի խորհրդակատարական կյանքն է, սակայն պարապ հղացում մը կմնա ան եթե յուրաքանչյուր անհատ չպատասխանե անոր կոչին կամովին և չընե ճիգ մը հասնելու անոր կյանքի լրումին: Եկեղեցին մեր վրա կհրավիրե Աստուծո սերը. մեր նախաձեռնությունն է մեր սիրով պատասխանել Աստուծո սիրուն:

Թող բանամ այստեղ փակագիծ մը, ըսելու համար թե երկար դարեր, երբ եկեղեցին գործ ուներ քրիստոնյա պետություններու հետ, Բյուզանդիոն, Հայաստան և Միջին Արևելք, ուրիշ տեսակի ձգտվածություն մը գոյություն ունեցավ միշտ պաշտոնական եկեղեցիին և ցած եկեղեցականության միջև: Չորրորդ դարեն, վանականությունը եղավ ապաստանարանը չհամակերպողներուն որոնք հոգևոր կյանքի անձնական իրենց փորձառությամբ ուզեցին հասնիլ քրիստոնեական կյանքի կատարներուն, ինքզինքնին հեռու պահելով տանարացած եկեղեցիեն: Տագնապներու ժամանակ հավատացյալները նախընտրեցին երթալ և խորհուրդ առնել վանականներեն և

սուրբերեն փոխանակ դիմելու վիճաբանող եպիսկոպոսներուն:

Այս է փրկության գաղափարին ուղղափառ հասկացողությունը, ընդհանուր իր գիծերուն մեջ, իբրև վերածնունդ և աճում ի Քրիստոս, մասնակցությամբ իր մարմնացումին, մահվան և հարության, ս. Հոգիի անմիջական ներգործումով անհատական կյանքին մեջ:

Այս պատկերը, թերի ամեն պարագայի, ավելի թերի պիտի ըլլար եթե չեզրափակեի վախճանաբանական հայեցողությամբը փրկության գաղափարին, ինչ որ պիտի կոչեինք փրկություն «Աստուծո հայեցողությամբ»:

Այս իմաստով փրկություն հասկացողությունը ունի երկու տարածք, զոր կրնանք կոչել մարդկային և աստվածային կամ ժամանակավոր և հավիտենական:

Եկեղեցվո բոլոր հայրերը, մանավանդ Կապադովկիացիները, Բարսեղ Կեսարացիի գլխավորությամբ, երևակայեցին արարչությունը իբրև շարժում մը դեպի վերջնական լրում մը: Որոգինեսի հակառակ, որ կերևակայեր թե գերագույն կատարելություն որուն կրնանք հասնիլ աստվածային «Է»-ին contemplation-ն է, Կապադովկյան հայրերը տեսան վախճանականությունը իբրև հառաջխաղացք մը, սիրո լարված վերելք մը, որ վերջ չունի, որովհետև գերադասը ըլլալով աստվածային՝ չունի վերջ և սպառում և կուտա մեզի «Նոր բաներ» սիրո միության մեջ: Այսպես ուրեմն, վախճանական նպատակը չի պատկանիր ապագային, այլ գոյութենական փորձառություն մըն է, հասանելի ի Քրիստոս ս. Հոգիի շնորհներով:

Խորհրդակատարական կյանքը և խորհրդավորական վանականությունը հիմնված են այն հավատքին վրա թե վախճանական վերջը «Ներկա» է, արդեն իսկ իրականացած. ատիկա Նոր մարդկությունն է ի Քրիստոս: Ի վերջո, Աստուծո թագավորությունը պիտի պարփակե ամբողջ մարդկությունը, որովհետև խաչի զոհաբերությունը ամբողջ մարդկության համար է:

Այն ատեն միայն, երբ եկած ըլլա արդեն Աստուծո թագավորությունը, Քրիստոս պիտի գա Իր փառքին մեջ, երկրորդ անգամ, դատելու «զկենդանիս և զմեռեալս» և Անոր Թագավորության «վախճան մի՛ լիցի»:





Ա. ՀԱՏԻՏՅԱՆ

ՍՈՒՐԲ ԲԱՐՍԵՂ ՀԱՅՐԱՊԵՏ ԿԵՍԱՐԱՑԻ*
(329—379)

Մատենագրական վաստակը

Ս. Բարսեղ Կեսարացին, որպես Դ դարի երկրորդ հիսնամյակի ընդհանրական եկեղեցու եռամեծ վարդապետ, թողել է դավանաբանական, մեկնողական, քարոզչական, կանոնագրական, ծիսագիտական, նամակագրական, մանկավարժական և այլ բնույթի հարուստ ու բազմաժանր վաստակ:

Ս. Բարսեղ Կեսարացու մատենագրական վաստակի «մի մասը ծանոթ չէ հունական մատենագրության մեջ, մի մասն էլ ծանոթ է միայն լատիներեն թարգմանությամբ: Կան նաև այնպիսիներ, որոնց հարազատությունը երկբայելի է»[42]: «Կեսարացու ոչ բոլոր գործերն են հասել մեզ»[43]: Վերջին ուսումնասիրությունները նշում են, սակայն, որ «բարեբախտաբար Կեսարացու մատենագրական ժառանգությունը դարերի ընթացքում մեծ կորուստներ չի կրել»[44]:

Բարսեղ Կեսարացու մատենագրական վաստակը ամփոփված է Migne-ի հանրածանոթ և մեծածավալ հայրաբանական գործերի հրատարակության չորս հատորներում[45]:

Բարսեղ Կեսարացու գործերը թարգմանված են Դ դարից սկսած նաև լատիներենի: Նրա «գործերից՝ հին թարգմանություններ, բացի հայերենից, գոյություն ունեն նաև ասորերեն, արաբերեն, վրացերեն և դպտերեն լեզուներով» և «նորագույն թարգմանությամբ նաև ռուսերեն»[46]:

Երևանի ս. Մեսրոպ Մաշտոցի անվան ձեռագրաց Մատենադարանում միայն կան «ավելի քան երկու հարյուր հին ու նոր գրչագիր մատյաններ, մերթ էական մասով, հանձին ամբողջությամբ Կեսարացու գոր-

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1977 թվականի № Ե-ից:

[42] **Հ. Ս. Անասյան,** Հայկական մատենագիտություն, Ե—ԺԸ դդ., հատոր Բ, Երևան, 1976, էջ 1346:

[43] **Կ. Մ. Մուրադյան,** Բարսեղ Կեսարացին և նրա «Վեցօրեան» հայ մատենագրության մեջ, Երևան, 1976, էջ 55:

[44] **Johannes Quasten,** patrology, vol. III, *էջ 208։*

[45] **Migne,** Patrologia graeca, Paris, 1857—1886. T. XXIX—XXX. T. I—IV.

[46] **Հ. Ս. Անասյան,** նույնը, էջ 1346—1347:

ծերի ընդօրինակություններն են՝ կատարված տարբեր դարերում և զանազան գրչությամբ»[47]:

Ս. Բարսեղ Կեսարացու մատենագրական վաստակը սերտորեն առնչվում է նույնպես եկեղեցու ուղղափառ հավատի և Նիկիական հանգանակի պաշտպանության, արիոսականության և այլ հերետիկոսությունների դեմ մղված պայքարի հետ:

Ըստ բովանդակության կամ թեմատիկայի ու գրական ժանրի Բարսեղ Կեսարացու մատենագրական ժառանգությունը, վերջին գիտական ուսումնասիրությունների համաձայն, բաժանվում է մի քանի մասերի[48]: Հայերեն մի քանի ձեռագրերի հիշատակարանները կատարում են «թեմատիկ այլ բաժանմամբ» խմբավորումներ «Կեսարացու մատենագրական ժառանգության հայտնի մասի» վերաբերյալ[49]: Տես նաև Մատենադարանի ցուցակ Բ հատոր, էջ 1276—1277, ուր կան Կեսարացու գործերի այլ թեմատիկ բաժանումներ, ըստ հետևյալի.

Աղոթք
Թուղթք,
Կանոնք,
Հարցմունք,
Գիրք հարցողաց,
Հրաշագործութիւնք,
Ճառք,
Խրատք,
Ներբողք,
Մանրանկար,
Մեկնութիւն Վեցօրէից,
Յաղագս ձայնից,
Լուծմունք գրոց,
Վարդապետութիւն:

Հ. Ս. Անասյանն իր «Մատենագիտության» երկրորդ հատորի մեջ ներկայացնում է թեմատիկ այլ բաժանում Կեսարացու գործերի մասին[50]:

Այստեղ Կեսարացու մատենագրական վաստակը ներկայացվում է ըստ Quasten-ի ուսումնասիրության.

1. ԴԱՎԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԳՐՎԱԾՔՆԵՐ.

Կեսարացու դավանաբանական բոլոր գրվածքները ուղղված են արիոսականության դեմ: Այդ շարքից են՝

ա) **Հակաճառություն ընդդեմ Եվնոմիոսի:** Եվնոմիոսը գաղատացի էր, եպիսկոպոս և ներկայացուցիչը ծայրահեղ արիոսական մոլորության և առաջնորդը՝ «անոմեական»-արիոսամիտ մի նոր մոլորության:

Բարսեղ Կեսարացին Եվնոմիոսի դեմ գրել է երեք Հակաճառություն 363—365 թվականներին և ջախջախել նրա վտանգավոր մոլորությունը՝ պաշտպանելով Նիկիական հանգանակի ուղղափառությունը:

բ) **Յաղագս սրբոյ Հոգւոյն** (ճառ):

Գրվել է 375-ին՝ ի պաշտպանություն աստվածային երկու անձնավորությունների՝ Որդու և ս. Հոգու համագոյակից լինելուն Հայր Աստծու հետ: Սույն ճառը նույնպես ուղղված է արիոսականության և սաբելականության դեմ: Սաբելը լիբիացի էր, եպիսկոպոս, «հայրաչարչար» մոլորության պաշտպան և նույնպես ծայրահեղ արիոսական:

2. ԾԳՆԱՎՈՐՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ԳՐՎԱԾՔՆԵՐ (ascetia).

Ս. Բարսեղ Կեսարացին, որպես «արեվելյան վանականության օրենսդիր և կանոնագիր», հանգամանորեն զբաղվել է նոր տիպի վանականության հաստատման գործով: Տես այս մասին «Էջմիածին» ամսագիր, 1977, մայիս, էջ 30—31: Ascetia-ն այդ նպատակով գրված 13 ճառերից բաղկացած մի ժողովածու է:

Այս ժանրի գրվածքների մեջ կարևոր նշանակություն ունի նաև Բարսեղ Կեսարացու

ա) **Բարոյականության** (moralia) մասին գրած կանոնախումբը, որը բաղկանում է 80 կանոններից կամ բարոյա-խրատական հրահանգներից և ուսուցումներից: Յուրաքանչյուր կանոն հաստատվում է Նոր Կտակարանից կատարված համապատասխան մեջբերումներով: Թեև այս կանոնախումբը բոլոր քրիստոնյաների համար սահմանում է ընդհանուր բարոյական պարտավորություններ՝ ապրելու համար օրինակելի և տիպար կրոնական կյանքով, սակայն իրականության մեջ այն մի ազդեցիկ և զորեղ ազդարարություն է կամ խրատաբանություն՝ ճգնավորական կյանքին ի պաշտպանություն: **Այս կանոնախումբը համարվում է հնագույն և ամենակարևոր օրենսգիրքը վանականության:** Սույն օրենսգիրքը Բարսեղ Կեսարացին կազմել է Պոնտոսում, Անեսայում, Իրիս գետի ափի իր վանական առանձնության մեջ, Գրիգոր Նազիանզացու հետ միասին:

բ) **Երկու վանական կանոնախմբեր կամ կանոնադրություններ:**

Սույն կանոնախմբերից առաջինը բաղ-

[47] **Կ. Մ. Մուրադյան**, նույնը, էջ 55: Տես նաև «Ցուցակ Մաշտոցի անվան Մատենադարանի», Երևան, 1965, հատոր Ա, Բարսեղ Կեսարացի, էջ 1462—1463, հատոր Բ, 1970, էջ 1276—1277:

[48] **Quasten**, նույնը, էջ 208—236:

[49] **Կ. Մ. Մուրադյան**, նույնը, էջ 55:

[50] **Հ. Ս. Անասյան**, նույնը, էջ 1348—1383:

կանում է 55 գլուխներից: Կեսարացին վանական կյանքին նվիրված այս **ընդարձակ կանոնադրությունը** գրել է իր այցելած մենաստանների վանականների՝ իրեն ուղղած մի շարք հարցերի հիման վրա: Երկրորդը՝ **համառոտ կանոնադրությունը**, բաղկանում է 313 հոդվածներից և սահմանում է վանական կրոնական միաբանության ամենօրյա կյանքի պարտավորությունները:

Սույն կանոնադրությունները մեր ձեռագրերում անվանվում են «Հարցողաց գիրք» կամ «Հարցմունք ճգնաւորացն, պատասխանի սրբոյ Բարսղի», որովհետև բաղկանում են հարց ու պատասխաններից և կրում են «հովվական խոսակցությունների կամ զրույցների» բնույթ Կեսարացու և իր հաստատած վանքերի միաբանների միջև՝ գրի առնված սղագրության ձևով:

Կեսարացու սույն երկու կանոնախմբերը հանդիսանում են մինչև այսօր հույն վանականության հաստատուն և վավերական օրենսգիրքը: Դրանք ուժեղ ազդեցություն են գործել նաև ինչպես Արևմուտքի, այնպես էլ Արևելքի վանական կյանքի կազմակերպման վրա:

3. ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՐՎԱԾՔՆԵՐ.

Բարսեղ Կեսարացին իր մատենագրական հարուստ վաստակում լայնորեն զբաղվել է նաև անտիկ մշակույթի շրջանակներում, հեթանոսական դպրոցներում և համալսարաններում սովորող քրիստոնյա նոր սերընդի և մտավորականության դաստիարակության կարևոր հարցով: Քրիստոնյա երիտասարդությունն ու մտավորականությունը ի՞նչ մոտեցում պետք է ունենան անտիկ մշակութային արժեքների հանդեպ:

Այս հարցի ուսումնասիրությամբ երկար ժամանակ զբաղվել է Բարսեղ Կեսարացին և գրել՝ «Առ չափահասս» վերնագրով մի մեծ ճառ կամ «Խրատ երիտասարդներին, այն մասին, թե ինչպե՞ս նրանք լավագույնս պետք է օգտվեն հեթանոս գրողների գրվածքներից»: Սույն ճառի մեջ Կեսարացին բննության է առնում հեթանոս շրջանակներում դաստիարակվող քրիստոնյա ուսանողության հույն անտիկ դասական մշակույթից օգտվելու հարցը: Այդ ճառը շատ կարևոր էր եկեղեցու համար, նաև սրանով էր, որ այն ցույց է տալիս եկեղեցու հայրերի և այս գործում ս. Բարսեղ Կեսարացու կարծիքն ու մոտեցումը՝ դաստիարակության այդ մասնավոր հարցում հույն հին գրականության արժեքների մասին:

Բարսեղ Կեսարացին դաստիարակության հարցում Աստվածաշնչից հետո երկրորդ տեղը հատկացնում է հին հույն մշակույթին՝ դաստիարակչական նպատակնեռով: Հունական հին գրողների (բանաստեղծ, պատմաբան, փիլիսոփա, հռետոր) հոգևոր և մշակութային ժառանգության ուսումնասիրությունը Բարսեղ Կեսարացին արժեքավոր և թույլատրելի է համարում այն դեպքում միայն, երբ այն կատարվում է խելացի և խղճամիտ ընտրությամբ՝ դուրս ձգելով նրանից այն ամենը, ինչ որ կարող է վտանգավոր ու վնասակար լինել քրիստոնյա ուսանողության մտքի ու հոգու դաստիարակության համար: Այս խնդրում Կեսարացին մտահոգվում է ավելի քրիստոնյա ընթերցողների բարոյական դաստիարակության, քան նրանց հավատքի հարցով: Նա թելադրում է ուսանողներին հունական հին գրականությունից վերցնել միայն մեղրը, բայց խուսափել մեղրի տակ թաքնված թույնից: Ըստ ս. Բարսեղի, Կեսարիայի երիտասարդ քրիստոնյա սերունդը կարող է բարոյականության և առաքինության սքանչելի օրինակներ գտնել Հոմերոսի, Հեսիոդոսի, Սոլոնի, Եվրիպիդեսի, փիլիսոփաներ Սոկրատի, Արիստոտելի, Պլատոնի կյանքի և գրական վաստակի մեջ:

Քրիստոնյա երիտասարդությանն ուղղած Կեսարացու սույն ճառը գրվել է համոզումով, արտակարգ ջերմությամբ և համակրանքով դեպի հելլենիստական մշակույթն ու դաստիարակությունը: Նրա լայնամտությունը այդ հարցում շատ մեծ ազդեցություն է գործել եկեղեցու վերաբերմունքի վրա, հետագա դարերում դեպի դասական ավանդությունը: Կեսարացին խորապես գիտակից էր առավելությանը այն ուսմունքին, որ քրիստոնեական ճշմարտությունը կապում էր անցյալից ժառանգված մշակույթի հետ[51]:

4. ՆԵՐԲՈՂՆԵՐ ԵՎ ՔԱՐՈԶՆԵՐ.

Բարսեղ Կեսարացին իր մեծ ժամանակակիցներից տարբերվում է նրանով, որ նա չի գրել գիտականորեն որևէ մեկնություն Աստվածաշնչի գրքերի վրա: Նրա մեկնողական տաղանդն ու հմտությունը, ըստ մասնագետների, հանդես են գալիս լայն չափով նրա գրած ներբողների և քարոզների մեջ, աշխատություններ, որոնց մեջ նա լայնորեն օգտագործել է նաև հին, դասական հռետորական արվեստի բոլոր արտահայտչական միջոցները, այդ թվում հարտասանական, գրական հնարքը, փոխաբերությունը, բաղդատությունը, գեղեցկաբանությունը, պատկերների և պարալելիզմի պրիոմները, բայց այդ ձևերին նա երբեք գերի չի դարձել:

[51] Quasten, նույնը, էջ 214—215:

Ներբողների և քարոզների մեջ Բարսեղ Կեսարացին հանդես է գալիս անվերապահորեն որպես հին եկեղեցական բեմբասացության ամենապայծառ ներկայացուցիչը, որը կարողանում է հռետորական արվեստի հնարքները միացնել մտածման պարզության և արտահայտչականության հստակության հետ[52]: Այս բնագավառում Գրիգոր Նազիանզացին Բարսեղին համարում է «Աստվածաշունչի մեկնիչներուն մեջ ամենաառաջինը, իսկ Երազմուը զայն կնկատե բոլոր ժամանակներուն ամենեն նուրբ քարոզիչը»[53]: «Ամեն բանից առաջ Բարսեղը հանդիսանում է հոգիների բժիշկ, որը չի ցանկանում հաճելի լինել իր ունկընդիրներին, այլ ազդել նրանց գիտակցության ու խղճին»[54]:

ա) **Ս. Բարսեղի «Վեցօրեայք»-ը:**

Կեսարացու ներբողների մեջ առանձնահատուկ տեղ է գրավում նրա ինը ճառերից բաղկացած «Վեցօրեայք»-ը, որը ըստ Ծննդոց գրքի (Ա 1—26) Արարչագործության **վեց օրերի** պատմությունն է՝ գրված ոչ այլաբանական մեկնությամբ, ինչպես ինքը վկայում է այդ մասին:

«Վեցօրեայք»-ը գրվել է 370 թվականին, երբ հեղինակը դեռ պարզ քահանա էր: «Վեցօրեայք»-ի ինը ճառերը կամ ներբողները Կեսարացին արտասանել է մի շաբաթվա ընթացքում, հաճախ մի օրում՝ երկու քարոզ, առավոտյան և երեկոյան ժամերգության ընթացքում:

Կեսարացու «Վեցօրեայք»-ը մեծ հմբաւ է վայելել թե՛ Արևելքում և թե՛ Արևմուտքում: Հետագայում «հունական գրականության մեջ չկա մի այլ գործ, որը իր հռետորական արվեստի գեղեցկությամբ համեմատվեր «Վեցօրեայք»-ի հետ»[55]:

Սույն աշխատության մեջ Կեսարացին խոսում է Արարչագործության քրիստոնեական հասկացողությամբ մեկնության մասին՝ ի հակադրություն տիեզերքի և ստեղծագործության հին, հեթանոսական և մանիքեական բացատրությանը և ցույց է տալիս **«Արարչագործության ետին՝ Արարիչը:** Կեսարացին պայծառ գույներով և հմտությամբ նկարում է իր վարպետ գրիչով, բնության գեղեցկության երփներանգ պատկերը և բացահայտում տիեզերքի հրաշալիքները՝ բնական գիտության և փիլիսոփայության զարմանահրաշ մի ցուցահանդեսի մեջ»[56]: Բնության հրաշալիքների մասին խոսելիս Կեսարացին իր սույն ներբողի մեջ օգտագործում է Արիստոտելի, Պլատոնի և այլ հույն փիլիսոփաների որոշ արտահայտություններն ու բացատրությունները:

«Վեցօրեայք»-ի ինն երորդ ճառը նվիրվել է մարդու ստեղծմանը, որպես «սպատկեր Աստուծոյ»:

Կեսարացու «Վեցօրեայք»-ի բովանդակության և դրա հայերեն թարգմանության ժամանակի և այլ հանգամանքների և տպագրության մասին կխոսվի ստորև Կեսարացու գործերի «Հայերեն թարգմանությունները ու տպագրությունները» ենթավերնագրի ներքո:

բ) **Ներբողներ սաղմոսների վրա:**

Բարսեղ Կեսարացին 18 ներբողներ է գրել սաղմոսների վրա, որոնցից 13-ը համարվում են վավերական (1, 7, 14, 28, 29, 32, 33, 44, 45, 48, 59, 61, 114): Սույն ներբողները ավելի բարոյա-խրատական, դաստիարակչական-ուսուցողական (դիդակտիկ) բնույթ ունեն, քան զուտ մեկնողական-աստվածաբանական: «Մարգարեները մի բան են ուսուցում,—ասում է Կեսարացին,—պատմական գրքերը՝ մի այլ բան, մինչ Օրենքի մեջ սովորեցվում է տարբեր բան... Սաղմոսաց գիրքը միայն իրար է բերում ինչ որ օգտակար է այդ բոլորի մեջ: Սաղմոսաց գիրքը կանխատեսում է ապագան, վկայակոչում է անցյալը, սահմանում է կյանքի օրենքները և մեզ սովորեցնում՝ մեր պարտականությունները»[57]: Սույն աշխատության մեջ, ըստ պատմական վկայությունների, Կեսարացին լայնորեն օգտագործել է Եվսեբիոս Կեսարացու «Մեկնութիւն սաղմոսաց» աշխատությունը:

գ) **Մեկնություն Եսայի մարգարեի գրքի վրա:**

Կեսարացին 374—375 թվականներին Նեո-Կեսարիայում մի շարք քարոզներ և դասախոսություններ է կարդացել Եսայի մարգարեի գրքի Ա 1—16 համարների վրա, թեմի եպիսկոպոսական մի խորհրդակցությունում: Սույն գրվածքը նույնպես կրում է քարոզչական, քան մեկնողական բնույթ:

դ) **Այլ քարոզներ:**

Կեսարացու գրչին են պատկանում նաև 23 բազմազան բնույթի այլ քարոզներ, որոնք ավելի շատ հովվական թղթերի բնույթ են կրում: Քարոզների կենտրոնական թեման հանուն քրիստոնեական հա-

---

[52] Նույնը, էջ 216—217:

[53] **Թորգոմ պատրիարք Գուշակյան,** Սուրբք և տոնք, Երուսաղեմ, 1939, էջ 69:

[54] **Quasten,** նույնը, էջ 216:

[55] Նույնը, էջ 217:

[56] Նույնը:

[57] Նույնը, էջ 218:

վատքի նահատակվածների վարքագրությունն է: Սույն քարոզները շոշափում են նաև քրիստոնեական առաքինությունների և պարտականությունների հարցերը, խոսում պահեցողության, աշխատասիրության, հարստության գործադրության արդար իրավունքի, եղբայրասիրության, աղքատասիրության, ինչպես նաև նախանձի, ագահության, վաշխառության, արբեցողության, բարկության և այլ հասարակական վատ արարքների և չարիքների մասին: Այս քարոզները միաժամանակ թանկագին վկայություններ և փաստաթղթեր են ժամանակի բարքերի, սովորույթների, կենցաղավարության, բարոյականության մասին:

5. ՆԱՄԱԿՆԵՐ.

Ս. Բարսեղ Կեսարացին թողել է նաև նամակագրական հարուստ և արժեքավոր ժառանգություն, որը ցույց է տալիս նրա բազմակողմանի, շնորհալի դաստիարակության գեղեցկությունն ու գրական ճաշակի հմտությունը, նրբությունը, քան նրա ներբողները: Կեսարացու նամակները իրենց ոճով և արտահայտչական ձևերի բազմազանությամբ և գեղեցկությամբ համարվում են դասական նմուշները հույն եկեղեցական մատենագրության և առհասարակ հույն դպրության: Բարսեղ Կեսարացին նամակագրական այս ժանրի և արվեստի անգերազանցելի վարպետն է[58]:

Կեսարացուն վերագրվում են ավելի քան 365 նամակներ, որոնք բաժանվում են երեք մասերի.

1. 1—46 նամակներ, որոնք գրվել են 357—370 թվականներին, Կեսարացու եպիսկոպոս ձեռնադրվելուց առաջ:

2. 47—291 նամակներ, որոնք գրվել են 370—378 թվականներին, նրա եպիսկոպոսության շրջանում:

3. 291—365 նամակներ, որոնց գրության թվականները որոշել դժվար է, քանի որ այդ մասին հստակ նշումներ չկան նրա մատենագրական վաստակում:

Կեսարացու նամականին միաժամանակ անգնահատելի, արժեքավոր ու վավերական աղբյուր է հանդիսանում Դ դարի Արևելքում Եկեղեցու, Կապադովկիայի Ս. թռուի գործունեության, Եկեղեցու և պետության հարաբերությունների պատմության համար: Այդ նամակները լավագույն և ստուգագույն վկայությունն են Կեսարացու կյանքի, ժամանակի, եկեղեցական ու հովվական գործունեության, նրա ազդեցության, նրա մատենագրական վաստակի և մանավանդ նրա մեծ անհատականության և նկարագրի ուսումնասիրության համար:

Բարսեղյան նամականին ըստ բովանդակության բաժանվում է հետևյալ մասերի.

1. Բարեկամական նամակներ:

Կեսարացին մեծ բարեկամությամբ կապված էր իր ժամանակի հոգևորական, գրական անվանի անձնավորությունների հետ: Նամակագրությամբ նրանց հետ գաղափարների, մտքերի աշխույժ փոխանակություն էր կատարում, զանազան հետաքրքիր և այժմեական հարցերի շուրջ սիրում էր նամակներ գրել և ստանալ նրանցից:

2. Հանձնարարական նամակներ:

Բարսեղ Կեսարացին միշտ պատրաստ էր օգնելու բոլորին: Նա մեծ թվով նամակներ է գրել հեթանոս բարձրաստիճան անձնավորությունների և մեծահարուստ մարդկանց, որ պաշտպանեն թույլին և աղքատին, չճնշեն ու չարհամարհեն դրժբախտներին, չոտնահարեն այրի կնոջ և որբի արդար իրավունքները: «Ես հիացել եմ եպիսկոպոսական այս նամակների ոճի գեղեցկության վրա, և Բարսեղն է, որ միշտ տանում է հաղթանակը», վկայում էին նրա հեթանոս նամակագիրները[59]: Այս նամակները յուրահատուկ մի հանդիսարան էին «քրիստոնյա և հելլենիստական աշխարհի ներկայացուցիչների հանդիպմանը»[60]:

3. Մխիթարության և սփոփանքի նամակներ:

Կեսարացու սույն ժանրի նամակները ուղղված են, համակրանքի, սփոփանքի և մխիթարական ամենաջերմ զգացումներով, եպիսկոպոսներին, քահանաներին, վանականներին, որոնք դժբախտությունն են ունեցել կորցնելու իրենց ծնողներին, ամուսիններին և հարազատներին, պետական և հերետիկոսական հալածանքների և նահատակությունների ճանապարհին, հանուն քրիստոնեական հավատի հանդեպ իրենց ունեցած հավատարմության՝ ի պայծառություն և համբարձումն եկեղեցու:

4. Կանոնական նամակներ:

Բարսեղ Կեսարացին բազում կանոնական նամակներ է գրել մանավանդ իր միտրոպոլիտ ընտրությունից հետո եկեղեցու ծոցում վերահաստատելու համար կարգն ու կանոնը, որոնք խախտվել էին պետական հալածանքների և հերետիկոսությունների դեմ ուղղափառ եկեղեցու մղած պայքարի հետևանքով:

Սույն նամակները ուղղված են եղել և՛ Կապադովկիայի թեմի, և՛ Արևելքի մի

[58] Նույնը, էջ 220—221:

[59] Նույնը, էջ 222:

[60] Նույնը, էջ 223:

շարք եկեղեցիների եպիսկոպոսներին և վանական հաստատությունների ղեկավարներին: Բարսեղ Կեսարացու սույն նամակները կանոնական իրավունքի հեղինակություն են ունեցել ժամանակին ողջ Արևելքի եկեղեցիների և այժմ ունեն հույն օրթոդոքս եկեղեցու համար:

5. **Բարոյա-խրատական, վանական բնույթի նամակներ:**

Բարսեղ Կեսարացու մեծագույն մտահոգությունն է եղել բարեպաշտության, բարոյականության, կարգապահության և վանականության ոգու բարձրացումը եկեղեցու ծոցում և քրիստոնյա համայնքների մեջ, նաև աշխարհական մարդկանց շրջանակներում:

Սույն նամակների մեջ Բարսեղ Կեսարացին, որպես եկեղեցու մեծ հայր և վարդապետ, հորդորում է եպիսկոպոսներին, քահանաներին և վանականներին՝ պատվով, խղճի մտոք և գիտակցությամբ կատարել իրենց վրա դրված եկեղեցական ու հոգևոր պարտականությունները, և նշում է այդ ցանկալի արդյունքներին հասնելու միջոցներն ու ճանապարհները: Կեսարացին մեծ ոգևորությամբ շեշտում է մանավանդ վանական կյանքի գեղեցկությունն ու աստվածահաճո նկարագիրը՝ ի շահ եկեղեցու պայծառության:

6. **Դավանաբանական բնույթի նամակներ:**

Բարսեղ Կեսարացու դավանաբանական բնույթ կրող նամակները այնքան ընդարձակ են և գրված՝ հմտությամբ, ձեռնհասությամբ, հակաճառական ոգով և մեթոդով, որ դրանք համարվում են դավանաբանական ուսումնասիրություններ կամ ճառեր: Այդ նամակների մեծագույն մասը, որն ուղղված է ս. Գրիգոր Նյուսացուն՝ իր եղբորը, նվիրված է ամենասուրբ Երրորդության վարդապետության բացատրությանը, Նիկիական հանգանակի պաշտպանությանը, ընդդեմ Արիոսի, Եվնոմիոսի, Սաբելի, Ապողինարի և մյուս հերետիկոսների մոլորությունների հերքմանը:

7. **Միսագիտական նամակներ:**

Բարսեղ Կեսարացու նամակների մեջ կարևոր տեղ են գրավում եկեղեցական միսագիտության պատմության համար նրա գրած մի շարք նամակները:

Ս. Բարսեղ Կեսարացին, ըստ ս. Գրիգոր Նազիանզացու «Դամբանական»-ի վկայության, համարվում է Կապադովկիայի եկեղեցական միսագիտության մեծ բարեկարգիչը: Նա եկեղեցում երգեցողության նոր մեթոդ մտցրեց: Հանրածանոթ է հնուց ի վեր եկեղեցում «Ս. Բարսեղի պատարագամատույց»-ը, որը մինչև այժմ գործածվում է բյուզանդական եկեղեցիներում, Մեծ պահոց կիրակիներում (բացի Ծաղկազարդի կիրակիից), Ավագ հինգշաբթի, Զատկի նրագալույցի, Ծննդյան նրագալույցի, Աստվածահայտնության նրագալույցի, հունվարի 1-ին, ս. Բարսեղի տոնին: Այլ օրերում բյուզանդական եկեղեցին գործածում է ս. Հովհան Ոսկեբերանի համառոտ պատարագամատույցը[61]:

Բարսեղ Կեսարացին, որպես եկեղեցու մեծ հայր և մեծ մարդասեր, լայն թղթակցություն է ունեցել իր ժամանակին Արևելքի և Արևմուտքի եկեղեցական ու քաղաքական մեծ գործիչների հետ:

Կեսարացու այս բնույթի նամակները համարվում են ամենավավերական և առաջնակարգ աղբյուրներն ու փաստաթղթերը 370—380 թվականներին Եկեղեցու և պետության, Արևելքի և Արևմուտքի հարաբերությունների, Եկեղեցու և կայսրության պատմության, եկեղեցու՝ հերետիկոսության դեմ մղած պայքարի տարեգրության համար: Արժեքավոր են ս. Բարսեղի և Հուլիանոս Ուրացող կայսրի միջև փոխանակված նամակները (361—363):

Կեսարացին նշում է, որ ինքը նամակագրական կանոնավոր կապ է պահել Պիսիդիայի, Լակոնիայի, Իսավրայի, Փյունիկեի, Հայաստանի, Մակեդոնիայի, Աբսիայի, Իլլյարիայի, Գաղղիայի, Իսպանիայի, Իտալիայի, Սիկիլիայի, Աֆրիկայի, Եգիպտոսի, Սիրիայի եկեղեցիների հետ[62]:

Ս. Բարսեղ Կեսարացու գործերի հայերեն թարգմանության և տպագրության մասին կխոսվի հաջորդ համարում:

(Շարունակելի)

---

[61] Նույնը, էջ 226—227:

[62] Նույնը, էջ 220—226:

ՍԱՄՎԵԼ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻՆ

Ո՞վ Մայր տաճար, դու հայության օրորան,
Պանդուխտ ու մոտ հոգիների հանգրվան.
Փոթորիկներն անվերջ անցան քո գլխով,
Սակայն հոգիդ արևոտ է, անխռով:

Դարերի մեջ՝ դարեր ապրող սրտի բոց,
Սուրբ հավատի դու անխորտակ մեր ամրոց:

Ողջ աշխարհի դու հայության հոգու լույս,
Բյուր սրտեր են այսօր քեզ հետ կապում
հույս,

Չի խավարի փառքդ երբեք աշխարհում,
Լեռներիդ պես հավերժ ես դու, անկոտրում:

Դարերի մեջ՝ դարեր ապրող սրտի բոց,
Սուրբ հավատի դու անխորտակ մեր ամրոց:

Հավատացյալ հոգիների լույս վարար,
Անմահության ճամփաներով մեզ տարար.
Խաղաղության, դու բարության հոգու տուն,
Դու հայ ազգի հավերժության ոսկե սյուն:

Դարերի մեջ՝ դարեր ապրող սրտի բոց,
Սուրբ հավատի դու անխորտակ մեր ամրոց:

Մայր Տաճարն

Խոսք եւ երաժշտութիւն
Սպարեւ Գեւորգեանի

Ով մայր տաճար դու շաղ-յու-
թեան օ-ր-ո-
ր-ան պաղն-դուխտ ու մոտ
շո-գի-նե-ր-ի շան-
գըր-վան փո-թո-ր-ուկ-
ներն կն-վերք կն-ծկան
քո գըլ-խով սկ-կայն շո-
գիդ կ-ր-ե-վոտ ֆ
կն-խը-ռով դպ-ր-ե-ր-ի մեջ
դպ-ր-ե-ր կող-ր-ոց սըր-տի բոց
սուրբ շաղ-վաղ-տի դու կն-խոր-
տակ մեր կամ-ր-ոց:



ԷԿՈՒՄԵՆԻԿ ԿՅԱՆՔ

ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Սույն թվականի ապրիլի 18—27-ը Տաիլանդի Չիանգ Մայ քաղաքում Եկեղեցիների համաշխարհային խորհրդի «Դիալոգ այլ կրոնների և գաղափարախոսությունների պատկանող մարդկանց հետ» բաժնի նախաձեռնությամբ տեղի է ունեցել աստվածաբանական մի խորհրդակցություն: Խորհրդակցության նպատակն է եղել, 1975 թվականի նոյեմբերին Նայրոբիում գումարված ԵՀԽ-ի 5-րդ համաժողովում ընդունված մեկ որոշման համաձայն, մշակել տարբեր կրոնների և գաղափարախոսությունների ներկայացուցիչների հետ կազմակերպվելիք դիալոգների զարգացման ծրագիրը 5—6 տարիների համար և ճշտել այդ ուղղությամբ տարվելիք աշխատանքի հիմքերը:

Սույն հանդիպմանը մասնակցել են հիսունութ պաշտոնական ներկայացուցիչներ՝ բսան տարբեր երկրներից, յոթ պատասխանատու աշխատակիցներ՝ ԵՀԽ-ի Ժենևի կենտրոնից, այդ թվում՝ դոկտ. Սամարթան, դոկտ. Լուկաս Վիշերը և դոկտ. Թեյլորը, ինչպես նաև տասնմեկ հյուր-դիտորդներ:

Խորհրդակցական այս հանդիպմանը Մայր Աթոռ ս. Էջմիածինը և Հայաստանյայց առաքելական եկեղեցին ներկայացրել է Գերագույն հոգևոր խորհրդի անդամ և Երուսաղեմի հայոց պատրիարքական Աթոռի դիվանապետ տ. Շահ արքեպիսկոպոս Աճեմյանը:

Չիանգ Մայ քաղաքի հանդիպմանը մասնակցել են նաև ԵՀԽ-ի անդամ բազմաթիվ եկեղեցիներ ներկայացնող աստվածաբաններ, սոցիոլոգներ և բաղդատական կրոնների դասախոսներ:

Խորհրդակցության նշանաբանն է եղել՝ «Դիալոգ համայնքների միջև»: Հանդիպման աշխատանքները տարվել են երկու ուղղությամբ՝ տեսական և գործնական: Տեսական աշխատանքներում քննարկվել են «Դիալոգ» և «Համայնք» հասկացությունները այսօրվա աշխարհի զանազան իրադրությունների առաջացրած հարցերի լույսի տակ: Այս առիթով շեշտվել է, որ «միատարր համայնքները հետզհետե պակասում են, և համայնքային կյանքը, մանավանդ մեծ քաղաքներում, հատկանշվում է իր այլազանությամբ: Հասարակությունն այս քաղաքներում բաղկացած է կրոնական, մշակութային, գաղափարախոսական տարբեր դաստիարակություն ունեցող մարդկանցից, որոնք համերաշխ համայնքներ կազմելու հարկադրանքի տակ ճանապարհներ են որոնում միմյանց հասկանալու և մեկ ամբողջական համայնք կազմելու»:

Ուսումնասիրված հարցերի մեջ ամենայն կարևորությամբ քննության են առնվել

կրոն, մշակույթ, համայնք հասկացությունները և ինքնության գիտակցությունը, մանավանդ այն մարդկանց մեջ, որոնք զանազան պատճառներով ստիպված են եղել տեղափոխվել իրենց բնիկ միջավայրից և որոնք փորձում են իրենց նոր միջավայրում կղզիացած չմնալ, այլ պատկանել տվյալ միջավայրի համայնքին՝ առանց սակայն կորցնելու իրենց ազգային ինքնությունը:

Խորհրդակցության ընթացքում Ասիայի և Աֆրիկայի ներկայացուցիչները առանձին կարևորությամբ շեշտել են անհրաժեշտությունը եկեղեցու ազգային առաքելության, մանավանդ տվյալ եկեղեցուն պատկանող ժողովրդի մշակութային հարստության պահպանման ճանապարհով:

Տեսական երկրորդ հարցը, որին հատուկ ուշադրություն է ընծայվել, դիալոգի և միսիոնարության հարաբերության հարցն է եղել: Արևմտյան եկեղեցիների մի շարք ներկայացուցիչների կողմից արտահայտվել է այն տեսակետը, թե եկեղեցու հիմնական առաքելությունը ոչ թե այլ կրոնների և գաղափարախոսությունների հետ գոյակցություն հաստատելն է, այլ Ավետարանի տարածումը և ժողովուրդների քրիստոնեացումը: Ըստ նրանց, դիալոգը չի կարող լինել ավետարանչական մի միջոց՝ վկայելու քրիստոնեական ճշմարտությունը:

Այս հարցի շուրջ տեղի է ունեցել մտքերի լայն փոխանակություն, և բանաձևվել են եզրակացություններ:

Խորհրդակցությունը զբաղվել է նաև սինկրետիզմի հարցով: Նկատի է առնվել հավանական այն վտանգը, որ ներկայացնում է ուրիշ կրոնների հետ դիալոգի մեջ մտնելը, մի հանգամանք, որի հետևանքով կարող է ստեղծվել ընտրողական մի նոր կրոն այլ կրոնների սրբազան գրականության ընտրելագույն գաղափարների օգտագործումով:

Այնուհետև խորհրդակցությունում քննության են առնվել մի շարք գործնական հարցեր: Ժողովականները բաժանվել են աշխատանքային չորս խմբերի, որտեղ ուսումնասիրության առարկա են դարձել հետևյալ հարցերը.

ա. Քրիստոնյա-հրեա-իսլամ հարաբերություններ.

բ. Քրիստոնյա-հինդու-բուդդայական հարաբերություններ.

գ. Քրիստոնեական մոտեցում հին կրոնների և մշակույթների.

դ. Դիալոգի զարգացում գաղափարախոսությունների մասին:

Վերոհիշյալ չորս խմբերում տարված աշխատանքի հիմնական նպատակն է եղել այս չորս բնույթի դիալոգների միջոցով «մարդկանց միջև հաստատել ավելի խոր փոխըմբռնում, սոցիալական խաղաղ կյանք՝ հիմնված փոխադարձ հարգանքի և քրիստոնեական սիրո սկզբունքների վրա»:

Խորհրդակցության ամբողջ ընթացքում շեշտվել է քրիստոնյաների միության անհրաժեշտությունը՝ է՛լ ավելի արդյունավետ դարձնելու համար դիալոգն այլ կրոնների հետ և տալու առավել ամբողջական վկայությունը քրիստոնեական ճշմարտության:

Տ. Շահե արքեպիսկոպոսն իր գործուն մասնակցությունն է բերել սույն խորհրդակցությանը և ի մասնավորի «քրիստոնյա-հրեա-իսլամ հարաբերություններ» խմբի աշխատանքներին:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ—Հուսադրող հեռանկարներ 3
Մեծի Տանն Կիլիկիո Աթոռի աթոռակից-կաթողիկոսի ընտրություն (Այս առթիվ Մայր Աթոռի և Անթիլիասի Աթոռի միջև փոխանակված պաշտոնական գրություններ) 10
Վեհափառ Հայրապետի այցելությունը Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի մեծամարգ նախագահ տիար Ֆ. Տ. Սարգսյանին 21
Հաղորդագրություն 22
Կրոնական գործիչների համաշխարհային համաժողով՝ նվիրված կայուն խաղաղության, զինաթափման և ժողովուրդների միջև արդար հարաբերությունների հաստատմանը 24
Ամենայն Հայոց Հայրապետը Մոսկվայում 32
Հաղորդագրություն 34
Հոր և որդու դատապարտելի արարքը 36
Ծանուցում 37
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ—Եկեղեցական բեմ. լուրեր 38
Քահանայական ձեռնադրություն Մայր տաճարում 41
Ամավերջի հանդիսություն հոգևոր ճեմարանում 45
ՇԱՀԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՃԵՄՅԱՆ—Փրկության հղացքը—ուղղափառ մոտեցումով 48
Ա. ՀԱՏԻՏՅԱՆ—Սուրբ Բարսեղ Հայրապետ Կեսարացի 54
ՍԱՄՎԵԼ ԳԵՎՈՐԳՅԱՆ—Մայր տաճարին (Խոսք և երաժշտություն) . . . 60
ԷԿՈՒՄԵՆԻԿ ԿՅԱՆՔ—Խորհրդակցական հանդիպում 62

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine. Arménie. URSS

Հանձնված է արտադրության 16.6.1977 թ.: Ստորագրված է տպագրության 26.7.1977 թ.:
Տպագրական 4 մամուլ + 1 ներդիր, թուղթ 60×84 1/8, տպաքանակ 464:

Մայր Աթոռ ս. Էջմիածնի տպարան, 1977 թ.